



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**CENTER FOR THE STUDY  
OF NATIONALITIES PROBLEM AND  
GENOCIDE**

**SERIES  
“THE UNCEASING TOLL”**

**Volume 2**

**THE ARMENIAN GENOCIDE  
CAUSES AND LESSONS**

**Dedicated to  
the 80th Anniversary  
of the Armenian Genocide**

**YEREVAN - 1995**

**ЦЕНТР ИЗУЧЕНИЯ  
НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА И ГЕНОЦИДА**

**СЕРИЯ  
“НЕСМОЛКАЕМАЯ КОЛОКОЛЬНЯ”**

**Выпуск 2**

**ГЕНОЦИД АРМЯН  
ПРИЧИНЫ И УРОКИ**

Посвящается  
80-летию  
Геноцида Армян

**ЕРЕВАН - 1995**

**ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ  
ԵՎ ԳԵՆՈՑԻԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ**

**“ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱՑՈՒՆ”  
ՄԱՏԵՎԱԾԱՐ**

**Մաս 2**

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՏճԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ**

Նվիրվում է  
Հայոց Ցեղասպանության  
80-ամյակին

**ԵՐԵՎԱՆ - 1995**

**Գրախոսներ՝**

Երևանի պետական համալսարանի  
հայոց պատմության,  
համաշխարհային պատմության,  
միջազգային հարաբերությունների  
պատմության և տեսության ամբիոններ

ՑՈՒՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ (1918 –1990 թթ.)

### ԵՊՐ ԳՐԱԴԱՐԱՆ



SU0214393

Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման Կենտրոնը  
“Ազնակի զանգակառում” մասնաշարուվ ընթերցողի ուշադրությանն է Աերկայացնում հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող գիտական ուսումնասիրությունների շարքի երկրորդ ժողովածուն: Ձետեղված հոդվածները ընթերցվել են Կենտրոնի կազմակերպած գիտաժողովում: Հոդվածներում բնարկվում են մակերպած գիտաժողովում: Հոդվածներում բնարկվում են մակերպած գիտաժողովում:

Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

© Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման Կենտրոն, 1995թ.

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը նոր իրավիճակ ստեղծեց նախկին կայսրության ազգային ծայրամասերում: Ավելի բուռն գործունեություն ծավալեցին տեղի կուսակցությունները: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր նպատակներն ու ծրագրերը: Բացառություն չէր նաև դեռևս 1911թ. ստեղծված ադրբեզանական Մուսավաթ կուսակցությունը, որը 1917 թ. ապրիլին Բաքվում կայացած Կովկասի մահմեդականների առաջին կոնգրեսում պահանջեց «Ռուսաստանի կազմակերպությունը դնել հողային-դաշնակցային հիման վրա և ստեղծել Ռուսաստանի մահմեդականությունը Աերկայացնոյ կենտրոնական օրենսդիր մարմին»:

1917 թ. հունիս-օգոստոս ամիսներին Բաքվում տեղի ունեցած երկրորդ և երրորդ կոնգրեսներն ընդունեցին էլ ավելի խիստ պանթուրքիստական որոշումներ: Դա պատահական չէր, քանզի Անդրկովկասում պանթուրքիզմի շատագովը և անմիջական իրականացնողը մուսավաթն էր, որի հետ թուրքական կառավարող շրջանները և քաղաքական գործիչները մեծ հույսեր էին կապում: Անդրկովկասի թաթարներով բնակեցված տարածքները կարևոր հենարան էին իրենց պաշտոնական գաղափարախոսության և քաղաքականության տարածման համար:

Ժամանակին պանթուրքիզմի հիմնադիրներից և գաղափարախոսներից Զիա-Գյոզ-Ալիխը գրում էր, որ Թուր-

<sup>1</sup> Զարևանյ, Միացյալ անկախ Թուրքիա, Երևան, 1993, էջ 100-101:

Ժամանակին պանթուրիզմի հիմնադիրներից և գաղափարախոսներից Զիա-Գյոր-Ալիքը գրում էր, որ Թուրքական Աղբեջանը պետք է քիան, Աղբեջանը և Պարսկական Աղբեջանը պետք է քառակի վաղվա Օղուզիստանը: Նրա կարծիքով դա պանթուրիզմի «մինիմում ծրագիրն է»:

Մուսավաթականների ախորժակը էլ ավելի գրգուեց, երբ թուրքական զորքերը, խախտելով Երզնկայի զինադադարը, սկսեցին իրենց առաջխաղացումը Սրբամուշան Հայատանում (գրավեցին Երզնկան, Մամախաթունը, Սարիդաշը, Կարսը, ընդհուպ մոտեցան Անդրկովկասի սահմաններին):

Մուսավաթական, խանական, բնկական ուժերը փակեցին Բաքու-Թիֆլիս երկաթուղին կտրելով կապը Մուսատանի հետ: Այսուհետև դադարեցվեց երթևեկությունը Բաքու-Դրոզենի երկաթուղով: Աղբեջանական զինված ուժերը քայլայիշ աշխատանք էին կատարում նաև թիկունքում ամեն կերա նպաստավոր դարձնելով իրենց «ազգակից եղբայրների» թուրքերի մուտքը Անդրկովկաս: Սեյմի մուսավաթական պատգամավորներն էլ իրենց տեղերում էին լայն քարոզչություն տանում հօգուտ Թուրքայի:

Աղբեջանական ազգայնականները հնարավոր էին համարում Թուրքիայի միջոցով մեծ թուրքական պետության դաշտում, որը պիտի ընդգրկեր Միջերկրական ու Անյան ստեղծումը, որը պիտի ընդգրկեր Միջերկրական շրջանները ու Թուրքությունի ափերի ափերից մինչև Անդրկասպյան շրջանները ու Թուրքությունները: Լայն գործունեություն էր ծավալում նաև մահմետեստան: Լայն գործունեություն էր ծավալում նաև համարելով խալիֆների ժառանգորդը, ուստի նաև ամբողջ մահմետական աշխարհի հոգևոր առաջնորդը, փորձում էր ավելի կազմակերպված բնույթ տալ հակաքրիստոնեական պայքարին:

Մուսավաթականները քայլայիշ աշխատանք էին ձեռնարկում Անդրկովկասյան Սեյմում: Այդ գործունեությունը ավելի շեշտակի զգացվեց Տրավիզոնի և Բաքումի բանակցությունների ժամանակ: Այդ քաղաքականությունը ավելի բարդացեց երկրամասի պաշտպանությունը հարձակվող թուրքական բանակներից:

Անդրկովկասյան դեմոկրատական դաշնակցային հանրապետության հոչակումից հետո թաթար ազգայնականները որ այլևս չէին թաքցնում իրենց հեռագնա նապատակները: Պանթուրիզմի կատաղի պաշտպաններից մեկը՝ մուսա-

վաթական Ռասուլ-Զաղեն հայտարարում էր, որ Կասահց ծովով պետք է հանդիսանա իրենց «մերքին լիճը»:

1918թ. մայիսի 26-ին Վրաց ազգային խորհրդությունը հոչակեց Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը նոյն քայլին դիմեցին մուսավաթականները: Նրանք նախկին ցարական Ռուսաստանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների տարածքը հոչակեցին Աղբեջան պետություն, որը նման անվամբ երբեք գոյություն չէր ունեցել Եվպած տարածքում:

Պետության անվան ընտրությունը պատահական չէր և հետապնդում էր քաղաքական ու ուսումնական բնուագնա ապատակները: Այն մուսավաթականներին առաջարկել էր այսպես կոչված Կովկասյան իպամական բանակի հրամանատար Նորի փաշան, որպեսզի կովկասյան բաթարերն իրենց իրավունքները ներկայացնեն նաև Աստրապատականի կամ Պարսկական Աղբեջանի նկատմամբ:

Նորաստեղծ պետության մայրաքաղաքը ժամանակավորապես դարձավ Գանձակը, քանի 1917թ. նոյեմբերի 2-ին Բաքվում հաստատվել էր խորհրդային իշխանություն: Աղբեջանում իշխանության գլուխ անցավ Մուսավաթը, ընտրվեց կառավարություն Ֆ. Խան-Խոյսկու նախագահությամբ:

Այն օրերին, երբ Անդրկովկասյան Սեյմը կանգնած էր լուծարման առաջ, Հայկական կորպուսի ուժերը և հայ աշխարհազորայինները կենաց ու մահու կոփեներ էին մոռն Հայաստան Անդրխուժած թուրքական բանակների դեմ: Վերջիններս փորձում էին մի քանի ուղղություններով շարժվել դեպի Թիֆլիս, Գանձակ և Բաքու իրականացնելու իրենց կաղեմի ծրագրերն ու նվաճել Անդրկովկասը, սրի քաշել նաև ցեղասպանությունից փրկված արևմտահայության բեկորներին և արևելահայությանը: Սակայն հայ ժողովուրդը Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաբիլիսայում պարտության մատնելով թուրքական զորքերին, նվաճեց իր ապրելու իրավունքը և հայտարարեց նոր հայկական պետության ստեղծման մասին: 1918թ. հունիսի 4-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց և չիրաժարվեց իր պանթուրիստական ծրագրերից:

1918թ. օգոստոսի 31-ին Խալիլ փաշան Երևանում ընդունելության ժամանակ հայտարարեց, որ թուրքերի բարձրագույն նպատակը վերամիավորվելն է մայր հայրենիքի՝

<sup>1</sup> Зареванд. Турция и пантуранизм, Париж, 1930. с. 92.

<sup>2</sup> Տես նոյն տեղում:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ՊԿՊԱ/ Փ.121, գ.1, գ.33, թ.17):

Թուրանի հետ, ուստի և նրանք ձգտում են վերացնել իրենց ճանապարհին առաջացած խոշնոտները:

Թուրքերը նաև նպատակ էին հետապնդում թուրքամետ պետություն ստեղծել Կովկասում: Մուստաֆա Քենալը գործ է, որ Էնվերը ցանկանում էր Ադրբեյչանի, Դաշտանի և Հայաստանի հիման վրա ստեղծել իր նոր պետությունը և այդ գործում նրան պետք է օգներ իր եղբայրը՝ Նուրի փաշան:<sup>1</sup>

Բարումի պայմանագիրը լայն հնարավորություն ընձեռեց թուրքական զորքերին գրեթե անարգել շարժվել դեպի նորաստեղծ Ադրբեյչան, չնայած որ թուրքական կանոնավոր գորքերի առաջապահ ջոկատները մայիսի վերջերին արդեն հասել էին Գանձակ, ուր ժամանել էր նաև Նուրի փաշան: Թուրքական զորքերը մուտք Ադրբեյչան քաջալերեց թաթարներին, որոնք սկսեցին հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա, սրի քաշել հայ բանվորներ, որոնք աշխատում էին Գետարեկի պենահանքերում, մորթվեցին հարեւան գյուղերի թաթարների կողմից: Փակվեց Գետարեկ-Շամխոր ճանապարհը: Տեղական բեկերի անմիջական մասնակցությամբ թաթարական ջոկատները և խածամուժը սկսեցին հարձակումներ գործել Շամխորի հայկական գյուղերի վրա կոտորածներ սարքելու և թալանի նպատակով: Զարդարութի, Բանգարենդի, Բարսումի, Գառնակերի, Զագիրի, Սալերի և մյուս փոքր գյուղերի ազգաբնակչությունը ինքնապաշտպանության համար հիմնեց գենքի: Նրանք ստեղծեցին 500 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատ, որն անվերջ շրջելով հայկական գյուղերում, կանխում էր թշնամու անակնալ հարձակումները: Թաթարներին շնչառողվեց տեղահան անել և կոտորել տեղի հայ ազգաբնակչությանը: Եթե Նուրի փաշան ժամանեց Զեգամ գյուղը, տեղի թաթարները առաջարկեցին գրավել հայկական գյուղերը: Հայ ինքնապաշտպանության դեկավարները կանչվեցին Զեգամ, սակայն որոշ ժամանակ անց ազատ արձակվեցին և հետ վերադառն:

Խան-Խոյսկու կառավարությունը ոչ միայն չէր կանխում հայերի կոտորածները, այլև ինքն էր ծրագրում ու ղեկավարում զորքի և թաթարական խուժանի գործողությունները: Անելանելի վիճակում էր գտնվում Գանձակի և հարեւան հայկական բնակավայրերի հայ բնակչությունը: Թուրքերի Գանձակ ժամանելուց հետո վիճակը ավելի ծանրացավ, քանզի վերջիններս միանալով տեղական ուժերին՝

<sup>1</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, գ.1, գ.619, թ.47-48:

<sup>2</sup> M. Kemal, Путь новой Турции, т. III, Москва, 1934, с. 265.

8

թալանի նպատակով կազմակերպում էին շարդեր: Գանձակի հայկական թաղամասի բնակիչները գտնվում էին կազմակերպված հարձակման և կոտորածի սպառնալիքի տակ: Առանձին հայ մարդկանց սպանությունները, խանութների և տների թալանը դարձել էին առօրյա սովորական երևույթ:

Թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան հրամայում է շրջապատել հայկական թաղամասը և զինաթափել բոլոր հայերին: «Հայերին գրավոր զգուշացում արվեց, -գրում է Ռուուշու բեկը, - անհապաղ հավաքել զենքերը և հանձնել թուրքերին, հակառակ դեպքում տեղին ու տեղը կգննապահարվեին նրանք, ում մոտ կհայտնաբերվեր գենքը»: Նմանատիպ առաջարկով Վրաստանում Հայաստանի Հանրապետության հավատարմատարին է դիմում Ադրբեյչանի դիվանագիրական ներկայացուցիչը:<sup>2</sup>

Հայության զինաթափումը մի նպատակ էր հետապնդում, զրկել նրանց ինքնապաշտպանության հնարավորությունի և ավելի ոյնուհետ դարձնել նրանց կոտորածը: Արխիվային հյութերը փաստում են, որ հայ ազգաբնակչությունը, գիտակցելով իր գլխին կախված վտանգը, չի հանձնում զենքը: Հայկական թաղամասերը ենթարկվում են հարձակման: Այդ է վկայում մարտերին մասնակցած մի թուրք սպա, որը գրում է՝ «Այսօրվա մարտերում մեր կորուստները կազմեցին 13 սպանված և 6 վիրավոր, ապանվածների թվում էր նաև մեկ սպա»: Իսլամական բանակի հրամանատարի հրամանով հայկական թաղամասերը ենթարկվեցին հետակոռնության: Ռազմական հաղորդագրություններից մենք տեղեկանում ենք, թե հեծյալ գնդի հրամանատարը որքան փամփուշտ և արկ է օգտագործել հայերի դեմ՝ հրամանը կատարելու համար: 1918թ. հունիսի 15-ից իսլամական բանակի հրամանատարությունը սկսեց իր ուզմական գործողությունները Բաքվի ուղղությամբ: Թուրքական 5-րդ և 15-րդ դիվիզիաներին էին միացել ադրբեյչանական զորքերը: Նրանց հետուից, ինչպես ընդունված էր, շարժվում էր թաթարական խուժանը՝ գրավված տարածքներում թալանն իրականացնելու համար:

Գանձակից եկած թաթարները, Շամխու ճանապարհին այրելով հայկական գյուղերը և տեղերում մնացած հայերին կոտորելով, հասան քաղաք: Նրանք գերի վերցրեցին մահից ազատված 30 հայկական ընտանիք և մեծ ավարով հետ վերադառն:

<sup>3</sup> ՀՀ ՊԿՊԱ, Հավաքածու, գ.112, թ.31:

<sup>4</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, գ.1, գ.17, թ.30:

<sup>5</sup> ՀՀ ՊԿՊԱ, Հավաքածու, գ.112, թ.18:

<sup>6</sup> Նույն տեղում, թ.32:

բական բանակը և տեղի մահմեղականությունը կողոպտեցին, սրի քաշեցին նուխիի, Արեջի, Գյորչայի տասնակ հազար հայերի: Քչերը, որոնք մի կերպ փրկվել էին կոտորածից և փորձում էին անցնել Վրաստան, ստիպված պատապարվեցին սահմանամերձ շրջաններում, քանի որ մենշիկյան կառավարությունը փակելով պահմանը, արգելեց նրանց մուտքը իր հանրապետություն: 1918թ. հունիսի 27-ից սկսվեցին արյունակի մարտեր Բաքվի խորհրդի գիճված ուժերի և թուրք-թաթարական զորքերի միջև: Ուժերը անհավասար էին: Եթե թուրքերը և թաթարները ստանում էին նոր համարում, ապա Բաքվի խորհրդը զորք էր այդ օգնությունից: Ծուտով դաշտամենց և իր զորքով ճակատը լրեց գնդապետ Բիշերախովը: Ծակատը պահելու համար Բաքվի խորհրդը ձայների մեծամասնությամբ որոշեց Պարսկաստանից Բաքու հրավիրել անգլիացիներին: Խորհրդի բոլչիկյան ֆրակցիան հրաժարական տվեց և դուրս եկավ խորհրդի կազմից: Իշխանությունը անցավ Ցենտրոկասպիի կառավարությանը: Վերջինս նույնակես չկարողացավ մինչև Վերջ պաշտպանել Բաքուն: Բաքվի անկումից մի քանի ժամ առաջ անգլիական զորքերը գեներալ Դեսթերվիլի գլխավորությամբ ուղղմանավերով հեռացան քաղաքից:

1918թ. սեպտեմբերի 15-ին թուրք-թաթարական զորքերը գրավեցին Բաքուն: Նոյն օրն էլ սկսվեց Բաքվի հայության կոտորածը: Ահա թե ինչ է գրում այդ մասին Բ. Իշխանյանը. «Երեք օր շարունակ, սեպտեմբերի 15-ի առավոտից մինչև 17-ը երեկոյան՝ կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի, քաղաքի նոր նարերն էին համարվում արնախում կազմակերպությունները, բազմաթիվ և բազմազան ավագաների ու ջարդարարների բանդաները՝ կազմված թուրքական կանոնավոր զորքերից և քաղաքի ու շրջակա գյուղերի մուտքմանական տարրերից»:<sup>1</sup> Բաքվում հայկական կոտորածների կազմակերպիչներն ու ոգեշնչողներն էին թուրքական զորքերի հրամանատարներ՝ Նուրի և Մուրսալ փաշաները, Աղրբեջանի ղեկավարներ՝ Ֆ. Խան-Խոյսկին և Զենաշիր խանը: Այդ վայրագները որոշել էին «նախօրոր նախատեսված պլանի համաձայն բանդաների և ջարդարարների ողորմածությանը թողնել քաղաքի ու նրա շրջակալիքի ամրող հայության կյանքն ու ինքը: Թող մորթեն և ջարդեն որքան կարող են, թող առևանգեն և բռնանան, թալանեն ու կղողատեն: Դա նրանց թույլ է տրված և նրանց է թողնված՝ իրենց էներգիային ու հնարավորության համապատաս-

<sup>1</sup>ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.121, գ.1, գ.26, թթ.16-18:

<sup>2</sup> Բ. Իշխանյան, Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 6:

խան».<sup>1</sup> Հայերի ցեղասպանությունը իրականացվում է այն նույն եղանակով, որ կատարվել էր Արևմտյան և Արևելյան Հայաստանում, Աղրբեջանի մի շարք շրջաններում: Կատորդները արդեն ունեն «մեծ փորձ»: Բաքվի հայության սպանությունները չեն տարրերվում 19-րդ դարի 90-ական թվականների կոտորածներից: Անօգնական բնակչությունը՝ հայ ժողովորդը, «մինչև վերջին թելը կողոպտվեց ու քայլայվեց, ենթարկեց բռնության և ոտքի տակ տրվեց, անարգվեցին մարդկային ամենատարրական իրավունքներն ու ընտանեկան սրբությունները, գերեվարվեցին և անհայտ կորան հազարավոր մարդիկ»....<sup>2</sup> Բաքվի հայության եղենագործությանը զոհ գնացին 30 հազար մարդ: Բաքվի հայոց ազգային խորհրդի տվյալներով մինչև 1918թ. սեպտեմբերյան ջարդերը 88673 հայերից տոկծել է 52822 մարդ, որը կազմում է ընդհանուր թվի 59,57%: Եվ կարծեք թե Բաքվում ոչինչ տեղի չէր ունեցել: Սեպտեմբերի 19-ին կառավարության նախագահը դիմում է ամբողջ բնակչությանը և հայտարարում, որ Աղրբեջանում ապրող բոլոր քաղաքացիները, անկախ հավատքից և ազգային պատկանելությունից, պետք է օգտվեն հավասար իրավունքներից և ինքը հավասարապես պարտավոր է պաշտպանել և երաշխավորել իր բոլոր քաղաքացիների կյանքի, ինչքի և իրավունքի անձեռնիւթյունը: Տիմիզմի հասնող Աման հայտարարությունները բազմից կինչեն այս պետության և նրա ժառանգորդ Խորհրդային Աղրբեջանի ղեկավարների շուրջերից:

Ծուտով թուրքերին Աղրբեյվկասում փոխարինելու եկան անգլիացիներս, երկրամատում առաջնորդվելով իրենց քաղաքական և տնտեսական շահերով, պաշտպանության տակ Վերցրեցին Աղրբեջանը: Անգլիացիների գալստյամբ Աղրբեջանի հայ բնակչության ցեղասպանությունը շղադարեցվեց: Դեռ ավելին, նրանց անմիջական մասնակցությամբ Խոսրով Բեկ Սոլթանովը նշանակվեց Ղարաբաղի և Ղանգեզուրի գեներալ-նահանգապետ: Այն հայկական երկրամատերը, որոնց ազգաբնակչության 95% ավելին տեղաբնիկ հայեր էին, սկսած 1918 թվականից կենաց ու մահու կոհված էին մոլում թուրք-թաթարական միացյալ ուժերի դեմ: Արևիկային բազմաթիվ վակերագրեր ապացուցում են, որ Աղրբեջանի մուսավարական կառավարությունը չի հրաժարվել պանթուրքիատական Ակրտումնե-

<sup>1</sup> Բ. Իշխանյան, Աշվ. աշխ. էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>3</sup> Տես Ի. Մուսեսովա, Ա. Հովհաննես, Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 68:

որի և պատրաստ է շարունակել հայերի ցեղասպանությունն իր տարածքում:

Բարձի արյունակի դեաքերից հետո նախապատրաստվում էին Գանձակի, Շամախի, Նուխի քաղաքների և Աղբեզական հայկական գյուղերի հայության կոտորածները: Շանապարհները դարձել էին խիստ անապահով: Հայզգի ուղևորները իշեցվում էին զնացքներից և հոշոտվում: Հայկական դիվիզիայի հրամանատարին հաղորդում էին, որ Ելիզավետապոլի գավառի Զարդալու գյուղի բնակչները հայտնում են Աղբեզական զնացքող մեծ զրակոչի մասին, որը նպատակ է հետապնդում Հայկական լեռնաշխարհի մաքրումը հայերից՝ Գետաշենց մինչև Բադաբենդ: Տվյալ ժամանակաշրջանում այս տարածքում կար 40-ից ավելի հայկական գյուղ: Աղբեզական Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը 1919 թ. ամռանը հաղորդում է, որ գավառներում և Բաքվում կառավարության կողմից տարվում է հակահայկական պրոպագանդա, որը կարող է վերաճել տեղի հայերի կազմակերպված կոտորածների: Դրա արդյունքում սկսվեցին ազգաբնակչությանը նոր կոտորածներ և բռնագաղթ: Միայն Ելիզավետապոլի գավառում այրվեցին 13 հայկական գյուղեր, որոնց ազգաբնակչության մի մասը անողոք հոչուտվեց, իսկ Կենդանի մնացածները տեղահան արվեցին:

Նման ծանր կացություն էր ստեղծվել նաև Նուխի, Արեշի, Շամախու գավառներում:

Հայ ազգաբնակչության կազմակերպված մասաւայկան կոտորածներ տեղի ունեցան Շուշիում (1920թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը): Այն նույնական կազմակերպված էր Աղբեզականի կառավարության կողմից: Կոտորածին զոհ գնացին 30 հազար հայեր: Բացի թաթարական խաժամուծից այդ կոտորածին մասնակցում էին և կանոնավոր զորքեր:

Ինչպես տեսանք. 1918-1920թթ. հայերի ցեղասպանությունը Աղբեզական նախապատրաստել էր և իրականացնում էր կառավարությունը, որին սկզբում աջակցում էր Թուրքիան, ապա Անդրկովկասում գտնվող Անգլիական զինվորական հրամանատարությունը: Աղբեզական հայերի ցեղասպանության եղանակը նույնն էր, ինչ Արևմտյան Հայաստանում կոտորած, թալան, տեղահանություն: Կա-

ռավարության ծրագիրը իրականացնում էին կանոնավոր զորքերը, նաև ականական գործերը, ինանական, բեկական ջղկատները, հակահայկական մոլեռանդրությամբ «տոգորված» թաթար և մյուս մահմեդական ազգաբնակչությունը:

Հայերի ցեղասպանությունը Աղբեզագանում հետապնդում էր քաղաքական, տնտեսական, կրոնական նպատակները: Մուսավաթական Աղբեզական պաշտոնական գաղափարախոսության հիմնադիրներից էին Զեյնալ Թաղինը, Ալի Հովեհն Զատեն, Ահմետ Սղամը, Ալի Մարդան Թոփչիբաշը: Նրանցից մի քանիսը բուռն գործունեություն էին ծավալել Օսմանյան կայսրության սահմաններում: Այդ գաղափարախոսությունը որդեգրեցին երիտրութերը, և այս դարձավ նրանց պաշտոնական գաղափարախոսությունը:

Առաջին աշխարհամարտը լայն հնարավորություն ընձեռեց պանթրոքիզմի գաղափարները կյանքի կոչելու համար: Նրա ճանապարհին կանգնած էր հայ ժողովուրդը՝ իր պատմական հայրենիքով: 1915-1918թթ. արևմտահայության ցեղասպանությամբ և բռնագաղթով վերացվեց առաջին խոչընդոտը մեծ Թուրանի ճանապարհին: Հաջորդ արգելքը՝ Արևելյան Հայաստանն էր, որը սեափ պես խրված էր Թուրքիայի և Կովկասի մահմեդականության միջև: Մեծ ջանքեր թափեցին վերացնելու նաև այդ արգելքը, սակայն միջազգային և քաղաքական հանգամանքների բերումով ստիպված էին ճանաչել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը:

• Աղբեզականի քաղաքական գործիները և կառավարող շրջանները շատ լավ գիտակցում էին, որ այն տարածքներում, որտեղ ստեղծեցին իրենց պետականությունը, երբեք այդ անվամբ պետություն չի եղել և որ այդ տարածքները երբեք իրենց չեն պատկանել: Այդ առումով նրանց պետականությունը Թուրանի կազմում կարող էր ապահովել իրենց «ազգակից և կրօնակից» Թուրքիան: Եթե Նուրի փաշան հայակ Գանձակ, Աղբեզականի կառավարությունը ճոխ ընդունելություն կազմակերպեց: Գանձակի մզկիթներից մեկում Աղբեզականի կառավարության նախագահ Խան-Խոյսկին ողջունելով Նուրի փաշային և թուրքական զորքի մուտքը հանրապետություն, ասաց. «Վերջապես Աղբեզականի թրքությունը հասնում է իր նախակին: Առ մտնում է իր սիրելի Օսմանյան խալիֆաթի գիրկը: Վերջապես իրականանում է համայն մահմեդականության դարավոր իդեալը՝ բոլորի միացումը սուլթանի կանաչ դրոշակի տակ: Տաճիկ ազատարար զորքերին սպասում են Կովկասի լեռնականները, Թաթարիստանի թաթարներն ու կիրգիզները, Անդր-

1 Մշակ. 22 հոկտեմբերի, 1918թ.:

2 ՀՀ ՊԿՊԱ. Ֆ.200, գ.1, գ.158, թ.90:

3 ՀՀ ՊԿՊԱ. Ֆ.200, գ.1, գ.50, թ.12:

4 ՀՀ ՊԿՊԱ. Ֆ.278, գ.1, գ.14, թթ.87-89:

5 ՀՀ ՊԿՊԱ. Ֆ.200, գ.1, գ.44, թ.107:

կեցցե՛ օսմանյակ բանակը, կեցցե՛ համայն միացած մահմետականությունը»:

Ինչպես նշեցինք, Թուրանի ճանապարհին ի դեմս Հայատանի և հայության կար մի մեծ խոշընդոտ: Աղրբեշանը զրկված էր Թուրքիայի հետ անմիջական սահմանից և կապից: Եվ պատահական չէր այն հանգամանքը, որ Աղրբեշանը իր ստեղծման առաջին օրերից մեծ տարածքային պահանջներ ներկայացրեց Հայաստանի Հանրապետությանը: Թուրքիայի հետ կապվելու համար Աղրբեշանը Հայատանից պահանջում էր ամբողջ Ելիզավետպոլի նահանգը՝ բռվանդակ Արցախով և Զանգեզուրով, Երևանի նահանգից՝ Նախշելանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Սաղարակի, Վեդիքարի, Զանգիբասարի շրջանները, Արաքսի աջ ափը, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի նահանգը: Բացի վերը նշվածից՝ Աւանա լճի հյուսիսային ափերը, Բասարգեչարը: Ռուբեն Տեր-Մինասյանի հաշվումներով՝ Աղրբեշանը Հայատանից պահանջում էր 50520 քառակուի կմ տարածք: Իր նպատակներին հասնելու համար Աղրբեշանի կառավորությունը տեղի մահմետականների միջոցով պատամբություններ էր կազմակերպում Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ:

Թուրքիայի և Աղրբեշանի հիմնական՝ պանթուրքիստական նպատակն ամբողջ Կովկասի գրավումն ու թրացումն էր: Այդ նպատակին հասնելու այնքան էլ դյուրին չէր: Մահմետականները կազմում էին Անդրկովկասի ազգաբնակչության մեկ երրորդը: Երիտթուրքերը սեփական փորձով գիտեին, որ հայությանը դավանակի և ազգափոխ անելը անհնար է: Մնում էր միայն մեկ եղանակ՝ սեփական նպատակներին հասնել և իրենց ծրագիրը իրականացնել մի ամբողջ ազգի ցեղասպանությամբ: Հայերի թվաքանակը Աղրբեշանում մոտ 500 հազար էր, որը հանրապետության ամբողջ ազգաբնակչության մեկ քառորդն էր կազմում: Հայերի ֆիզիկական ոչնչացմամբ Աղրբեշանի կառավարող շրջանները փորձում էին հասնել հանրապետության ազգաբնակչության միատարրության: Հայության ոչնչացումը հետապնդում էր մի նպատակ, որը նրանք այլև չեն հավակնի և պայքարի իրենց պատմական տարածքների համար: Հայության ցեղասպանությամբ կոչնչացվեն և

դի համար: Հայության ցեղասպանությամբ կոչնչացվեն և նրա ճարտարապետական մշակութային արժեքները՝ տարածքների պատկանելիության հրական վկայությունները:

19-րդ դարի 70-ական թվականներից Անդրկովկասը ևս ընդգրկվեց կապիտալիզմի զարգացման ոլորտը: Բարոն, որը այդ ժամանակ դարձել էր հայության հասարակական, մշակութային և տնտեսական կարևորագույն կենտրոններից մեկը, Անդրկովկասում կապիտալիստական հարաբերություններից զարգացման հետևանքով, հայ բորժուազիայի խելամիտ գործունեության շնորհիկ դարձավ հայկական կապիտալի կուտակման ամենահիմնական կենտրոնը: Բարզի նավթահորերի մի գավակ մասը պատկանում էր հայ արդյունաբերողներին: Նշանակալի էր հայ բորժուազիայի մասնակցությունը արդյունաբերության մի շարք ճյուղերում, արտաքին և ներքին առևտուում:

Ի դեմս հայ բորժուազիայի, մահմետական բորժուական շրջանները տեսնում էին լուրջ մրցակցի: Նրանցից ազատվելու միակ ճանապարհը նրանց ֆիզիկական բնաջնջումն էր: Իրենց ճանապարհից հեռացնելով հայ արդյունաբերական բորժուազիայի ներկայացուցիչներին՝ առանց մեծ ջանքերի իրենք դառնում էին միլիոնների հասնող կապիտալի տերն ու տնօրենը:

Հայ բորժուազիայի ֆիզիկական ոչնչացումը ուներ նաև կանխարգելիչ դեր. Վերջիններս չեն ֆինանսավորի և ղեկավարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Տնտեսական մյուս գործոնը սերտ կապված էր այն հանգամանքի հետ, որ տեղի մահմետական ազգաբնակչության գերակշիռ մասը քոչվոր անասնապահներն էին: Այդ ժամանակաշրջանում, բացի քաղաքացին հայ ազգաբնակչությունից, նրա հիմնական մասը բազմաթիվ հանգամանքներից ելնելով, հիմնականում բնակվում էր ճախալենային և լեռնային գոտիներում: Գյուղի հայ ազգաբնակչության կոտորածները քոչվոր մահմետականներին հնարավորություն էին ընձեռում տիրանալ նոր արտավայրերի, մեծ քանակության հասնող անասնահոտերի:

Դաշտային շրջաններում մահմետական ազգաբնակչությունը, հայերի կոտորածով, ձեռք էր բերում հարուստ գյուղեր ու շենքեր և նոր վարելահողեր: Բացի այդ հայերի կոտորածները և թալանը մահմետական ազգաբնակչությանը դարձնում էին որոշակի հարստության տեր:

Աղրբեշանում հայերի բնաջնջման քաղաքականությունը որոշակի հորեն կապված էր կրօնական գործոնի հետ: Պատահական չէր, որ հակահայկական պրոպագանդայում մեծ նշանակություն էր ստանում մահմետական հոգնորա-

<sup>1</sup> Ա.Մելիք-Յովյան, Բարզի ներսամարտերեն, «Հայրենիք» ամսագիր, 1925, թ. 9, էջ 68:

Դուբէ՛, Հայ լեղափոխականի մը լիշտակները, հ.է., Թեհրան, 1982, էջ 184:

**Կանության քարոզչությունը:** Սովորանին համարելով իրենց, այսինքն բովանդակ մահմեղականության, միակ քարձրագոյն հոգևոր առաջնորդը՝ մոլլաները կանգ չեն առնում ոչնչի առաջ և գտում էին օժանդակել մեծ թուրանական պետության ստեղծմանը և հաստատմանը: Նրանք իրենց հարուստ փորձից գիտեին, որ դժվար է հայությանը դավանափոխ անել, ուստի քրիստոնյաների և քրիստոնեության վերացումը իրենց տարածքում տեսնում էին նրանց բնաշնչնան մեջ: Մասնաւոր ազգաբնակչության կրոնական մոլեւանդությունը առաջնային գործոն էր հայության ցեղասպանության ճանապարհին:

1920թ. ապրիլին Ադրբեյջանը խորհրդայնացվեց: Մուսավարականներին փոխարիննեցին ադրբեյջանական բոլշևիկները: Իրականում փոխվեց միայն հանրապետության ցուցանակը և Ադրբեյջանի հանրապետությունը վերանվանվեց Խորհրդային Ադրբեյջան: Նախկին մուսավարականներից շատերը զբաղեցրեցին նոր պաշտոններ: Նախկին բանակը, որի միջոցով կառավարությունը շիայտարարված պատերազմ էր մոլում Հայաստանի դեմ և իր տարածքում իրականացնում հայերի ցեղասպանությունը, դարձավ Ադրբեյջանի կարմիր բանակ, շարունակելով իր սկ գործը հայ ազգաբնակչության նկատմամբ: Պանթութեազմի գաղափարախոսությանը և քաղաքականությունը փոխարինելու ենակ նոր գաղափարախոսություն և քաղաքականություն՝ համաշխարհային հեղափոխության ցնորդը: Խորհրդային Ռուսաստանը չկարողացավ ոռասկան հեղափոխությունը արտահանել Արևմտյան Եվրոպա և իրականացնել համաշխարհային հեղափոխություն: Նրա իրականացման ուղղությունը տեղափոխվեց դեպի Արևելք: Այստեղ այն իրականացնելու համար անհրաժեշտ էր ուժեղ հետարան: Քանզի Անդրկովկասում առաջինը խորհրդայնացվել էր Ադրբեյջանը, ուստի այն էլ դարձավ այդ հետարանը: Ինչպես պանթութեազմի, այնպես էլ համաշխարհային հեղափոխության ճանապարհին, խոչընդոտ էր հանդիսանում Հայաստանը և հայ ժողովուրդը: Այս անգամ էլ Հայաստանը և հայությունը պետք է զոհաբերվեին համաշխարհային հեղափոխության գաղափարին և նրա իրականացմանը:

Ադրբեյջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նրա Հեղեկումը, ապա նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը պահանջեցին Ղարաբաղից, Զանգեզուրից, Նախիջևանից դուրս բերել հայկական զորքերը: 1920թ. ամռանը խորհրդային զորքերը սկսեցին այդ երկրամասերի գրավումը: Այդ շրջանների հայ ազգաբնակչությունը նորից հայտնվեց կոտորածի սպառնալիքի առաջ: Ադրբեյջանական զինվորները, որոնք այժմ դարձել էին

կարմիր ասկիարներ, 11-րդ բանակի ստորաբաժանումների հետ սկսեցին ոմբակոծել Ղարաբաղի, Զանգեզուրի հայկական բնակավայրերը, սկսվեց ժողովրդի կողոպուտը և կոտորածը:

Ծուտով նրանց միացան քեմալականները, որոնք պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Բոնությունները այնպիսի ահավոր բնույթ էին կրում, որ ապստամբեցին և Զանգեզուրը, և Ղարաբաղը: Խորհրդային լուծը ժամանակավորապես թոքափվեց: Բայց խորհրդա-քեմալական ագրեսիայի հետևանքով շուտով Հայաստանում հաստատվցին խորհրդային կարգեր:

Խորհրդային Ադրբեյջանի հենկումը, ելնելով որոշակի քաղաքական նկատուումներից, 1920 նոյեմբերի 30-ի իր հոչակագրով Ղարաբաղը, Զանգեզուրը և Նպիջնանը հայտարարեց Խորհրդային Հայաստանի մասը: Սակայն այս խաղերը երկար չտևեցին: Մի քանի ամիս անց Ադրբեյջանի դեկավարությունը կատարի պայքար սկսեց իր իսկ ընդունած հոչակագրի դեմ:

1921թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մուսկայում կնքվեց «Եղբայրության և բարեկամության» պայմանագրի: Այդ պայմանագրով, պատմական Հայաստանի տարածքներից Արևմտյան Հայաստանը, Սուրմալուի գավառը, Կարսի մարզը ճանաչվեցին որպես Թուրքիայի տարածք, իսկ Նախիջևանը և Շարուրը տրվեցին Խորհրդային Ադրբեյջանին:

Նույն բախտին արժանացավ Լեռնային Ղարաբաղը: 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ/Բ/1 Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պետումը, առանց քվեարկության, կամային որոշմամբ Լեռնային Ղարաբաղը հանձնեց Խորհրդային Ադրբեյջանի Կենտգործկոմի հեկետով ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնակար մարզը: 1924թ. փետրվարի 9-ին ստեղծվեց Նախիջևանի ինքնակար հանրապետությունը Ադրբեյջանի կազմում: Այս տարածքները Ադրբեյջանին բռնակցելուց հետո, համարապետության հայ ազգաբնակչության համար ստեղծվեց նոր վիճակ, որը կարելի է բնութագրել որպես սպիտակ գեղոցի:

Արդեն 1921թ. աշնանը սկսվեց հայ ազգաբնակչության արտահոսքը Ղարաբաղից: Բոլորից շատ հիասթափվել էր հայ մտավորականությունը, որը հասկանում էր բռնակցված տարածքներում իրականցեղող քաղաքականությունը: Խորհրդային Ադրբեյջանի դեկավարությունը գիտակցելով,

<sup>1</sup>Տե՛ս Լ. Ա. Խորշումյան. Իստինա - օճյնտվենի կրիտերիան исторической науки, Երևան, 1989, էջ 27-28:

որ բռնակցված տարածքներում հայ ազգաբնակչությունը չի հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, ակնեց միջոցներ ձեռնարկել այդ տարածքների ժողովրդագրական վիճակը փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ։ Աղրբեջանի քաղաքական դեկավարությունը հանկանում էր, որ առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել անմիջական սահմանը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև։ Այդ նպատակով ստեղծվեց այսպես կոչված «Կարմիր Քուրդիստանը», որն իր մեջ ընդգրկեց Գեղրաջարի, Լաշինի շրջանները, որոնք Լեռնային Ղարաբաղը կտրում էին Հայաստանից։

Խորհրդային Աղրբեջանի կառավարության հաջորդ քայլն ուղղված էր Նախիչևանի և Շարուրի հայ գաղթականների դեմ, որոնք ձգտում էին հետ Վերադառնալ իրենց տները։ 20-ական թվականների սկզբին երկրամասի հայ բնակչության մեծ մասը, որ դարձել էր գաղթական, խնդրագրեր էր ուղղում Խորհրդային Ռուսաստանի, Հայաստանի, Աղրբեջանի պետական, կուսակցական մարմիններին խնդրով։

1917թ. Նախիչևանում ապրում էր 53,9 հազար հայ, որը երկրամասում բնակչության ընդհանուր թվակազմի շուրջ 40% էր կազմու։ Հետագա մի քանի տարիներին Նախիչևանի և Շարուրի հայ ազգաբնակչության թվաքանակը թուրք-աղրբեջանական-խորհրդային հարձակումների հետևանքով զգալիորեն կրճատվեց։ Երկրամասի տասնյակ հազարավոր հայեր, որոնք փրկվեցին ցեղասպանությունից, հանգրվան գտան Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի տարբեր վայրերում։

Աղրբեջանի կառավարությունը ամեն կերպ արգելու էր հանդիսանում գաղթականների վերադարձին։ Աղրբեջանի կառավարության նախագահ Մուսաբեկովը 1922թ. հունիսի 24-ին Հայաստանի կառավարության նախագահին հղած թեղագրում հաղորդում է, որ Աղրբեջանի կենտրոնակում որոշմասք բնակչության մասասական մուշտը իրենց հանրապետության սահմանները արգելվում է։<sup>1</sup>

Նախիչևանի փախստական հայերի քազմաթիվ դիմումները Աղրբեջանի և Նախիչևանի իշխանություններին, մնում են անպատճախան, և նրանք դիմում են համապատասխան միութենական մարմիններին։

Այդ կապակցությամբ 1925թ. մարտի 11-ին Նախիչևան է այցելու ԽՍՀՄ ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսեյ Ռիկովը։ Նա Աղրբեջանի կառավարությանը մեղադրեց «հա-

մատարած... այլանդակություն»։ ստեղծելու մեջ։<sup>2</sup> «Գործադրվեցին վճռական միջոցներ, իշխանության որոշ ներկայացուցիչներ նոյնական գնդակահարվեցին»։ Սակայն այդ միջոցառումներն էլ չփոխեցին իրավիճակը։ 1926թ. մայիսի 6-ին Աղրբեջանի կենտրոնակում ընդունում է որոշում, որ տեղ նշվում է, որ «համապարագրական հողաբաշխությ իրականացնելու նպատակով... և նախիչևանի ԽԽՍՀ սակավահողության պատճառով արգելվում է նախիչևանի ինքնավար հանրապետությունը վերաբնակեցնել գորդատնտեսությամբ զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողների...»։

Նախիչևանի փախստականների հարցը փակվեց 1926թ. հունիսի 12-ին, երբ ի պատասխան 1926թ. մարտի 12-ին Աղրբեջանի կենտրոնակում հարցումների, Աղրբեջանի կենտրոնակում տվեց բացասական պատասխան։ Նոյն թվականին անցկացված մարդաբամարի տվյալներով հայերի թիվը կազմում էր 11,3 հազար, որը ողջ բնակչության 10,8% էր։ Այսպես, մեկ տասնամյակի ընթացքում Նախիչևանի հայ ազգաբնակչության թիվը նվազեց 42,6 հազար մարդով։

Աղրբեջանի հայության սահիտակ գենոցիդը շարունակվեց հաջորդ տասնամյակներին և ընդգրկեց կյանքի բոլոր ոյրութեանը։ Ինչպես ճիշտ նկատում է Վ. Խոջաբեկյանը, «Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Աղրբեջանական ԽԽՍՀ այլ հայաբնակ վայրերում կուտակված ազգային չլուծված շատ պրոբլեմներ իրենց հերթին հակազդել են այդ շրջանների ոչ միայն ժողովրդագրական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի վրա»։ Եկ իրոք, մոտ յոթ տասնամյակ Աղրբեջանի հայությունը գտնվում էր ծանր սոցիալ-տնտեսական դրության մեջ։ Հայերով բնակեցված ավանները և գյուղերը չեն գտնվել Աղրբեջանի դեկավառ շրջանների ուշադրության կենտրոնում և չեն կարող գտնվել, որովհետև նրանց միակ նպատակը եղել է հայերով բնակեցված տարածքների հայաբախումը։ Իրենց նպատակին հասնելու համար Աղրբեջանի քաղաքական դեկավառությունը խոչնորութեր էր ստեղծում հայաբնակ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում։ Տասնամյակներ շարունակ ԼՂԻՄ-ում կապիտալ ներդրումները եղել

<sup>1</sup> Վ. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամկե, Երևան, 1921, էջ 74։

<sup>2</sup> ՀՀ ՆԿՊԿԱ, Ֆ. 130. գ. 6, գ. 117, թ. 27։

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 69։

<sup>4</sup> Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., Краткие сводки, вып. IV, с. 127, 128։

Վ. Խոջաբեկյան, Աշվաշում, էջ 43։

<sup>1</sup> Տես Կավказский календарь на 1917 г., էջ. 215-221։

<sup>2</sup> Հայաստանի Համապետության նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ հայութեան ՀՀ ՆՊԿԱ, Ֆ. 123, գ. 42, գ. 8, թ. 13։

ես չըին և չէին կարող էական դեր խաղալ արդյունաբերության նյութական և տեխնիկական բազայի ամուսնության համար: Արդյունաբերական ձեռնարկություններում մերենասարքավորումները չեն նորացվել, որը հասցեն էր ֆիզիկական ու բարոյական խիստ մաշվածության:

Խիստ ծանր էր Լեռնային Ղարաբաղի շինարարական կազմակերպությունների տեխնիկական հագեցվածության մակարդակը: Աղրեցանի Բարու, Սումգայիթ, Կիրովարադ, Մինճեաւոր քաղաքներից առարկող շինանյութերը եղել են ցածր որակի և տեղ են հասել ուշացումներով: Ծինանյութերի մշտական պահասի հետևանքով Ստեփանակերտում պարապուրիդները ամսվա ընթացքում կազմել են 30-40 տոկոս :

Աղրեցանական գյուղերի համեմատությամբ հայկական գյուղերը տասնամյակներ շարունակ գրկված են եղել գյուղատնտեսական տեխնիկայից: Նրանց մեծ մասում գյուղատնտեսական աշխատանքները կատարվել են ձեռքով: Հնայած այս ամենին օրինակ, ԼՂԻՄ-ում 1981-85 թթ. տարեկան միջին հաշվով արտադրվել է 145,7 հազ. տոննա խաղող, 11 հազ. տոննա միս, շուրջ 55 հազ. տոննա կաթ:

Մանր վիճակում էր հաղորդակցության ցանցը: Տասնամյակներ շարունակ ճնանապարհները չեն նորոգվել, որի հետևանքով բազմաթիվ գյուղեր կտրված են եղել միմյանցից և շրջկենտրոններից: Տարվա րորշ ամիսներին այդ ճնանապարհները եղել են անանցանելի:

Բնակչարանային շինարարությունը տարիներ շարունակ ընթացել է շատ ցածր տեմպերով: Կիրովարադի հայկական թաղամասում ընդհանրապես չի իրականացվել պետական շինարարություն:

Աղողջապահության բնագավառում նոյնական առկա էր ազգային խորականությունը: Հայկական բազմաթիվ գյուղերում, որոնք գրեթե կտրված էին շրջկենտրոններից, չեն եղել բուժկետեր և առաջին օգնության բացակայության հետևանքով տուժել են շատ մարդիկ:

Աղրեցանի բազմաթիվ հայ երիտասարդներ և աղջկներ, ձեռք բերելով բարձրագույն կրթություն, մերժում են ստացել աշխատանքի տեղապորման հարցում ու ստիպված հետացել են ԽՍՀՄ տարբեր հանրապետություններ: Դա Աղրեցանի դեկավարության նպատակային քաղաքականությունն էր՝ թույլ չտալ հայ երիտասարդությանը հիմնավորվելու իր պատմական հայրենիքում: Երիտասարդությանը պարտադրված արտագաղթը հանգեցրեց Աղրեցանի

հայ ազգաբնակչության ծերացմանը: Հանրապետության բազմաթիվ գյուղերում և ավաններում տարեց ազգաբնակչության թիվը կազմում էր մոտ 70 տոկոս:

Այս երևույթները որոշակիորեն ազդում էին հայ ազգաբնակչության բնականու աճի վրա: Ցածր ծննդի հետևանքով նվազեց դարբություն սովորող աշակերտների ընդհանուր թվաքանակը: Միայն Լեռնային Ղարաբաղում 1970 թ. համեմատությամբ 1988 թ. դարբություն սովորող աշակերտների թիվը պակասեց 13 հազարով :

Մի քանի տասնամյակ շարունակ Աղրեցանի հայկական դարբություն արգելված էր հայոց պատմություն առարկայի դասավանդումը: Խոսական դարբություն, որոնց աշակերտների մեծ մասը հայեր էին, հայոց լեզվի դասավանդման մասին նույնիսկ խոր լինել չէր կարող:

1970-ական թվականների սկզբներից Աղրեցանի կառավարության վարած «ազգային քաղաքականության» հետևանքով մեզը մյուսի հետևից Բաքվում, Կիրովարադում, Շաքիում, Շամխորում, Խանջարում, Դաշքեսանում սկսեցին փակվել հայկական դարբությունը: Արդեն 1980 թ. նշված քաղաքներում չէր գործում և ոչ մի հայկական դարբությունը ուղղված էր նաև հայկական դարբությունը:

Սպիտակ գենոցիդի վլաքը ուղղված էր նաև հայկական մշակույթի դեմ: Խորհրդային իշխանության տարիներին կրոնի դեմ պայքարի պատրվակով ոչնչացվեցին հայութափոր եկեղեցիներ և այլ պատմա-մշակույթային արժեքավոր կորողներ: Լեռնային Ղարաբաղի 1600 պատմական հուշարձաններից որպես արժեք ներկայացնող պաշտոնական փաստաթղթերում ներկայացվել էին 65-ը: Բայց այդ վերջիններս էլ չեն պահպանվում պետության կողմից: Այն ոչ մի միջոց չէր հատկացնում նրանց վերանորոգման ու վերականգնման համար: Հայ գիտնականներին չէր թույլատրվում ուսումնասիրություններ կատարել այդ տարածքներում: Աղելված էր նրանց մուտքը Ագուշի և Զուղա՝ ուսումնասիրելու այստեղի հայկական պատմական հուշարձանները:

Տասնամյակներ շարունակ հողային, շինարարական աշխատանքներ կատարելու պատրվակով՝ ոչնչացվեցին Զուղայի հազարից ավելի խաչքար-հուշարձաններ: Աղրեցանցի որոշ գիտնականների լկություններ հասավ այնտեղ, որ հայկական կիրառական արվեստի այդ յուրահատուկ գանձերը, որոնց մասին հայտնի է ամբողջ գիտական աշխարհին, հայտարարվեցին աղվանական: Նոյն բախտին արժանացան մի շարք ճարտարապետական հիմքանակ

<sup>1</sup> Խորհրդային Ղարաբաղ, 25 մայիսի, 18 հունիսի, 1988:

կոթողներ, որոնցից է, օրինակ, Ամարասի ճշանավոր եկեղեցին:

Աղրբեջանի կառավարությունը խոչնըդուներ էր ստեղծում հանրապետության հայ մշակույթի գործիչների համար: Ամեն կերպ սահմանափակվում էին ազատ ստեղծագործելու նրանց իրավունքները: Հանրապետության առաջադիմ հայ մտավորականությունը ուղղակի հետապնդվում էր Աղրբեջանի հշխանությունների կողմից: Նրանց հանրապետությունից հեռացնելու նպատակով պայքար հայտարարվեց «հայ ազգայնականության» դեմ: Հայ մտավորականության բազմաթիվ մերկայացուցիչներ հայտնվեցին շատ ծանր պայմաններում: 1960-ական թվականներին, գիտության և մշակույթի մեկ տասնյակից ավելի հայ գործիչներ ստիպված հեռացան Լեռնային Ղարաբաղից և Աղրբեջանի այլ քաղաքներից:

Աղրբեջանում հայ բնակչության շահերը ուժնահարող ազգային, քաղաքական, հասարակական, սոցիալական, տնտեսական, մշակութային խորականությունը չեղ կարող չհանգեցնել ժողովրդագրական փոփոխությունների, որին զգութում էր Աղրբեջանի կոմունիստական ղեկավարությունը:

Վիճակագրական տվյալների օրենստիվ Վերլուծությունը վար ապացուց է այն ժողովրդագրական փոփոխությունների, որոնք տեղի ունեցան հայկական տարածքները Աղրբեջանին բռնակցելուց հետո: Լեռնային Ղարաբաղի մերկային տարածքում 1913 թ ապրում էր մոտ 176 հազ մարդ: 1926 թ մարդահամարի տվյալներով, ազգաբնակչության թվաքանակը նվազեց՝ կազմելով 125,3 հազար մարդ: Աղրբեջանի պաշտոնական տվյալներով, այդ նոյն ժամանակաշրջանում մարզի հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 117 հազար մարդ: Մինչև հաջորդ՝ 1939 թ մարդահամարը հայության թվաքանակը աճեց և հասավ 132,8 հազարի<sup>1</sup>: Վիճակագրական տվյալները որոշակիորեն վկայում են, որ երկրամասի հայ ազգաբնակչությունը գտնվում է բարզով վիճակում:

Սակայն մինչև երկրորդ աշխարհամարտը հայ ազգաբնակչության աճի միտումը պայմանավորված էր բնական բավականին բարձր աճով, և արտահոսքը այնքան էլ մկատելի չէր:

Միգրացիոն պրոցեսների հետևանքները պետք է իրենց զգացնել տային ավելի ուշ, եթե իրոք սկսվեց հայ ազգաբնակչության թվաքանակի նվազում: Եթե 1923 թ հայ ազգաբնակչությունը Լեռնային Ղարաբաղում կազմում էր 94,4 տոկոս, ապա 1979 թ մարդիկամարի տվյալներով միայն 75,9 տոկոս:<sup>2</sup> Ընդհանուր առմամբ 1926 և 1979 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում հայ ազգաբնակչության թվաքանակը ավելացավ 11,4 հազարով: Բնկան աճի հավասար պայմաններում Լեռնային Ղարաբաղի աղրբեջանի ազգաբնակչության թվաքանակը ավելացավ 24,7 հազարով:<sup>3</sup>

Նոյն գործնթացը ավելի վատ հետևանքներով տեղի էր ունենում Նախիջևանում: 1926-1979 թթ. ընթացքում Նախիջևանի խորհրդային Խճճավար Հանրապետության բնակչության 229,2 տոկոս ընդհանուր աճի պայմաններում աղրբեջանի բնակչությունը ավելացավ 2,6 անգամ, իսկ հայերինը կրճատվեց 3,3 անգամ, իսկ մինչև 1988 թ. բռնագաղթը այնտեղ ապրում էր մոտ 1,5 հազար մարդ: Խորհրդային հշխանության տարիներին 44 հայաբնակ գյուղերից միայն Ազնաբերդն էր բնակեցված հայերով:

Խորհրդային հշխանության տարիներին ամբողջ Աղրբեջանում հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը կրճատվեց 6,7 տոկոսով:

Հյայերի արտահոսքը Աղրբեջանից մասսայական բնույթ ընդունեց 1970-1979 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում: Այդ տարիներին Աղրբեջանական ԽՍՀ-ի տարածքից հարկադրաբար հեռացան 82 հազար հայեր: Հետագա տասնամյակում հրավիճակը չփոխվեց, և հայության արտահոսքը Աղրբեջանից ընդունեց ավելի մեծ չափեր: Այսպիսով Աղրբեջանի «հնտերնացիոնալ» հանրապետությունը քայլ առ քայլ իրականացրեց իր առջև դրված նպատակը: Ունակարգությունը իր պատմական հայրենիքում ապրելու և բարգավաճելու ոչ թե առանձին մարդկանց, այլ մի ամբողջ ժողովովի իրավունքը:

Աղրբեջանի վարած այդ քաղաքականությունը իրարկե նորություն չէր: Նման քաղաքականություն վարում էր Օսմանյան կայսրությունը, իսկ այսօր՝ ժամանակակից թուրքիան: Դա պանթութքիզմի անկյունաքարերից մեկն էր, որ տասնամյակներ շարունակ քողարկելով «սոցիալիստական

<sup>1</sup> ЗСФСР в цифрах, Тифлис, 1929, с. 3. Численность и состав населения СССР, Москва, 1984, с. 126.

<sup>2</sup> Նոյն տեղում:

<sup>3</sup> Վ. Խոշաբեկյան, Աշվ. աշխ., էջ 79: Կոմмунист, 19 դեկտեմբերի 1989 թ.

<sup>1</sup> НКАО, 50 лет в дружной советской семье, Степанакерт, 1973 с. 32-33.

<sup>2</sup> Всесоюзная перепись населения 1959г. Азербайджанской ССР, Москва, 1963, с. 140.

ինտերանցիոնալիզմի» շղարշով՝ իրականացնում էր պաշտոնական Ադրբեյջանը: Թե անցյալում, թե այսօր իրականացման մերողները, ճանապարհները, եղանակները նույնն են:

Խորհրդային բռնապետությունը Ադրբեյջանում պանթուրքիզմի համար զապողական շապիկի դեր էր կատարում: Այդ գաղափարախոսությունն իրեն պետք է զգացնել տար որոշակի պայմաններում, որպիսին դարձավ գորբաշովյան վերակառուցման ժամանակաշրջանը: Սոցիալիստական հասարակարգի մոտալուս անկումը, սոցիալիզմի զաղափարախոսության սնանկացումը խոր նիրինց արթացրեց ԽՍՀՄ ժողովուրդներին: Չլուծված քազմաթիվ սոցիալ-տնտեսական, քաղաքական և առավելապես ազգային խնդիրներ շարժման մեջ դրեցին Խորհրդային Միության միջիննավոր քաղաքացիների, տարբեր ժողովուրդների և ազգերի:

Առաջինը իր ազգային արժանապատվությունը պաշտպանելու կանգնեց արցախահայությունը, որ տասնամյակներ շարունակ չէր հաշտվել և չէր կարող հաշտվել իր պատմական տարածքները Ադրբեյջանին բռնակցելու հանգամանքի հետ:

Արցախահայությունը, հավատալով Գորբաշովի հայտարած վերակառուցման քաղաքականությանը, պայքար սկսեց սահմանադրական ճանապարհով իր մայր հայրենիք՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար: Սակայն ԽՍՀՄ քաղաքական դեկապարությունը, չցանկանալով լուծում տալ այդ պրոբլեմին, Արցախում և Հայաստանում ընթացող քազմամարդ հանրահավաքները որակեց սաղրիչ, ծայրահեղական, մի խումբ ազգայնականների պահանջ և գործ:

Պատեհ առիթ էր ստեղծվել Ադրբեյջանի համար վերակենդանացնելու պանթուրքիզմի դոկտրինան և գործնականում իրականացնել այն: Նորից որերորդ անգամ այդ քաղաքականության ճանապարհին կանգնած էր բովանդակ հայությունը: Այդ խոչընդոտը վերացնելու համար պետք չէր նոր քան հնարել: Կար փորձված մերո՞՝ հայերի ցեղասպանությունը: Նախ այդ փորձված և իրեն արդարացրած ձեր անհրաժեշտ էր ինչ-որ չափով նորից փորձարկել՝ համոզվելու համար, թե ինչպիսի արձագանք այն կգտնի երկրում և աշխարհում:

1988 թ. փետրվարի 27-29-ը Ադրբեյջանի մայրաքաղաք Բաքվից ոչ հեռու գտնվող արդյունաբերական Սումգայթ քաղաքում իրականացվեց քաղաքի հայության ցեղասպանությունը: Արդյունքում զոհվեցին մի քանի տասնյակ հայեր, մոտ 200 մարդ վիրավորվեց: Այդ շարդերից հետո քա-

ղաքի 18 հազար հայ ազգաբնակչությունը ստիպված բռնեց գաղթի ճանապարհը: Պաշտոնական աղբյուրների վկայությամբ զոհերի թիվը կազմել է 26 մարդ, սակայն մինչև օրս ստուզ հնարավոր չէ պարզել խաժամուժ զազանի կրթին զոհ դարձած մարդկանց ճշգրիտ թիվը:

Սումգայթյան փախստականների վկայությամբ հայերի կոտորածը եղել է լավ կազմակերպված: Դա է վկայում այն հանգամանքը, որ խաժամուժը զինված է եղել քաղաքի գործարաններում վաղօրոք պատրաստված դանակներով, սրածայր մետաղաձողովերով: Նախօրոք մարդասպաններին հայտնվել են քաղաքում բնակվող հայերի հասցեները: Կոտորածի բնակչությունը անշատվել են հեռախոսները: Կոտորածին նախորդող ժամերին հանրահավաքում խոսել և երթը գլխավորել են քաղաքի կուսակցական կոմիտեի առաջին և երկրորդ քարտուղարները: Քաղաքի իրավապահ մարմինները երեք օր մատնված են եղել անգործության: Վերջին օրը քաղաք մտած զինվորների աշքի առջև կատարված քազմաթիվ սպանություններ չեն կանխվել նրանց կողմից:

Սումգայթյան հանցագործության երկրորդ փուլը՝ այդ կոտորածի հետքերի վերացումն էր, որը կատարվեց շատ արագ և ոչ առանց կենտրոնի օգնության: Միութենական պաշտոնական լրատվական միջոցները շանք ու եռանդ չեն խնայում, որ տեղի ունեցածը ներկայացնեն մի խումբ խովհանների արարք: Հայերի ցեղասպանությանը Սումգայթում նման որակում տվեց նաև երկրի քաղաքական դեկապարությունը: Կատարվածին չտրվեց քաղաքական գնահատական: Իրականությունը թարցվեց երկրի ժողովրդից:

Հաջորդ փուլը կապված էր սումգայթյան ցեղասպանության դատավարության հետ: Որպեսզի չբացահայտվեն ցեղասպանության իրական կազմակերպիչները և հաստատվի պաշտոնական վարկածը, դատավարությունը աղճատվեց:

Խորհրդային Միության մի քանի քաղաքներում տեղի ունեցան առանձին դատավարություններ, որի արդյունքում մեղադրվեցին չարդերին մասնակցած մի քանի մարդ, իսկ իրական կազմակերպիչը՝ Ադրբեյջանի դեկապարությունը մնաց անպատճի: Այն, որ ցեղասպանության կազմակերպիչը Ադրբեյջանի կուսակցական և պետական դեկապարությունն էր, կասկածից վեր է: Դեռ մինչև դարաբաղյան դեպքերի ծավալումը, Ստեփանակերտում կայացած կոմկուսի մարզային բյուրոյի նիստում, Ադրբեյջանի կոմկուսի կենտրոնի բաժնի վարիչի տեղակալ Ասադովը հայտարարեց, որ 100 հազար ադրբեյջանցին ամեն րոպե պատրաստ է

մտնել Ղարաբաղ և սպանդ սարքել<sup>1</sup>: Փետրվարի 20-ից հետո Աղրեշանի հեռուստատեսությունը և ռադիոն աննախադեպ հակահայկական վայնասուն բարձրացրեցին, որին մասնակցում էին հանրապետության կուսակցական և պետական մի շարք գործիչներ:

Սումգայիթի հայության ցեղասպանությունը բռնեց իր քննությունը՝ անպատճելիության սիմեռոսը, նպաստեց հետագա դեպքերի զարգացմանը: Աղրեշանի տարրեր վայրերում հայերը սկսեցին հարձակման ենթարկվել աղրեշանցիների կողմից: Արդեն 1988 թ. մայիսին Ծովական կուսչոշկումի նախաձեռնությամբ սկսվեց հայերի բռնագաղթ քաղաքից: Սեպտեմբերին արյունալի դեպքեր տեղի ունեցան Խոջալու գյուղում, իսկ Ծովական ամբողջ հայ ազգանակչությունը վտարվեց քաղաքից:

Բնոնությունների հաջորդ ալիքը սկսվեց 1988 թ. նոյեմբերին:

Մասայական հարձակումների ենթարկվեցին Կիրովաբադի, Մինօքնասուրի, Շամսուրի, Խանլարի, Դաշենսանի, Վարդաշենի, Ծերի հայ ազգաբնակչությունը: Առավել ոժեղ հարձակման ենթարկվեց Կիրովաբադի հայությունը: Երկու շաբաթ շարունակ հայկական թաղամասի եկեղեցում հավաքված հայությունը դիմադրություն ցուց տվեց աղրեշանական ամբոխին: Քաղաք Մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, որոնք, նույնական ենթարկվելով հարձակման, ունեցան սպանվածներ և վիրավորներ: Նոյեմբերի վերջերին, դեկտեմբերի սկզբներին վերը նշված քաղաքների հայկական գյուղերի հայ ազգաբնակչությունը հարկադրաբար բռնեց զայթի ճանապարհից: Տեղահան արվեց Նախիջևանի վերջին հայկական Ազնաբերդ գյուղի բնակչությունը: Բնագաղթածների մեծ մասը չկարողացավ իր հետ դուրս բերել իր ունեցվածքը, և այն թալանվեց աղրեշանցիների կողմից:

Նոյնիսկ այդ ժամանակ կենտրոնը, չցանկանալով ըստոնել տեղի ունեցած երևոյթները, ձևական որոշումներ էր ընդունում բռնագաղթվածներին հետ վերադարձնելու իրենց բնակության նախկին վայրերը: Նոյնիսկ երկիր բարձրացույն հշխանության ժողովրդական պատգամավորների համագումարները ի զրոյ չեղան պրոբլեմին լուծում տալ: Կենտրոնի բռնաց հանդուրժողական դիրքը հայերի ցեղասպանության և բռնագաղթի նկատմամբ հանգեցրեց արյունահ ընդհարությունների թուրքմենիայում, Ֆերգանայում, Նոր Ուզենում և մի շարք այլ վայրերում: Դրանք բոլորը ապա-

ցուց էին, որ ազգային հարցը պահանջում է անմիջական և արագ լուծում:

Հայության հանդեպ բռնությունները Աղրեշանում շարունակվեցին 1989 թ.:

Հովհանոսոսոս ամիսներին նորից սկիզբ առավ մեծ բռնագաղթ: Աղրեշանում նորից սովորական դարձան հայ ազգաբնակչության ստվար զանգվածներին հայածելու, մինչև ուշագնացության աստիճան ծեծելու, հանակահարելու, խոշտանգելու դեպքերը: Այդ օրերին Կիրովաբադի հայկական թաղամասում հրկիզվեցին հայերին պատկանող հարյուրափոր տներ: Այս դեպքերը մոտեցրին 1990 թ. հունվարի 13-20-ը Բաքվում ժողովրդական ճակատը Աղրեշանի կառավարող շրջանների հետ ծեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը Աղրեշանում հայերի ցեղասպանությունը պարտին մոտեցնելու ամենավճռական փուլը եղավ: Խորհրդային Աղրեշանի կենտրոնական հշխանությունները դեռ էին նետել ինտերնացիոնալիստների դիմակները, հրահրում և ընթացք էին տալիս արյունահետություններին: Կազմակերպչական առումով Սումգայիթը զուր չէր անցել: Բաքվի հայության կոտորածը կազմակերպված էր նոյն եղանակով, ինչ որ դրան նախորդող ցեղասպանությունը: Եթե առաջին դեպքում 1988 թ. իրավապահ մարմինները չէին միջամտում բարբարոս ամբոխի գործերին, ապա այս դեպքում իրենք անմիջական մասնակցություն էին ցուցաբերում շարդերին:

Մեկ շաբաթ շարունակ երկրի պաշտոնական լրատվական միջոցները սկզբում թաքցնում, ապա կցկոտուր տևելեկություններ էին հաղորդում Բաքվում կատարվող հայերի ցեղասպանության մասին: Եթե Գորբաչովի հայտարարության համաձայն բանակը Սումգայիթ մտավ «երեք ժամ ուշացումով», տվյալ դեպքում այն Բաքը մտավ մեկ շաբաթ ու շացումով: Հարավոր է, որ բանակը նույնիսկ Բաքու չմտներ, եթե արյան ծարակից մոլեզնած ցեղասպան թուրքը չի աղրածակվեր քաղաքի ոուս ազգաբնակչության, զինվորական զորամասերի վրա և եթե անմիջական վտանգ չսպանար խորհրդային կազմերին՝ Աղրեշանում:

Այս անգամ նույնական պաշտոնական միջոցները փորձեցին կոծել հայության սպանդը և հայութարեցին, որ զոհվել են 100-ից ավելի հայեր: Ամենայն հայկանականությամբ, ինչպես Սումգայիթում, այնպես էլ Բաքվում զոհ գնացած հայերի թվաքանակը հնարավոր չէ պարզել:

Կոտորածը ուղեկցվում էր հրկիզվումներով և թալանով: Բաքվի հունվարյան կոտորածից հետո «ինտերնացիոնալ»

բաղաքը ազատվեց 200 հազար հայերից, որոնք ապաստան գտան Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում։ Բաքվի արյունալի դեպքերից հետո Ադրբեյչանի տարածքում հայ չմնաց։

ԽՍՀՄ տարբեր պաշտոնական ատյաններում ամփսեներ շարունակ քննարկվում էր ոչ թե հայերի ցեղասպանությունը Բաքվում, այլ խորհրդային զորքի մուտքը քաղաք և ընդհարումները ադրբեյչանցիների հետ։

1988-1990 թթ. հայերի ցեղասպանությունը Ադրբեյչանում մենք անգամ ևս ապացուցեց, որ պանիսլամիզմի և պանթուրիզմի գաղափարախոսությունը խոր արմատներ էր օգել հանրապետությունում։ Ականձ 1960-ական թվականներից մինչև հայտնի վերջին իրադարձությունները, Ադրբեյչանի գիտմականները մենքափոխելով հայոց և հարևան ժողովուրդների պատմությունը, յուրացնելով նրանց միջնադարյան մշակութային գործիչներին՝ երիտասարդությանը դաստիարակում էին պանթուրիզմի ոգով, հայկական և հարևան ժողովուրդների տարածքները համարում էին ադրբեյչանական։ Այսպիսով, զաղափարակես նախապատրաստվում էր «մեծ Ադրբեյչան» և Թուրքանի ստեղծումը։ Պատմական չէ, որ Ադրբեյչանը բարոյական, ֆիճանսական, ուազմական օգնություն է ստանում Թուրքիայից։ Թուրքական քաղաքական գործիչները ամեն կերպ օժանդակում են Ադրբեյչանի կայացմանը, որպես թուրքական համադաշնության մի օղակ։ Ադրբեյչանը, ինչպես 70 տարի առաջ, կարևոր տեղ է զբաղեցնում «մեծ Թուրքանի» ճանապարհին։ 1988 թ. թուրքական Միլլիեր թերթը գրում էր. «Մեզ համար կարևոր թուրքական դրոշների հայդրավելն էր վերջին ադրբեյչանական հանրահավաքներում։ Մեզ այլ թերթ նշում էր, որ ադրբեյչանցիները թուրքեր են, իսկ Ադրբեյչանում ձեռքից ձեռք է անցնում Մեծ Թուրքիայի քարտեզը։ Պանթուրիզմը ավելի վառ արտահայտություն գտավ Ադրբեյչանում ազգային ճակատ ստեղծելուց հետո։ Նրա դեկավարներից մեկը, Թուրքական Ալ Բայան թերթին տված հարցագրույցում ասաց, որ իրենց նապատակը ադրբեյչանական թուրքական դեմոկրատական հանրապետության ստեղծումն է։ Ազգային ճակատի հեռու գնացող նապատակների ապացուցն են նրանց առաջնորդների բազմաթիվ հայտարարությունները, որ պատմական (իրանական) Ադրբեյչանը իրենց տարածքն է։ Ազգային ճակատի զաղափարախոսներից մեկի հայտարարությամբ՝ Ադրբեյչանը,

Կիրգիզիան, Ղազախստանը, Բաշկիրիան, Պովոլյանն, Թաթարիան, Յակուտիան, Ղրիմը և Հյուսիսային Կովկասը թուրքական հողեր են, և իրենք այն որևէ մեկին չեն զիջել։

Ադրբեյչանում իրականացված ցեղասպանության գործում իր մեջքի բաժինն ունի ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, որը չկանխեց և գրեթե ոչ մի միջոց ձեռք չառավ հայությանը փրկելու։ Չորքերը միշտ հայտնվում էին այն պահին, եթե բարեւանդ ամբոխը պարտել էր իր գործը։

Անհեթեթ հայտարարությունները չեն կարող չծնել նոր հանցագործություններ։ Դեռ ավելին, սկսած 1991 թ. ապրիլի 30-ից, երեք ամիս շարունակ պետությունն ինքը զինված ուժերի միջոցով իրականացրեց հայության կոտորածն ու բռնազարդը Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանում և Արցախում։ 24 հայկական գյուղեր հայթափակեցին, զոհվեցին շատ մարդիկ։ Ամբողջ հայ-ադրբեյչանական սահմանի երկայնքով հարձակման ենթարկվեց նաև Հայաստանի տարածքը։ Այդ հարձակման ժամանակ զոհվեցին և գերեզվարվեցին իրենց հողը պաշտպանող պատամարտիկներ, միիցիցայի աշխատակիցներ, բազմաթիվ գյուղացիներ։ Դա արդեն ագրեսիա էր պետության կողմից։

Այսպիսով, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները, անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը.

1. Հայերի ցեղասպանությունը Ադրբեյչանում հանդիսանում է Թուրքիայում արևմտահայության ցեղասպանության շարունակությունը։

2. Հայերի ցեղասպանությունը Ադրբեյչանում կրել է շարունակական բնույթ և սպիտակ գեղոցիդի հետ մեկտեղ շարունակվել է ավելի քան 70 տարի։

3. Ցեղասպանության կազմակերպիչ են հանդիսացել Ադրբեյչանի մուսավաթական ապա նաև կոմունիստական կառավարությունները։ Հայության ցեղասպանությունը Ադրբեյչանում իրականացվեց պանթուրիզմի, համաշխարհային հեղափոխության, «սոցիալիստական ինստրանցիոնիզմի» կարգախոսների մեջը։

<sup>1</sup> Согласие, 1989, №18.

<sup>2</sup> Определение агрессии Генеральной Ассамблеей ООН от 4 декабря 1974г., с.5, п.1.

<sup>1</sup> Коммунист, 6 января, 1990г.

<sup>2</sup> Տես նույն տեղում։

<sup>3</sup> Տես նույն տեղում։

## ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱԳԵՑՅԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՂԵՌՆԸ ԱԴՐԵԶԱՆՈՒՄ

Երջանիկ են, բայց դա չեն գիտակցում աշխարհի այն ժողովուրդները, որոնք չունեն քաղաքակրթություններ կործանող հարևաններ: Հայ ժողովրդի բախտը այդ առումով չի բերել: Հանձին թուրքերի՝ արդեն մեկ հազարամյակ է (նրանց Հայկական լեռնաշխարհ ներթափանցելու օրից սկսած), ինչ Վտանգված է հայ մշակույթի գոյությունը: Ի ինի դա Բաղարերդում հրկիզված 10,000 մազարաթ, թե՝ Խծկոնքի պայթեցված վաճռ՝ միևնույն ոճն է: Օրինաչափություն է, որ որ թուրքն է, այնտեղ հայ մշակույթի կորուստն է, և տվյալ վայրում որքան շատ են նրանք, այնքան մեծ են մեր մշակութային ժառանգության կորուստների չափերը: Այդ տեսակետից Աղրբեջանի տարածքում մեր կորուստներն այքան էլ մեծ չեն, քանի որ համարյա ոչ մի շրջան մինչև Վերջերս զուտ թրքաբանակ չեն, բայց փոքր կորուստն էլ կորուստ է նոյնիսկ այնպիսի մեծաքանակ մշակութային ժառանգություն արարած ժողովրդի համար, ինչպիսին հայերն են:

Ավագ եղբոր՝ Թուրքիայի օրինակով, անցած տասնամյակների ընթացքում Աղրբեջանն էլ զավթած հայկական հողերը յուրացնելու հոլոսով ջանք ու եռանդ չի խնայել հայ մշակույթի բազմաբնույթի ու բազմադարյան կոթողները հողի երեսից շնչելու ու հետքերը անհնտացնելու ուղղությամբ:

Անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավերվող հուշարձանների թիվն ավելի է մեծացել, իսկ աշխարհագրական ընդգրկումը՝ ընդարձակվել: Զարդարարների ձեռքից զերծ չեն մնացել անզամ հայաբնակ տարածքներում գտնվող պատմական հուշարձանները, ինչպես օրինակ՝ ԼՂԻՄ-ի, Հյուսիսային Արցախի և Կուրի ձախափնյա հայաբնակ շրջաններում գտնվող շատ հնություններ: Առավելապես փրկվել են նրանք, որոնք գտնվում էին անմիջապես

հայկական բնակավայրում և բնակչության ամենօրյա հսկողության ներքո: Արդյունքում առավելապես տուժել են Հյուսիսային Արցախի (Մասնավորապես՝ Գետաբեկի և Դաշքյասանի շրջանները) և Աերկայիս ԼՂՀ-ին հարակից՝ ազատագրված շրջաններում (Քյալբաշար, Լաշին, Ղուբաթի, Զանգելան, Զաբրայի, Ֆիզովի, Աղդամ) գտնված պատմական հուշարձանները: Ոչնչացվող հայկական հուշարձանների շարքում առաջին տեղը բոնում էին հայերեն արձանագրություններն ու խաչքարերը, ապա վանքերն ու եկեղեցիները, այլ կերպ ասած՝ մշակույթի ակնհայտ քրիստոնեական շերտը, իսկ, օրինակ, հայկական կամուրջներն ու բերդերը, աղբյուրներն ու բնակելի կամ հասարակական կառուցցները գրեթե անվնաս են մնացել, քանի որ թուրքերի կարծիքով դրանք սեփականել ու աշխարհին թուրքական հայտարարելը դժվար գործ չէր:

Ուշագրավ է, որ պետական մակարդակով հայկական հուշարձանները քանինելու գործընթացը ոչ պատահականորեն զուգահիպեց միաժամանակ դրանք «աղվանական» հայտարարելու ճանապարհով յուրացնելու գործընթացին: Ակնհայտ է, որ թուրքերը իրենց իսկ ընդունած տեսությանը (այն է՝ հայկական հուշարձանները հայկական չեն, այլ թուրքերի քրիստոնյա նախնիների՝ աղվանների մշակույթը) չեն հավատում, այլապես «աղվանական վանքերի ու խաչքարերի» մասին գրքեր հրատարակելու հետ մեկտեղ այդքան եռաղագին չեն զրադի ավերածությամբ: Պարզապես հայ մշակույթի եղենը աշխարհի աշքից թաքցնելու համար էր միայն, որ հորինվեց «աղվանական» վարագություն:

1988 թ. Վերջերից պատմական հուշարձանների ոչընչացման գործընթացը աննախարեա չափեր ընդունեց: Օգտվելով պատերազմական իրավիճակից՝ թուրքերն այլևս հայոց եկեղեցիները սկսեցին կործանել ոչ թե պայթեցումներով, ինչպես զիսավորապես աշխատում էին մինչև այդ, այլ՝ թնանորային ու տաճկային համազարկերով, որոնց մեծ տրամաչափի արկերի պայթյուններին չեն կարող դիմակայել անգամ կրաշաղախ ամրակուն պատերը: Այսպիսի օրինակ, մի ակնթարթում փլատակների վերածնեց միանգամայն կանգուն ու անվնաս Եղիսաբետի վանքը՝ Գետաշեն գյուղի մոտ, Վերջինիս զավթման օրերին:

Ստորև Աերկայացվում է հայ մշակույթի առավել ակնառու կորուստների ցուցակը:

Մար գյուղի Գերեզմանատունը, որ բազմաթիվ էին ինչպես 13-15-րդ դարերում Դոփյան իշխանական տաճաներկայացուցիչների գերեզմաններին կանգնեցված կարևոր արձանագրություններ ունեցող խաչքարերն ու

տապանաքարերը (1236, 1274, 1289, 1484 թվականներ և այլն), այնպէս էլ 16-18-րդ դարերում մելիքության շրջանի շարք պատմական նշանավոր դեմքերի ու այլ հանգուցյալների հիշատակին կանգնեցված կոթողները (1511, 1549, 1676, 1717 թվականներ և այլն): 1950-60-ական թվականներին գյուղի հարավ-արևելյան եզրին կառուցված դպրոցի պատերի մեջ ագուցվել են իսպան ավերված պատմական ու խիստ ընդարձակ այս գերեզմանաւոնից տեղափոխված ու որպես սուկ շինաքար կտրուտաճրի վերածված խաչքարեր ու տապանաքարեր (մեր հաշվումներով՝ 133 բեկոր):

**Մար գյուղի Մայր եկեղեցին** 13-րդ դարի սկզբի շնորհյան էր: 19-րդ դարի վերջին կիսավեր էր: Նոյն դրույթին մեջ էր մինչև 1950-ական թվականների վերջը: Այժմ հետքն իսկ չկա:

**Մար գյուղի Սբ. Սարգիս եկեղեցին** կառուցվել էր 1274թ.-ին և միանգամայն անվանա ու կանգուն էր մինչև 1950-ական թվականների վերջը: Այժմ հիմնավեր:

**Գետամիջոց Վանքը** գտնվում էր Տրտու գետի ձախ ափին, Մարի հարավային ստորոտում: Հիմնադրվել է 1301թ.-ին: Քանդել են 1960-ական թվականների սկզբներին և քարերով կառուցել մի քանի բնակելի տուն ու Զրադարձի դպրոցի շենքը: Վերջինիս պատերի մեջ դեռևս նկատվում են մի արձանագրությանը պատկանող 22 բեկոր:

**Անանուն Վանք**, ըստ ամենայնի 12-13-րդ դարերի կառուց: Գտնվում էր Տրտու և Մար գետերի միախառնման տեղում: Նոյնպէս հիմնավեր է: Քանդել են 1950-60-ական թվականներին:

**Անանուն Եկեղեցի**, որը, ըստ շուրջը պահպանված գերեզմանատան խաչքարերի ու եկեղեցու հորինվածքային առանձնահատկությունների, կարելի է թվագրել 12-13-րդ դարերով: Գտնվում է Քյալքաջարի շրջանի Ղամշի գյուղի երկու կիլոմետր հարավ-արևմուտք: Պայթեցվել է 1983թ.-ին:

**Խաչքարերով գերեզմանոց**, 12-13-րդ դարեր: Գտնվում է Աղոյայ գյուղի եզրին, բլրի վրա: 1970-80-ական թվականներին տեղահանվել ու կոտրատվել են գրեթե բոլոր խաչքարերը:

**Եկեղեցի**, 1304 թ., գտնվում էր Մարզումակ (պատմական Մրջման) գյուղի եզրին: Քանդել են 1980-83թթ. բնաթացքում: Այժմ միայն կրաշաղախ հիմքերն են նկատվում: Ըստ վաղուհասի հայերի վկայության մինչ այդ եկեղեցին միանգամայն կանգուն էր:

**Խաչքարերով գերեզմանոց**, 12-14-րդ դարեր: Գտնվում է նոյն եկեղեցու շրջակալիքում: Հիմնավորապես անհետացվել է 1980-82 թթ.-ի բնաթացքում:

**Եկեղեցի**, 13-րդ դար: Գտնվում է Մարզումակ գյուղի մեջ կիլոմետր հյուսիս-արևմուտք: Նոյնպէս ավերել են 1980-ական թվականների սկզբին: Քարերը փոխադրել են գյուղ և օգտագործել բնակարանային շինարարության մեջ: Տեղում կրաշաղախ հիմքերի մնացողիներն են:

**Սբ. Աստվածածնա Վանք**, 12-18-րդ դարեր: Գտնվում է Տրտու գետի աջ ափին, Դադի վանքից 2.5 կիլոմետր գետի հոսանքով վեր, այնտեղ, որ Տրտուին է միախառնվում Խաձորի վտակը (Ճախից): Իբր «աղվանական» այս վանքի մասին մի հորված էր հրապարակել ուն Թոփիկ Աբդովական՝ 1982թ.: Հիմք ընդունելով վանքի 3 եկեղեցիների, գավիթների ու գերեզմանատան խաչքարերի վրա պահպանված 13 միավոր պատմական կարևոր (բնականաբար՝ հայկական) արձանագրությունները՝ մեր պատախան հորվածը լույս տեսավ 1989 թ., որով և ապացուցվեց, թերևս ապացուցելու կարիք չունեցող մի հանգամանք, որ վանքը հայկական է և ոչ թուրքերի «քրիստոնյա ճախճիների» կառուցածը: Դեպքերի բերումով հնավայրը վերստին այցելելու հնարավորություն ունեցանք միայն տարածքի ազատագրումից հետո՝ 1993թ., իսկ պատկերը զարդուրելի էր: Պարտությունից զազազած թուրք «գիտնականները» իրենց սիրտը հովագրել էին վանքի տարրեր շինությունների որմերից բոլոր վիմագրերը թերել-շնչելով: Ոչնչացված էին 1174 և 1178 թվականների երկու շինարարական և բազմաթիվ նվիրատվական բովանդակությամբ արձանագրությունները: Անհետացրել էին արևելյան կողմուն, մատուուի մուտքի առջև կանգնած 1195 և 1248 թվականների երկու գեղաքանդակ խաչքարերը, և կատարվել էին մի շարք այլ պեղումներ:

**Դադի Վանք**, 1-20-րդ դարեր: Վանական համալիրը շուրջ 2000 տարի շարունակ պարբերաբար հարստացվել ու լուցվել է զանազան պաշտամունքային ու աշխարհիկ շինություններով: Գլխավոր Կաթողիկե եկեղեցին 1214թ.-

<sup>1</sup> Տես «Թուրքական դպրոց ... Հայկական խաչքարերից», ՀՀ, 1995, թիվ 49, 10 մարտ, էջ 2:

<sup>2</sup> Տես «Մի արձանագրության հետքերով», «Ազատամարտ» 1994, թիվ 44, էջ 4:

ի գմբեթավոր-սրահ հորինվածքով կառույց է: Արա հարավային որմից 2-3 մետր հեռավորությամբ 1970-ական թվականներին Բաքվի «գիտնականները» շուրջ 3 մետր խորությամբ մի ընդարձակ փոս փորեցին, որն անցնող տարիների մեջ պիտի հողի հատվածի ու ստղածքի պատճառ դառնաւ պիտի հողի հատվածի ու ստղածքի ստեղծելով եկեղեցու հանար՝ կործանման պայմաններ ստեղծելով եկեղեցու համար՝ Ու թեն առ այսօր եկեղեցին կանգուն է, բայց հարավային ու արևելյան ճակատներում ամբողջ բարձրությամբ խորացել են վտանգավոր ճաքեր:

**Անանուն վաճք**, 13-րդ դարի կառույց է: Գտնվում է Քաշարադի (Ամակին՝ Լաշին) շրջանի Արդիվոր և Քյուրդ-Հաջի գյուղերի միջև: Պայտեցվել է 1983թ.:

**Եկեղեցի**, 16-17-րդ դարերի կառույց էր: Գտնվում էր Եկեղեցի, 16-17-րդ դարերի կառույց էր: Գտնվում էր Քաշարադի շրջանի ՌԱՆԱՆՈՎ գյուղից 1 կիլոմետր հյուսիս: Բանդել են 1982-83թ.:

**Դարպաս**, 1613թ.: Գտնվում է Քաշարադի շրջանում, հոչակավոր Միծեռնավանքի մոտ: 1989-92թ.-ի ընթացքում ավերել են դարպասի նորոգման արձանագրությունները (1613թ.) կրող հատվածը:

**Գերեզմանց**, 12-20-րդ դարեր: Գտնվում էր Քաշարադի շրջանի Ներքին Փարաջան (պատմական՝ Հարար) գյուղի հարավ-արևմտյան ծայրին: 1970-80-ական թվականներին գերեզմանցի տարածքի մեծ մասը բռնդողերներով ավերել են և տեղում անասնապահական համալիր կառուցել: Ներկայումս երբեմնի ընդարձակ գերեզմանցից միայն 3 արձանագիր շիրմաքար է մնացել:

**Գերեզմանց**, 16-20-րդ դարեր: Գտնվում է Քաշարադի շրջանի Մինքյան (պատմական՝ Մննի) գյուղի հարավ-արևմտյան ծայրում, եկեղեցու շուրջ: Անհետացվել են բոլոր շիրմաքարերը:

**Աղբյուր**, 16-17-րդ դարեր: Ընդհանրապես թուրքերը հայկական աղբյուրները չեն քանդել, որովհետև դրանց շնորհիկ էին ապրում, բայց աչքներից չեն վրիպում աղբյուրների շինարարական արձանագրությունները, որոնք նորած կանոն քերում, ջնջում էին: Այդպես են վարդել Զանական շրջանի Դարա-Գիլյարադ գյուղի աղբյուրի նովի ճակատին փորագրված արձանագրության հետ, որից սակայն մի քանի տառ փրկվել ու ընթերցվում է:

**Եկեղեցի**, 16-17-րդ դարեր: Գտնվում է Զանգելանի շրջանի Սորու գյուղի մոտ՝ Թարճայուտ (պատմական՝ Ղոնակերտ) գյուղատեղուու: Հստ Կապանի ներքին Հանդականից Հայկ Հովհաննիսյանի վկայության՝ եկեղեցին մինչև 1980-ական թվականները դեռևս գյուղություն ուներ և աչքի էր ընկնում իր ընդարձակությամբ: Այժմ հետքերը հազիվ են ԶՄԱՐՎՈՒՄ:

34

**Գերեզմանոցներ**, 12-18-րդ դարեր: Մեկը գտնվում է Զանգելանի շրջանի Մազղադա գյուղի հարավային եզրին, մյուսը՝ այդ և թուի գյուղատեղերի միջև: Երկուսն եւ ավելվել են 1989-93 թվականների ընթացքում:

**Խաչքար**: Գտնվում էր Զանգելանի շրջանում, Թոփ գյուղատեղի միջնադարյան կամրջի մոտ: Անհետացվել է 1989-93 թվականների ընթացքում:

**Գերեզմանց**, 18-20-րդ դարեր: Գտնվում էր Զանգելանի շրջանի մինչև 1967թ. հայաբնակ Ղարաբարա (Տանձարափա) գյուղի եկեղեցու շուրջ: Ավելվել է 1989-93 թվականների ընթացքում:

«**Օհանա եղծի**», Զանգելանից հյուսիս, Սուսանարանտառապատ լեռնաշղթայի վրա, Գրիմ բերդի հարևանությամբ գտնվող միջնադարյան այս եկեղեցին պայթեցվել է վերջին տարիներին:

**Անանուն եկեղեցի**, 1641թ.: Գտնվում է Ղուբարիի շրջան Վերին Ջիբիլի գյուղում: Բանդել են եկեղեցու արևմտյան ու արևելյան պատերը և այդ կողմերից եկեղեցու մեջ տարիներ շարունակ լցրել գյուղի աղբը:

**Եկեղեցի**, 12-13-րդ դարեր: Գտնվում է Զարբրայիի շրջանի հին թուման գյուղում (Դաղ-Թուման): Այստեղ եկեղեցին քանդել են 1970-ական թվականներին, իսկ քարերը օգտագործել դպրոցի շենքի սանդուղքների մեջ:

**Վանքասարի եկեղեցի**, 6-7-րդ դարեր: Խաչաձև գմբեթավոր հազվագյուտ շինություն է, որը վերականգնելու պատրկակով միանձամայն այցախոյվեց 1980-ական թվականների կեսերին: Գտնվում է Աղդամի շրջանում: Այստեղ պահպանված միակ խաչքարն էլ փոխադրել էին Աղդամի, այսպես կշշած քարեղարան-բացօթյա թանգարան, որը հայկական, պարսկական նաև խազարական գերեզմանաքարերի հետ մեկտեղ ներկայացնում էին որպես «աղվանական» հուշարձան:

«**Կապաք**» վաճքի եկեղեցի, 1741թ.: Գտնվում է Ֆիզուլու և Հադրութի շրջանների սահմանագլխին: 1989-93 թվականների ընթացքում տեղահան են արել ու կուտրել եկեղեցու շինարարական արձանագրությամբ բարակորը:

**Եղնասարի վաճք**, 12-13-րդ դարերում հիմնված ու 18-րդ դարում վերականգնված վաճական համալիր, որի եռանակ բազիիկ հորինվածքով եկեղեցին կործանվեց 1991թ. մայիսի սկզբին՝ թուրքական տանկից արձակված արկի պայթյունից:

**Խուճիսավանք**, 9-10-րդ դարեր: Հյուսիսային Արցախի տարածքում սակավ հանդիպող հորինվածքներից է

<sup>1</sup>Տես «Մի խաչքարի հետքերով», «Ազատամարտ», 1994, թիվ 47, էջ 13:

(խաչաձև-գմբեթավոր, միախորան): Գտնվում է Գետաբեկ շրջկենտրոնի մոտ: Սրա ութանիստ թմբուկը 1983 թվականի ընթացքում քանդել էին: Ի դեպ, դրանից հետո այլևս չենք տեսել, իսկ տպակորությունն այնպիսին էր, թե եկեղեցին քանդման ընթացքում էր, քանի որ աշխատանքային գործիքներ՝ բաներն ու քլոնգները տեղում էին:

**Եկեղեցի,** 9-11-րդ դարեր: Գտնվում է Գետաբեկի շրջանի Փոլաղլու գյուղի եզրին: Քանդել են եկեղեցու առևտույան ճակատը և օգտագործում են որպես գյուղի ընդհանուր աղբանոց:

**Կոթող,** 5-7-րդ դարեր: Գտնվում է գյուղի արևմտյան եզրին: Վերջին անգամ տեղում ընկած վիճակով տեսել ենք 1981թ., իսկ 1983թ. այն անհետացված էր: Տեղացիների վկայությամբ իբր փոխադրել էին Բարքի թաճարան:

**Խաչքար,** 1624թ.: Գտնվում էր Գետաբեկի շրջանի Մեծ Ղարամուրատ գյուղի մոտ, Խամշի վանքում: 1983թ. այն ջարդութել էին՝ վերածելով մի քանի բեկորի:

**Եկեղեցի,** 16-րդ դար: Գտնվում է Փոքր Ղարամուրատ գյուղի մեջ: Մի բոլորի կողմից քանդվել են պատերը, մնում են միայն արեւյան ճակատն ու մնացած մասերի հիմնապատերը: Ներսը վերածված է բանջարանոցի:

**Եկեղեցի,** 16-17-րդ դարեր: Գտնվում է մեծ Ղարամուրատ գյուղում: Քանդել են եկեղեցու արևմտյան և հարավյան մասերը: Պահպանվում են միայն խորանի և հյուսիսային ավանդատան մնացորդները: Տարածքի մի մասում քանակելի շենք է կառուցված:

**Զարեթավանք,** 17-րդ դար: Գտնվում է Գետաբեկի և Դաշքյասանի շրջանների սահմանագլխին Ծամսոր գետի ձախ ափին: Վանական խոշոր համալիր է՝ բազմաթիվ կառույցներով: Դրանք բոլորը թուրքերի կողմից 1980-89թթ. օգտագործվում էին որպես անասնապահական համալիր, իրենք էլ մեջն էին բնակվում:

**Եկեղեցի,** 9-11-րդ դարեր: Գտնվում է Գետաբեկի շրջանի Ղալաքյան գյուղում, որ Փառիսոս քաղաքատեղի մնացորդներն են: 19-րդ դարի վերջին այստեղ 12 եկեղեցիներ կային, բոլորն էլ՝ 9-11-րդ դարերի կառույցներ: Այժմ միայն մեկը կա՝ կիսավեր, որը թուրքերը օգտագործում են որպես գուգարան:

**Եկեղեցի,** 9-11-րդ դարեր: Գտնվում է Բանանց գյուղի (Դաշքյասանի շրջան) 8 կիլոմետր հարավ: 1986-87թթ. բոլողգերներով մաքրել ու լցրել են ձորը:

**Կամուրջ,** 12-13-րդ դարեր: Բանանց գյուղի մոտ: Երկարգծի շինության ժամանակ քանդվել է պայտեցումների հետևանքով:

**«Ղրմրադա կարմիր եղցի»,** 9-10-րդ դարեր: Գտնվում է Չովդար և Փիբ գյուղերի միջև (Դաշքյասանի շրջան): 1982-83թթ. քանդել են եկեղեցու մուտքը, տապալել հոկայական բարակորը:

**Եկեղեցի և գերեզմանոց,** 17-18-րդ դարեր: Գտնվում է Դաշքյասանի շրջանի ներկայիս Խաչբուղադ գյուղի տարածքում: Հիմնավորակն քանդել են 1970-ական թվականներին շրջանային դեկավարության կարգադրությամբ (գլխավոր քարտուղար՝ Ասադով):

**Եկեղեցի,** 16-17-րդ դարեր: Գտնվում է Դաշքյասանի շրջանի, Ցնծահայ գյուղում: 1960-ական թվականներին հիմքից քանդել են ու տեղում դպրոց կառուցել: Նույն գյուղի ավերված գերեզմանատան տապանաքարերը դպրոցի մուտքին հարմարեցված են որպես աստիճաններ:

**Մատուռ,** 12-13-րդ դարեր: Գտնվում է Դաշքյասանի շրջանի Քյոլլո գյուղի տարածքում, 3 կիլոմետր հյուսիսի արևելք: 1970-ական թվականներին պայթեցվել է ու վերածվել փլատակների:

**Եկեղեցի,** 16-17-րդ դարեր: Գտնվում է նույն շրջանի Գյաղամիշ (հնում Գետամեց) գյուղում: Բացի հյուսիսային պատից՝ մնացած քանդել են վերջին տարիներին:

**Եկեղեցի,** 17-րդ դար: Եկեղեցին փլուզելու նպատակով 6 սյուներից 2-ը խապա քանդել ու կտրել են հողից: Զանազան այլ հատկանիշներում ևս ավերումներ են կատարել: Գտնվում է Դաստափոր գյուղում:

**Եկեղեցի,** 11-12-րդ դարեր: Գտնվում է Կիրանց գյուղի մոտ: Բարձր էլեկտրահանորդման սյուն կանգնեցնելու պատրվակով եկեղեցին հիմնավեր են արել 1970-ական թվականների վերջին:

**Գերեզմանոց,** միջնադար: 1970-ական թվականներին բոլոր տապանաքարերը տեղափակ են արել և լցրել մոտակա գետակը՝ Ամրվար գյուղում:

**Եկեղեցի,** 16-17-րդ դարեր: Ծոջենատրոն Դաշքյասանի եկեղեցին հիմքից քանդել են և տեղում բացել շուկա:

**Եկեղեցի,** 17-րդ դար: Գտնվում է Վ. Քարհատ գյուղի մոտ: Քանդել են հանքավայրերի շահագործման պատրվակով՝ 1970-ական թվականներին:

**Եկեղեցի և գերեզմանոց,** 13-րդ դար, Հաջիեն գյուղի 2 կիլոմետր արևմուտք, խիտ անտառի մեջ: Եկեղեցին քանդել, իսկ գերեզմանոցը տակնուվար են արել:

**Հայրենական պատերազմում գոհվածների հիշատակին կառուցված հուշարձան:** Գտնվում է Բանանց գյուղի եզրին: 1969թ. մի գիշերվա մեջ քանդել են շրջանային դեկավարության կարգադրությամբ: Գործը դատական

ընթացք է ստացել, բայց մեղավորները չեն պատժվել (հուշածանի հեղինակ՝ ճարտարապետ Ռ. Խորայելյան):

Սր. Սարգսիս Եկեղեցի, 17-րդ դար: Գտնվում է Գանձակ (Գյանջա) քաղաքում: 1980-ական թվականներին կատարվել են «վերանորոգումներ»: Արդյունքում Եկեղեցին կամության պահպանության մեջ է առնվազագույն դաշտարարություն ունեցող հայկական տաճար:

Գերեզմանոց, 12-18-րդ դարեր: Այս գերեզմանատան մակերեսը ենթարկվել է մասնավոր հողաբաժանման (քաղաքային խորհրդի որոշմամբ) ու այդ կերպ ավերվել:

Գերեզմանոց, 18-19-րդ դարեր: Գտնվում էր Բաքվում: Այն ավերել, իսկ շիրմաքարերն օգտագործել են «Հնատուրիա» հյուրանոցից մինչև Կիրովի անվան գրոսայգին տանող ճանապարհի սանդուղքների շինարարության մեջ:

Թուրքերն այժմ հավանաբար իհսուս գրաղված են, իրենց կոչման համեմատ անհախաղեաց մեծ ծավալի «աշխաղման» կատարելու: 2Է՞՞ որ դեռևս իրենց ձեռքին են տանք» ունեն կատարելու: Հայութեաց մասին աշխաղման մասին ողջ Հյուսիսային Արցախն ու Կորիի ծափակողման նախկին հայահոծ շրջանը (Էլ չենք խոսում Բաքվի մասին), որտեղ պիտի ցրիկ տան հարյուր-հազարավոր հայոց շիրմաքար պիտի ցրիկ տան հարյուր-հազարավոր հայոց շիրմաքարեր, հողին պիտի հավասարեցնեն բազմաթիվ Եկեղեցիներ ու սրբավայրեր:

Այսուհետեղ հիմնա թուրքն է, ուրեմն ամեն ինչ կավերվի, իսկ կատարված ոճրի մասին ցավոք կիմանանք շատ ուշ, այնպես ինչպես մինչև 1993 թ. զգիտեինք, թե ինչ շատ ուշ, այնպես ինչպես մշակույթի հուշարձանները Քյալբաջարում կամ Ղուբրաթիում, Զանգելյանում կամ Աղդամում: Իսկ այն, ինչ կատարել է թուրքը ազատագրված շրջաններում իր տիրապետության օրերին, ոճիր է ոչ միայն հայերին, այլև ընդհանրապես մարդկության հանդեպ, քանի որ այն ամենը, ինչն այլևս ջնջված է հողի երեսից, իրավամբ համաշխարհային քաղաքակրթության մաս էր կազմում:

## ՀՈՎԻԿ ԳՐԻ ԳՈՐՅԱՆ

### ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԵՎ (19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ - 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻՖԲ)

19-րդ դարի վերջին, հայ ազգային-ազատագրական շարժման բուն վերելիքի պայմաններում, երբ այդ շարժումը թևակոխում է զինված պայքարի ժամանակաշրջանը, ծնունդ է առնում և հայուկային շարժման կողքին ազատագրական պայքարի տարածված միջոցներից մեկը դառնում ահաբեկչությունը: Երևակյութ, որը որոշակի ընդմիջումներով շարունակում է մենակ 20-րդ դարի հայ կյանքի անբաժան ուղեկիցը, ժամանակ առ ժամանակ իր արձագանքներով հուզելով աշխարհը, ստիպելով բարձրաձայն խոսել իր, որպես գործոնի, գոյության մասին: Խ՞ոչ էր հայկական ահաբեկչությունը՝ հայկական կոմկրետ միշավայրում ծնված և ազատագրական շարժման կարիքներով թեկադրված պայքարի որոշակի միջոց՝, թե՝ Արևմուտքի 19-րդ դարի հեղափոխական շարժումների բովում ծնված և հայկական միշավայր ներմուծված մի անձանոթ դեղամիջոց՝ իր անկանխատեսելի հետևանքներով: Նպատակահարմա՞ր էր այն, որպես պայքարի միջոց, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ, հատկապես արևմտահայ, իրականության համար: Կարո՞՞ էր այն ազգային կենսական պրոբլեմների լուծման միջոց հանդիսանալ: Որո՞նք էին նրա կիրառման թուլարելի սահմանները հայ ազատագրական պայքարի պրոցեսում: Արդյո՞ք այն բավարար զգուշությամբ օգտագործվեց ազատագրական պայքարի գլուխ կանգնած ուժերի կողմից: Այս և նման այլ հարցեր այսօր էլ սպասում են պատասխան:

1877-78թթ. ոսու-թուրքական պատերազմից հետո հայկական հարցի միշազգայնացումը հույսեր է ներշնչում հա-

յությանը, որ հայկական բարենորոգումների ծրագրի հրագործությունը կիանցեցնի հայկական ինքնավարության, իսկ ապագայում նաև անկախ պետության ստեղծմանը: Իր հերթին, զրկվելով Եվրոպական տիրությունների մեծագույն մասից, Օսմանյան կայսրությունն ավելի ամուր է կառչում ասիական համագներին, աշխատելով թուլ չտալ այստեղ նոր Բուլղարիայի ստեղծումը: Այդ խնդրի լուծման ամենահետագ ուղին համարելով հայության բնաշնչումը և դեռևս 1870-ական թվականների վերջին այն հոչակելով պետական քաղաքականությունը՝ թուրք կառավարողները գործողության մեջ դրեցին վարչական, ժողովրդագրական, հարկային և այլ միջցառումների մի ամբողջ համակարգ՝ նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի հայաթափումը: Խոչ 1890-ական թվականների կեսերին հայ ազատագրական շարժման դեմ պայքարի պրոցեսում սովորան Աբդով Համիդի օրինությամբ գործողության մեջ է դրվում արևմտահայության բնաշնչման ծրագրը:

Բարենորոգումներն իրականացնելուց թուրք կառավարողների հրաժարվելով, նրանց կողմից ցեղասպանությունը պետական քաղաքականություն հոչակելով և այդ խնդիրների նկատմամբ մեծ տերությունների կրավորական կեցվածքը իրենց կնիքը են դնում հայ ազատագրական շարժման վրա: Նրանում տիրապետող է դառնում «Երկարեւ շերեփի» զաղափարը: 1880-ական թվականների վերջից սկսվում է հայ ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի շրջանը: Արևմտահայ ազատագրական շարժումը դեկավարելու և ուղղություն տալու համար հանդես են գալիս հայ քաղաքական կուսակցությունները:

Նման պայմաններում անվերապահորեն հեղափոխության և ապատամբության հետ է կապվում արևմտահայ զանգվածների ազատագրումը և նրանց քաղաքական իդաների իրականացնումը: «Դա իր արտացոլումն է գտնում Առորակազմ կուսակցությունների՝ հնչակյանների և դաշնակցության ծրագրերում: Ազատագրական պայքարի ուղղություններ բնականաբար առաջադրում է նաև պայքարի միջոցների հարցը: Հայ ազատագրական շարժումը որոշումների անհրաժեշտությունը չզգաց, քանի որ աչքի առաջ էին բալկանյակ ժողովուրդների ազատագրական պայքարի թարմ օրինակները և դրանց ակնհայտ արդյունքները՝ ի դեմս Բալկանյան նորակազմ պետությունների: Բալկանյան հեղափոխական կազմակերպությունների և ուսական

«Նարոդնայա վոլյա» կազմակերպության կողմից մշակված և նրանց պայքարի գործնականում փորձված մեթոդներն են, որ հարմարեցվում են արևմտահայ իրականության պայմաններին: Հայորության կողմերը, զինված ապատամբությունները, հնքնապաշտպանական մարտերը, արշավանքները, ասպատակությունները, ահարեւկումներն ու ցուցերը հայ ազատագրական շարժման կողմից որդեգրվում են որպես թուրքական բռնապետության դեմ պայքարի հիմնական ձևեր, հոյս ունենալով, որ դրանց ծավալումն ի վերջո կիանցեցնի ընդհանուր զինված ապատամբության և հայկական հարցի դրական լուծման: Հայորությունը ու ահարեւկի դառնում են ազատագրական պայքարի գործուն անձերը: «Ստեղծ հայորություն նոյնանիշ են,- գրում է Մ. Վարանդյանը, Երևան տարիներ հայ ազատագրական շարժումը կ'ամփոփի էր այդ երկու գաղափարներու մէջ: Հայորությունը և տերրորիստը կոչուած էին այդ շարժման ծամբան հարթեցու, անոր ընթացքը դիրացնելու երկրի մէջ և երկրն դուրս:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին հայ ազգային-ազատագրական շարժման մեջ զինված պայքարի միջոցներից մեկն է դառնում ահարեւկությունը, Երևոյթ, որը մեր իրականության մեջ արժանացել է ամենատարբեր ու հակասական զնահատականների՝ անքնաղատ հիացմունքից միանչ բացարձակ ժխտական վերաբերմունքը:

Ահարեւկությունը որպես զինված պայքարի միջոց որդեգրվում է ազգային կուսակցությունների կողմից և տեղգրավում նրանց ծրագրերում կուսակցությունների ստեղծման պահից սկսած: Հնչակյաններն այն համարում էին թուրքական բռնապետության դեմ պայքարի արդյունավետ միջոցներից մեկը: «Տեղորական գործողութիւնն, իբրև պատիժ թիւրք բռնաւորներին, որպէս և լրտեսներին, մատնիշներին, դաշնամաններին, - ազդարարում էր հնչակյան ծրագիրը, - Տեղոր պետք է լինի յեղափոխական կազմակերպութեան ինքնապաշտպանութեան միջոց և հասարակութեանը բռնաւորների ու վատերի գործերից պաշտպանելու համար մի գենը:»

Նույն ողով է արտահայտվում նաև դաշնակցության ծրագիրը: «Կոի մելի և ահարեւկի կառավարութեան պաշտոններն, մատնիշները, դաշնամանները, վաշխառուները և ամեն տեսակ հարստահարիչները... Կառավարութեան

<sup>1</sup> Միքայէլ Վարանդեան, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 176-177:

Մրագիր հնչակեան կուսակցութեան, էջ 10:

<sup>1</sup> Տե՛ս Մրագիր հնչակեան կուսակցութեան, Լօնդոն, 1897, էջ 10, Մրագիր Հ.Յ. Դաշնակցութեան, Ժընեվ, 1906, էջ 11:

հիմնարկութիւնները ենթարկել աւերումներու և կողոպ-տումներու» - ասվում էր Օրանում: Թեև պես է խոստովա-նել, որ կուսակցությունների ծրագրերում ահարենչությունը որպես պայքարի միջոց միայն ընդհանուր գծերով էր Շեր-կայացվում: Միայն հետագա տարիներին, պատագրական պայքարի պրոցեսում ու նրա դասերի ազդեցությամբ որոշ շակիրուն ճշգրտվում են ահարենչության առանձին ձևերի կիրառման նպատակահարմարության և այլ հարցեր:

Ինչ՝ արդյունք է հայ ահարենչությունը: Այն օտար (ոուս նարոդիկների) փորձի սոսկ մեխանիկակա՞ն, անըննադա՞տ կիրառումն էր հայ իրականության մեջ՝ մեր ժողովրդի, հատկապես արևմտահայության համար իր ծանր հետևանքներով, ինչպես պնդում են առանձին հեղինակներ,<sup>2</sup> թէ՝ օրինաչափ ծնունդը 19-րդ դարի վերջի հայ-կական միջավայրի, բնական պատասխանն այն բռնությունների, ճնշումների ու հարստահարությունների, որոնց ենթարկվում էր հայությունը Օսմանյան կայսրությունում: Հարավոր չէ Ժմանել հայ ազգային կուսակցությունների և նրանց ծրագրերի ազգակցությունը նարոդիկական գա-ղափարախոսության հետ: Անառարկելի են նաև նրանց մի-ջև եղած սերտ կապերը: Ի վերջո հայ քաղաքական կու-սակցությունների շատ հեկավարներ պարզապես դաս-տիարակվել և որպես հեղափոխականներ ձևավորվել են ցարիզմի դեմ «Նարոդնայա Վոլյա»-ի մոլած հերոսական պայքարի անմիջական ազդեցությամբ: Բնական էր, որ այդ հեղափոխական դաստիարակությունը, պայքարի ձևերն ու մեթոդները և մասնավորապես ցարիզմի դեմ ահարենչա-կան պայքարի փորձը, չպետք է դեն նետվեին և պետք է այս կամ այս չափով օգտագործվեին հայ պատագրական պայքարի գործնականում: Ալյօնով հանդերձ, կարծում ենք, ճիշտ չէ քաղաքական կուսակցությունների, հատկա-պես դաշնակցության կողմից ազգատգրական պայքարի պրոցեսում իրականացված ահարենչական գործունությունը բռնութագրել որպես նարոդիկության փորձի սոսկ մե-խանիկական կիրառություն:

Նախ՝ նարոդիկական ահարենչությունն ուներ հատակ արտահայտված սոցիալական ուղղվածություն և երկրորդ ունենալով հարձակողական բովանդակություն, այս ի վեր-ջո նպատակ էր հետապնդում փոխելու Ռուսաստանի քա-ղաքական համակարգը: Մինչդեռ ահարենչությունը հայ ի-

րականության մեջ հետապնդում էր ազգային-ազատագորա-կան խնդիրներ, և, որպես կանոն, սահմանափակվում ինք-նապաշտանության ու վրիժառության շրջանակներում:

Դարեր շարունակ Օսմանյան կայսրությանը բնորոշ են եղած հպատակ ժողովուրդների հարստահարումն ու կողո-պուտը, համբարձիանոր կաշառակերությունը, օրենքի, կարգ ու կանոնի խապա բացակայությունը: Աբդով Համիդի գա-հակալության տարիները գալիս են ավելի ծայրահետ դարձ-նելու գոյություն ունեցող իրավիճակը: Հպատակ ժողո-վուրդների ազատագրական պայքարին որպես պատա-խան տիպական են դառնում զանգվածային շարդերը, Մաս-սայական սպանություններն ու խծնությունները: Օսման-յան կայսրությունը վերածվել էր բացահայտ ոստիկանա-կան պետության: Համատարած բանտարկությունները, աք-սոր ու կախաղաները: Ամենուրեք վխուում էին ամենազոր սուլթանի բարեհանությունը վայելող լրտեսներն ու մատ-նիչները: Հայերի համար, այս բոլորից բացի, չարիք են դառնում նաև քրդերից հավաքագրված համիդին գորագնդերը: Իր ձեռքում կենտրոնացնելով ամենազոր պատժի լակները՝ Աբդով Համիդը վարում էր բացահայտ ահարենչական բաղադրականություն հպատակ ժողովուրդ-ների, հատկապես հայության նկատմամբ՝ խեղինով ոնդ-դիմության ամենաչնչին փորձն անգամ: Թուրքական մղձա-վանցի այդ մթնոլորտում էլ ծնունդ է առնում հայկական ա-հարենչությունը, որպես ժողովրդական վրեժինդիր պողո-կումի արտահարակություն: Օտար հողի ծնունդ և խաղաղ պայմաններում հայ կյանքին միանգամայն խորթ ու օտար ահարենչությունը բռնության ու հալածանքի օրերին դառ-նում է հայության համար անհուսափելի ու նպատակահար-մար գործնակերպ: Վրեժի ու հատուցման գգացում, ազա-տության ծարավ, ունակոխ, անարզված արդարության պահանջ՝ ահա նրան սնուցող ակունքները: Դրանք էին, որ ուժ ու համարձակություն տվեցին երեւնմէի ստրուկ ու խո-օարի զանգվածներին, որոնց շարքերից շարան-շարան դուրս նետվեցին ժողովրդական վրիժառուները՝ իբրև ահա-րենչության անվեհեր մարմնացնողներ: Հայ վրիժառուն սառնասիրու մարդասպան չէի, այլ գաղափարապաշտ զիմ-վոր, որ պատրաստ էր գնալ ստուզ մահվան՝ հանուն ազ-գային իդեալների իրականացման և ուսնահարված իրա-վունքների վերականգնման: Երից իրավացի էր Ակնունին, երբ գրում էր հետևյալ տողերը...«հարածների դեմ, այլև մերկ պարանոցներ չեն ձգած, ինչպես երբեմն, և ոչ էլ ստրուկների խոնարի գլուխներ: Հարածի դեմ հարած, մե-կին երկու, մէկին երեք»- ահա օրիայ նշանաբանը, յեղափո-

<sup>1</sup> Մրագիր Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 14:

<sup>2</sup> Տե՛ս Հեծ, Թիւրքահայ ենակիութեան գաղափարաբանութիւնը, Բ. Բ., Փարիզ, 1935, էջ 10: Հետո Չորմիսեան, Համապատկեր արևմտա-հայոց մէկ դարու պատմութեան, Բ. Բ., Պէյրութ, 1974, էջ 299-301:

խական մարտի ընդունված բանաձևը: Տերրօրը—մէկն է այդ բանաձևներից: Նա յեղափոխութեան փայլը չէ, այլ կնճիռը, անցանկալի, նոյնիսկ տգեղ նրա գեղեցիկ նակատի վրա, բայց անհուսափելի, իրև արդիւնք այն պայմանների, որոնց ստեղծողն ու սնուցանողը իմքը բռնպատութիւնն է, իր ապակյանող բժիշմով, բռնաւորների իր հնկայամարմին լեզունով<sup>1</sup>: Այս տողերը միանգամայն համապատասխանում էին 1890-ական թվականների այն պայմաններին ու մթնոլորտին, որոնք ստեղծվել էին Օսմանյան կայսրությունում և որոնց ծնունդն էր նաև հայ ահարեկչությունը:

Կանցնեն տարիներ: Կգա 1903 թվականը, և այս անգամ արդեն Կովկասը ականատես կլինի ցարական բռնակալության դեմ հայ ահարեկչության հանդուզն ձեռնարկների՝ որպես պատասխան ցարական իշխանությունների վարած հայահալած քաղաքականության, որպես արդյունք հայության ամենատարրական իրավունքների ու ազատությունների ուղարման: Ու նորից կհաստատվի այն պարզ ճշմարտությունը, որ հայ ահարեկչությունը ծնվում է այնտեղ, որտեղ օրվա պահանջներն են վրիժառությունն ու հատուցումը, որտեղ արդարությունը տկար է ու ուղարկած:

Ի՞նչ տեսքով պետք է որդեգրվեր ահարեկչությունը հայ ազատագրական շարժման կողմից: «Հնդունելի» էին նրա համար աշխարհին հայտնի և այլ ժողովուրդների ու քաղաքական ուժերի պայքարի գործնականում արդեն փորձարկված պայքարի ձևերն ու մեթոդները: Կիրառելի<sup>2</sup> էին արդյոք այդ միջոցները Օսմանյան կայսրությունում, որն իրենից ներկայացնում էր Եթնիկական, կրոնական, մշակութային, տնտեսական ու քաղաքական հակասությունների մի բարդ հանգույց: Այս և նմանատիպ հարցերի պատախանները միանգամից չեն, որ գտնվում էին: Ավելի հաճախ դրանք ճշգրտվում էին ազատագրական պայքարի ընթացքում: Են սակագ չին դեպքերը, եթե այդ ճշգրտումները կատարվում էին դառը դասերի գնուվ:

Ամբողջությամբ վերցրած ընդունելի է ազատագրական պայքարի պրոցեսում ահարեկչության հնարավոր ձևերի այն տարրերակումը, որն առաջարկում է Ռուբենը<sup>3</sup>: Նրա կարծիքով ահարեկումներն ըստ բնույթի բաժանվում էին արտաքին-քաղաքականի և ներքին-ազգայինի: Արտաքին-

քաղաքական ահարեկումներն իրենց հերթին բաժանվում էին 3 խմբի՝

- ա/ զանգվածային ահարեկում,
  - թ/ պետական պաշտոնյաների սանձում,
  - գ/ պետական խարիսխների քանդում:
- Ներքին-ազգային ահարեկումները նույնպես բաժանվում էին 2 խմբի՝
- ա/ թշնամու հետ սեփական ազգի դեմ բացեիրաց համագործակցող անձի կամ խմբի ահարեկում,

բ/ մատնիների ու դավաճանների ահարեկում:

Սկզբից ևեթ հայ ազատագրական շարժումը ընդունելի համարեց ներքին թշնամիների՝ լրտեսների, մատնիների, դավաճանների, թշնամու հետ համագործակցողների ահարեկումը: Ահարեկման այս ձևը հատկապես տիպական էր 1890-ական թվականների առաջին կեսին (մինչև Օսմանյան դրամատան գրավումը), թեև հնտագա տարիներին էլ նրա կիրառման պրակտիկան շարունակվում է:

«Դրօշակ»-ն այդ տարիներին բացահայտորեն ազդարություն էր, որ «... լրտեսները, դավաճանները արժանի են պատժի, արժանի են մահի: Արժանի են պատժի այն ամենը, որոնք իրանց սեփական շահի համար զոհում են ընդհանրութեան շահերը. արժանի են մահի ամենքը, որոնք «ես»-ի համար որդակոյն են անում մեր հարազատ Մօր արինն ու հոգին»: Ահարեկման այս ձևը ինքնապաշտպանական տակտիկայի դրսւորում էր: Պատժի, վրիժառուական նպատակներ հետապնդելով հանդերձ՝ նրա իմաստը դրանով չէր սահմանափակվում: Ներազգային միջավայրում այն ստանում էր բարյոյական մեծ նշանակություն: Հայտնի մատնինի, դավաճանի կամ լրտեսի հրապարակային պատիժը քաշալերում էր մասսային, նրանց վանում միայնության ու անհուսության զգացումը, կազդուրում ներազգային մթնոլորտը, ավելի կազմակերպում և համախմբում այն: Մյուս կողմից նման ահարեկումները սաստում էին պոտենցիալ մատնինին, դավաճանին ու լրտեսին, ազդարարելով, որ ազգադավ ոչ մի արարք անպատճ չի մնա և հայ վրիժառուի պատժի ձեռքը անհրաժեշտության դեպքում կհասնի նաև իրենց:

Ցուրաքանչյուր ահարեկումից հետո կատարվող զանգվածային ձերքակալությունները բնականարար դնում են ահարեկումների նպատակահարմարության հարցը: Սակայն այն հանգամանքը, որ յուրաքանչյուր մատնինի, լրտեսի ու

<sup>1</sup> Է. Ակնումի, Դեպի կոհ, Ժընեվ, 1904, էջ 265-266:

<sup>2</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը իշխանակները, հ. 1, Երևան, 1990, էջ 92:

դավաճանի ոչնչացումը ոչ պակաս թվով անմեղ մարդկանց փրկություն էր նշանակում, միանգամից վճռում է հարցը հօգուտ ահարեկման: Բնազդով դա ընկալում էր նաև ժողովուրդը, որի համակրաքը մեծամասամբ ահարեկիչների կողմն էր լինում: Պատահական չէ, որ թեև նմանատիպ ահարեկումների մեծագույն մասը կատարվում էր օրը ցերեկով, բոլորի աշխ առաջ, սակայն հանդուգն Վրիժառումներին մեծամասամբ հաջողվում էր առաջադրանքը կատարելուց հետո բարեհաջող հեռանալ ու զերծ մնալ ձերբակալություններից:

Միայն Օսմանյան դրամատան գրավմանը նախորդած ամիսներին Պոլսում հայ Վրիժառումների դատաստանին արժանացան լրտես Արտաշեար, ոստիկանության կոմիսարներ Հաճի Տիգրանն ու Մարգարը, մատնիչ, վիրաբույժ Մկրտիչ Թուլումնջիկը, նախկին վարդապետ, դավաճան ու մատնիչ Մամբրեն, լրտես Հովհաննեսը և ուրիշներ, որոնք պատճառ էին դարձել ինչպես իրենց նախկին ընկերների, այնպես էլ հարյուրավոր միանգամայն անմեղ հայերի ձերբակալության ու մահվան: Սակայն ահարեկման նման ձերչ չեր սահմանափակվում միայն Պոլսի շրջանակներով և ավել կամ պակաս չափերով կիրառվում էր նաև Արևմտյան Հայաստանի բոլոր անկյուններում բնականաբար առավել արդյունավետ լինելով այնտեղ, ուր պայմի լավ էր կազմակերպված ազատագրական շարժումը: 1890-ական թվականներին հայ Վրիժառության գործ են դատնում Շապին-Գարեհսարում լրտես Հաճի Կարապետը, Վանում մատնիչ ու լրտես Նշան Թարզիբաշյանը, Գևորգ Զրայշանը, Հովհաննես Տեր-Պողոսյանը, դավաճան ու մատնիչ Կարապետ Ամենյանը (Բաշոն), Կարինում մատնիչ Հարություն Տեր-Սարգսյանը, Երզնկայում Արմենակ Հայկունին. Մշտ դաշտում մատնիչ ունե Կրպոն, դավաճան ու մատնիչ Տեր Բարսեղ քահանան, Բաղեշում մատնիչ ու լրտես Խաչիկ Բախալյանը, Ս. Կարապետ Վանքի նախկին միարան Կարապետ Վարդապետ Եսայանը և ուրիշներ: Վերջին երկուսը ժամանակին ամեն ինչ արել էին միջազգային քննիչ հանձնաժողովից Սասունի շարդենը թաքցնելու համար, իսկ հետագայում համագործակցելով թուրքական ոստիկանության հետ՝ պատուիս էին դարձել Տարոնի հայության համար:

Վերը նշված տարիներին և հետագայում իրականացված նմանատիպ ահարեկումների սոսկ թվարկումն անգամ անհնար է: Պարզապես նշենք, որ մինչև երիտրուրքական հեղաշրջումը Արևմտյան Հայաստանում կատարված նմանատիպ Վերջին նշանավոր ահարեկումը կապված էր Դավոյի դավաճանության հետ: Չմտնելով այդ պատմության 46

մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ ահուելի էին Դավոյի դավաճանության նյութական ու բարոյական հետևանքները: Գաղտնի գինապահեատների մատնության հետևանքով թշնամու ձեռքն է անցնում Վանի դաշնակցական կազմակերպության մի քանի տարիների լարված ու տքնացան աշխատանքի արդյունքը՝ հարյուրավոր հրացաններ, 600000 փամփուշտ, հարյուրավոր կիրոգրամ պայտուցիկ նյութ, վառող և այլն: Բայտ են նետվում նաև կազմակերպության շատ դեկավարներ: Ոչ միայն Վանի դաշնակցական կազմակերպությունը, այլև հայ ազատագրական շարժումը ստանում են հարվածներ, որոնց հետևանքները հետազայում էլ զգացնել էին տախիս: Դավոյի ահարեկումը կենսական անհրաժեշտություն էր: Այն Վրիժառությունից բացի նաև բարոյա-հոգեբանական մեծ նշանակություն ուներ ճնշված վիճակում գտնվող Վանի հայության համար: Ի վերջո, Վրեժիններական այդ ակտը 1908 թ. մարտի 10-ին փայլուն իրականացնում է 18-ամյա Տաճատ Թերլեմեզյանը:

Արևմտահայ իրականության մեջ հարյուրներով են հաշվում ներազգային կյանքում իրականացված անհատական ահարեկումները: Ցավոր դրանց մեջ եղել են նաև դեպքերի հետագա ընթացքով չարդարացված ահարեկման օրինակներ: Ժամանակի ընթացքում չեն հաստատվել առանձին անձանց ներկայացված մեղադրանքները: Սակայն դեպքերը, երբ դավաճանություն էր համարվում պարզապես զգուշակորությունը, այլախորհրդյունը և պայմանագրական գործելակերպ չպաշտպանելը: Որոշ դեպքերում ահարեկումը դառնում էր միջկուսակցական հարաբերությունները պարզելու միջոց՝ ավելի սրբով նրանց միջն ամենին էլ ոչ բարեկամական հարաբերությունները: Այլ կերպ ասած, միշտ չէ, որ ահարեկչական ձեռնարկները արդարացված էին ն ժամանակի հրամայական էին հանդիսանում: Նման շարդարացված ահարեկումների թվին պետք է դասել, օրինակ՝ Արամ Արամյանի Կողմից Խաչատուր Կերեքցյանի ահարեկումը Կարինում, Պոլսի պատրիարք Մ. Օրմանյանի ահարեկման անհաջող փորձը 1903 թ. հունվարի 6-ին Գում Գափուի եկեղեցում և այլն: Անշուշտ, թուրքական դաժան իրականության պայմաններում, երբ յուրաքանչյուր հապաղում ու Վրիշտում կարող էին ծանր անդրադարձ ազատագրական պայմանագրի վրա, իսկ ճշմարտության լիովին բացահայտումը կամ անհնարին էր, կամ էլ տևական ժամանակի հարց, դժվար էր ազատագրական պայմանագրի գլուխ կանգնած ուժերից պահանջել բացարձակ անսխալականություն այնտեղ, որտեղ թուլլատրելի ու անթուլատրելի, արդարացվածի ու շարդարացվածի

միջև սահմաններն անորոշ էին, հաճախ պարզապես անտեսանելի: Ուստի, նման վրիփումներով հանդերձ, ներազգային պայմաններում գործադրված ահաբեկչությունը ամբողջությամբ վերցված արդարացված էր: Հիմնված լինելով ինքնապաշտպանական սկզբունքների վրա՝ այն իր եռթյամբ հարձակողական չէր և ազգային գորբալ խնդիրների լուծման արդյունավետ միջոց չէր կարող լինել: Սակայն, այն, դրանով հանդերձ, պայքարի ոչ ցանկալի համարվող այն միջոցներից մեկն էր, առանց որի չէր կարող հաջողության հույս ունենալ որևէ ազգային ազատագրական շարժում, այդ թվում նաև հայկականը:

Ինչ վերաբերում է արտաքին-քաղաքական ահաբեկմանը, ապա հայ ազատագրական շարժումը հենց սկզբից կանգնում է նրա առանձին ձևերի կիրառման հարցում տարբերակած մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության առաջ: Օսմանյան կայսրությունը հայ ազատագրական շարժման դեմ պայքարում իր համար գենք էր ընտրել զանգվածային ահաբեկման քաղաքականությունը, փորձելով այդ եղանակով կանխել հայկական հարցի բնականոն և արդարացի լուծումը: Այդ զանգվածային ահաբեկման արդյունքներն էին 1894-96 թվականների Համիդյան շարուերը, ապա Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացված Մեծ եղենը: Սկզբունքորեն այլ էր հայ ազատագրական շարժման վերաբերմունքը զանգվածային ահաբեկման հարցում: Ազատագրական շարժման ողջ ընթացքում հայ քաղաքական ոչ մի հոսանք կամ կուսակցություն մտքով անգամ չանցկացրեց դիմել զանգվածային ահաբեկման: Իրավացի է Ծովենը, երբ գրում է, որ դրա «...ապատճառը պէտք է որոնել ոչ այնքան հայ ժողովրդի անկարողութեան կամ միայն մարդասիրական գացցմունքներէն տարուած լինելու մէջ, այլ գլխաւորապես այն սկզբունքին մէջ, թէ յոդի վարչութեանց պատասխմանտութիւնը ոչ թէ զանգուածն է, այլ իշխանութիւնը...»: Հայ ազատագրական շարժումը զանգվածային ահաբեկման հարցում առաջնորդվում էր այն սկզբունքով, որ այն ոչ միայն աննպատակ է ու կորստաբեր, այլև հակամարդկային բարբարոսություն է: Եվ պատահական չէ, որ Խանասորի ահաբեկչական ու պատիշ արշավանքի օրերին հայությունը ստեղծում և այսօր էլ առանձնակի հպարտությամբ երգում է՝ «Կանանց երբեք ձեռք տալու չէ վրեժինդիր շան ֆիտան» տողերը:

Սկզբանակ միանշանակ ձևով չի ընդունվում նաև թուրք պաշտոնյաների անհատական ահաբեկման խնդիրը: ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովում 1892 թ., երբ քննարկ-

վում էին տակտիկայի հարցեր և երբ ակնհայտ էր տվյալ պայմաններում ընդհանուր ապատամբության անհնարինությունը, պաշտոնյաների անհատական ահաբեկման առաջարկով հանդես եկավ Կարինի պատգամավոր Արամ Արամյանը (Աշոտ-Թաթով): «Այդ բոլորի փոխարեն, - պնդում էր նա, - պետք է ընդունել գործունեութեան մի այլ սկսում, այն է՝ անհատական տէոր, ուղղված կառավարութեան կեղերի պաշտօնեաների ու ամէն մի ճնշողի դէմ: Թող տէորիսի պարտը լինի Վերջ դնել բռնաւորների կեանքին եւ սպանուածինը կատարելուց յետոյ երբեք փախուստ չտալ, այլ կանգնել տեղնուտեղը եւ յայտարարել, որ ինքն է կատարողը, առանց որիշների մասնակցութեան եւ դրդման, որպէսզի իր պատճառով չվնասեն դիրիշները, շատ անգամ ամբողջ գիտեր ու համայնքները»: Սակայն Քրիստափոր Միքայելյանի վկայությամբ ընդհանուր ժողովը մերժել է Արամ Արամյանի վերոհիշյալ առաջարկները:<sup>1</sup>

Նման գործելակերպից ձեռնպահ են մնում նաև ազատագրական շարժման մասնակից մյուս ուժերը: 1890-ական թվականների առաջին կեսին ընդհանուր առմամբ զգուշակոր վերաբերմունք կար այս հարցում: Կույր ահաբեկումը, որևէ պաշտոնյայի ոչնչացումը միայն այն բանի համար, որ նա պաշտոնյա էր և ներկայացնում էր ատելի բռնապետությունը, համարվում էր անհույսարեթի և ամհարի ազատագրական պայքարի նպատակներին: Այդ կարգի ահաբեկումը ոչ միայն անթույլատրելի էր զուտ մարդկային առումով, այլև խստ վտանգավոր իր հետևանքներով: Եթե, այնուհանդերձ, լինում էլ էին նման ահաբեկման առանձին օրինակներ, ապա դրանք որպես կանոն ուղղված էին լինում ոչ բարձրաստիճան թուրք պաշտոնյաների, ոստիկանների, ոչ հայազգի լրտեսների, իսկ Արևմտյան Հայաստանում նաև առանձին քրդերի դնեմ, որոնք մինչ այդ աչքի էին ընկել դաժանությամբ կամ մասնակից էին հայության դեմ կատարված հանցագործությունների:

Այս ժողովի վրա թերևս բացառություն պետք է համարել 1895 թ. մայիսին մեծ տերությունների կողմից Արդուկ Համիդին ներկայացված բարենորդումների ծրագրին հաջորդած լարված սպասման մթնոլորտում դաշնակցական ահաբեկինների կողմից 1895 թ. սեպտեմբերի 20-ին Տրավիզում վաճի կուսակալ Բահրի փաշայի ահաբեկման փորձը, որի հետևանքով նաև Տրավիզունի գինվորական հրամանա-

<sup>1</sup> «Դիօշակ», 1899 թ., № 8:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

տար ֆերիկ փաշան վիրավորվեցին: Մի կողմ թողնելով այլ ձեռնարկի իրականացման հետ կապված զուտ տեխնիկական բնույթի հարցերը՝ Աշենք, որ նպատակարման ուժան տեսանկյունից այն արդարացված չէր: Դրանից ընդամենը 3 շաբաթ առաջ տեղի մոտական ամբոխի խիստ գրգովածության պատճառով Տրապիզոնի դաշնակցական կոմիտեն վերջին պահին խելամտորեն հետաձգել էր Հայատանի «քարենորդիչ», հայկական ջարդերի կազմակերպիչ Ծաքիր փաշայի ահարեկումը, որն ի վերջո այրպես էլ չիրագործվեց: Նման պայմաններում մեկ այլ, թեկուզն ջարդարար բարձրաստիճան պաշտոնյայի ահարեկումը, այն էլ Պոլսում տեղի ունեցած Բապը Ալիի դեպքերից ընդամենը 2-3 օր հետո, սպառնում էր կայծի դեր խաղալ: Թուրքական իշխանությունները օգտագործեցին այդ դեպքը Տրապիզոնի հայության մի քանի օր անց տեղի ունեցած շարդն արդարացնելու համար:

Արդարացված չհամարելով Բահրի փաշայի ահարեկման փորձը՝ անհրաժեշտ ենք համարում ընդօձել, սակայն, որ այն Տրապիզոնի հայության ջարդերի պատճառը չէր: Այդ ահարեկումը կարող էր այնպես էլ տեղի չունենալ, եթե Բահրի փաշան Պոլսից վերջին պահին Տրապիզոնում մնալու հրահանգ չստանար և չթողներ իրեն Պոլիս տանող իտալական նավը: Բապը Ալիի դեպքից հետո, Արևմտյան Հայաստանում և հայարենակ այլ վայրերում սկսված մասսայական ջարդերի պայմաններում այդ փաստը, կարծում ենք, ավելի քան խոսուն է և լրացուցիչ մեկնաբանության կարիք չի գուստ: Տրապիզոնի հայության ջարդը, ինչպես և հայրենակ մյուս վայրերի ջարդերը, կանոնորոշված էին, իսկ մնան դեպքերում առիթ գտնելու դժվար չէր:

Բահրի փաշայի ահարեկմանն հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանի տարածքում չենք հանդիպում վիհանության նպատակներով բարձրաստիճան թուրք պաշտոնյամերի անհատական ահարեկման դեպքերի: Դա բացատրվում է ոչ թե նրանով, որ նման պատժի արժանի, հայության դեմ դաժան արարքներով աչքի ընկած պաշտոնյամերի հարիսխների խարիսխման նպատակության համար կոնկրետ պայմաններում համարվում էր ոչ նպատակահարմար և անցանկալի: Եթե այդ տարիներին մենք այստեղ տեսնում էլ ենք արտաքին ահարեկման օրինակներ, ապա դրանք, որպես կանոն, սահմանափակվում են քուրդ բեկերի, աղա-

ների և ստորին պաշտոնյամերի համեմատաբար նեղ շրջանակով: Դա առաջին ներթին բացատրվում է նրանով, որ քուրդ ցեղապետի կամ աղայի ահաբեկումը համեմատաբար ավելի մեղմ էր ընկալվում իշխանությունների կողմից, քան թուրք պաշտոնյամերի: Եկ երկրորդ, որ Արևմտյան Հայաստանի տարածքում հենց քրիստոնեական վերնախավն էր զիսավորապես հանդես գալիս հայությանը տնտեսապես հարատահարողի և հայ ազատագրական շարժման հակառակորդի դերում: Հետևաբար հենց նրա առավել դաժան ներկայացուցիչների դեմ պետք է ուղղվեր հայ Վրիժառուի արդարադատ ձեռքը: Նման ահարեկումները որոշ չափով զգաստացնում էին քրիստոնեան նրանց աղանձներին ու բեկերին հարկադրում ավելի գգույշ լինել և սահմանափակել իրենց հայ հպատակների կենեքումը:

Այսպիսով, իրենց պատժի հետևանքներով հանդերձ, քրիստոնեական վերնախավի առավել դաժան ներկայացուցիչների ահարեկումը անհրաժեշտ էր և նպատակահարմար: Այս տեսանկյունից էլ պետք է գնահատել Նորադուզի Ծաքիր աղայի, Աղբյուր Սերորի դահիճ Բշարե Խալիի, Քոթանենց Ծերիփ աղայի, Բալաքի աշիրեթապետ հաճի Ֆեր աղայի, Մշո հայության կատաղի դահիճ Խալիի ԼՇենենց և տանյակ այլ մեծ ու փոքր աղանձների ու բեկերի ահարեկումները:

Ինչ վերաբերում է նման ահարեկումներին պարտադիր հաջորդող պատժի գործողություններին, ապա պետք է ընդունել, որ ազատագրական պայքարի ընթացքում զոհերն անխոսափենի էին: Առանց դրանց Օսմանյան կայսրությունից դեռևս ոչ մի ժողովուրդ ազատություն ձեռք չէր բերել, և հայերը երջանիկ բացառություն չէին կարող լինել:

Օսմանյան կայսրությունում հայկական ահարեկչությունն, այնուհաներձ, չսահմանափակվեց սուս կ ինքնապաշտպանական ու վրեժինդրական շրջանակներուն: Եղան նաև պետական խարիսխների խարիսխման նպատակով կազմակերպված հարձակողական ու ցուցական բնույթի ակտեր, որոնք կազմակերպման մասշտաբներով, հարվածի թափով և ունեցած արձագանքներով գալիս էին նսեմացնելու պայքարի միջն այդ եղած ամենահանդուզն ու հերոսական դրվագները: Էնույթամբ վրեժինդրական լինելով հանդերձ, դրանք դուրս էին գալիս զուտ ինքնապաշտպանական շրջանակներից և փորձում դառնալ Հայկական հարցի լուծման աղդու միջոց: Նման ձեռնարկներին բնորոշ էին որոշ բնդինանոր բնութագրի գծեր:

Նախ, դրանց իրականացման վայր էր ընտրվում ոչ թե բուն Արևմտյան Հայաստանը, այլ Օսմանյան կայսրության սիրտը՝ Պոլիսը և մասամբ ծովեղոյա կենտրոնները: Դա

<sup>1</sup> Տես «Դրօշակ», 1902թ., № 5:

բացասրվում էր ազատագրական շարժման այդ շրջանին բնորոշ ուղղմապարությամբ: Ազատագրական պայքարի գլուխ կանգնած ուժերը՝ հնչակյանները, ապա դաշնակցականները հայկական բարենրոգումների հրականացումը կապում էին թուրքիայի գործերին մեծ տերությունների անմիջական միջամտության հետ: Հայկական հարցը կարծամանակում լուծելի հարց էր համարվում և բավարար էր համարվում արտաքին միջամտության հրահրումը՝ դրա արագ լուծման համար: Պոյիսը և ծովեզրյա քաղաքները, որտեղ առավել սերտ էին միահյուսված մեծ տերությունների տնտեսական ու քաղաքական շահերը և որտեղ յուրաքանչյուր փոքր միջանեա անմիջապես արձագանք էր գտնում Եվրոպայում, հարսար էին համարվում ուժերի ու միջոցների նվազագույն վատնումով ցանկալի միջամտությունն առաջ բերելու համար: Մինչդեռ Արևմտյան Հայաստանում կատարվող դեաքերը, հետևանքներից ու մասշտաբներից անկախ, բավականին ոչ և խճուկ տնօրով էին արձագանքում Եվրոպայում և չէին կարող միջամտություն դրդողի ներ խաղալ:

Երկրորդ, ահաբեկչական այդ ձեռնարկներն իրականացնելիս առաջին անգամ և մեծ չափերով օգտագործվում են ոումբեր, ուժանակ և այլ պայթուղիկ նյութեր, որից մինչ այդ հայ հեղափոխականները, հատկապես դաշնակցությունը, խոսափում էին և որոնց ավերից հետևանքներն ու հոգեբանական ազդեցությունը ավելի քան զգալի էին:

Վերջապես այդ ձեռնարկներին բնորոշ էր մասշտաբայնությունը: Դրանցից յուրաքանչյուրն առնվազն մի քանի ամիսների տքնածան աշխատանքի ու զգալի նյութական միջոցների ծախսաման արդյունք էր և նախատեսում էր միաժամանակ կամ միմյանց հաջորդող, գորեք հավասարացներ մի քանի հարվածներ, որոնց տեխնիկական հստակ իրականացումը կարող էր հանգեցնել վիթխարի ավերից հետևանքների:

Նման ձեռնարկներից առաջինը և ամենանշանագործ Օսմանյան դրամատան գրավումը և դրան ուղեկցող ոումբային կողմներն էին Պոլսում: Ի՞նչ էր այն՝ վրեժինդրական ա՞կտ, արտաքին միջամտություն հրահրող դավադրական, ահաբեկչական միջոցառումը, թե՝ ապատամբություն օսմանյան բռնապետության դեմ: Այդ հարցը պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն ընդհանուր բարոյա-հոգեբանական մենոլորտին, որում գտնվում էին արևմտահայությունը և հայ ազատագրական շարժումը այդ գաղափարը հանալու պահին:

1895-96 թվականներին հայ ազատագրական շարժման դեմ պայքարի պրոցեսում Արդուլ Համիդը գործնականի է 52

վերածում թուրքական պետության կողմից ավելի վաղ որդեգրված ցեղասպանության քաղաքականությունը: Այդ պայմաններում է, որ հոգածում է գաղափարը: Եվ նախապես այն չէր կարող լինելու որևէ այլ բան, բացի վրեժի գաղափարից: «Եթի 95 և 96 թվականներին արյան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին, - գրում է Քրիստովոր Միքայելյանը, - և երբ հայությունը, եթե նա ստրկածին արարածների մի զանգված չէր, այսի բոնկված լիներ վրեժի միակ հասկանալի գացամունքով, այսի դառնար վրեժի մի անվերջ աղաղակ, այդպիսի մի վայրկանում, ասում ենք, լոությունը պիտի նշանակեր միայն և միայն ամբողջ ազգի կատարյալ բարոյական անկումը և հեղափոխական շարժման կատարյալ սահմանկությունը»:

Վրեժ: Այդ էր պահանջում երկրում և արտասահմանում գտնվող այն գիտակից երիտասարդությունը, որի համար թամբ էր հայրենիքի ու հայության գաղափարը: Դա խոստվանում է նաև Օսմանյան դրամատան գրավման ապագա դեկավարներից մեկը՝ Արմեն Գարոն: «...Ինձ համար անկարելի էր անտարբեր հանդիսատեսի դերին մէջ մնալ, եթք մեր ցեղին գյոյութեան խնդիրն էր դրուած, - գրում է նա, - ուսումն կը թողնէի վրեժներութեան համար...»: Նա վկայում է նաև, որ Պոլսում ուժանակի ու ոումբերի գործածությամբ վրեժինդրության ակտ կազմակերպելու գաղափարը ծնվել է դեռևս 1895 թ. դեկտեմբերին՝ նույն տարվա հոկտեմբերներին ամիսներին տեղի ունեցած շարդերի անմիջական ազդեցության տակ:

Նախապես ճշգրտված պլան չկար: Ըստ երևոյթին սկզբում որպես հայ վիթխառության թիրախ նկատի է առնը-վել հայկական շարդերի կազմակերպիչը՝ Մեծ Մարդապանը:

Վոայանը (Օնիկ Դերձակյան) վկայում է, որ Եգիպտացին (Արտաշես Դևյան), որը մինչ այդ մեծ դեր էր խաղացել Պոլսում ահաբեկումների կազմակերպման ու իրականացման գործում, մշակել էր 1896 թ. ոամազն 15-ին Արդուլ Համիդին ոումբով ոչնչացնելու պլան: Չնայած բոլոր պատրաստություններն արդեն տեսնված էին, սակայն Դաշնակցության Պոլսի Կենցըրոնական Կոմիտեն ի վերջո հրաժարվում է այդ պլանից: Հավանություն չեն ստանում նաև արևմտյան մայրաքաղաքներում թուրքական դեսպա-

<sup>1</sup> Քրիստովոր Միքայելյան. Հեղափոխականի մտքերը. Երևան, 1990, էջ 59-60:

<sup>2</sup> Արմեն Գարօ, Ապրուած օրեր, Բուտրը, 1948, էջ 73:

<sup>3</sup> Տե՛ս նովե տեղում, էջ 102-105:

<sup>4</sup> Տե՛ս «Դրօշակ», 1897, № 13:

նատմերը պայթեցնելու և Պոլիսը վառելու գաղափարները: Վերջինս մերժվում է որպես չափազանց անողոք մտահացուն: Ի վերջո հասունանում է այն գաղափարը, որ Պոլսուն հասցվող հարվածը պետք է դիպջի ոչ միայն թուրքական պետության, այլև Եվրոպական կապիտալի շահերին: Նպատակը՝ առաջ բերել Եվրոպական միջամտություն՝ ի շահ հայկական հարցի լուծման: Այսպիսով, նախապես սուկ բրեժինիրական ենթադրվող ձեռնարկը ժամանակի ընթացքում ձեռք է բերում նաև քաղաքական նպատակառություն:

Արդյունքում մշակվում է Օսմանյան դրամատան գրավման ծրագիրը: Այն մտահացողները գտնում էին, որ իրականում Եվրոպական հաստատություն հանդիսացող դրամատան գրավումը և այն պայթեցնելու սպանելիքը քավական էին Եվրոպական ու ազմանավերից գործ ափ հանելու, Պոլսիր գրավելու և Հայկական հարցին ցանկալի լուծում տալու համար: Համոզված էին, որ հաջողության դեպքում 24 ժամվա ընթացքում ցանկալի միջամտությունն ապահոված կլինի:<sup>1</sup> Չափազանց միամիտ տեսակետ, որը, սակայն, ազատագրական շարժման դեկավարների այդ շրջանում ունեցած հայացքների արտացոլումն էր: Դրամատան գրավման հետ միասին և միաժամանակ նախատեսված էին նաև ոմբային ահաբեկչական հարձակում Սամարիայի զորանոցի վրա, Ղալաթիո կամրջի վրա Սատրազմի կառքի ոչնչացում և ոմբային հարվածներ դեպի Դրամատուն շարժվող զորքերին<sup>2</sup>: Դա մի վիթխարի դավադրական-ահաբեկչական ձեռնարկ էր, որն իր մասշտաբներով չափից ավելի հսկայական էր՝ ոստիկանության և ամենուր վիստացող լուտեսների աշքից մինչև վերջին պահն աննկատ մնալու համար: Աշքի է զարնում հատկապես Սամարիայում կատարվող եռուցեռը: Ոստիկանությունն ու զորքերն այս տեղ նախահարձակ են լինում կատարելով խուզարկություններ և ձերբակալություններ: Սակայն դա չի կանխում գիշավոր հարվածը:

1896 թ. օգոստոսի 14-ին դաշնակցական 26 մարտիկներ Բարեկեն Սյունի (Պետրոս Փարլան) առաջնորդությամբ, ուստի ու ու ատրճանակներով զինված, զորիում են Օսմանյան դրամատան վրա, գրավում այն՝ կոիվների ընթացքում հսկայական կորուտներ պատճառելով զորքերին, ոստիկանությանն ու խուժանին: Դրամատունը 13 ժամ գտնվում էր հայ մարտիկների ձեռքում: Այն գրավելու պա-

հին գործում է Բարեկեն Սյունին և դեկավարությունն անցնում է Նախարարության դպրոցում ուսումը կիսատ թողած ու վրեժիններական նպատակներով Պոլսի անցած Հրաշին (Հայկ Թիրաքյան) և Արմեն Գարոյին:

Դրամատան գրավումից հետո 6 մեծ տերությունների դեկավաններին է ներկայացվում ՀՅՌ՝ Պոլսի Կենտրոնական կոմիտեի հայերեն, ֆրանսերեն ու թուրքերեն լեզուներով շրջաբերականը: «Մեր արինով սրբազործուած մեր պահանջներուն կուզայ հիմա միանալու և սրբազան վրեժի սեռուն գաղափարը, որ սև ուրուականի պէս արձանացած է մեր աշքերուն առջև, - ասվում էր մասնավորապես նրանում, - Դիանագիտական խաղերու ժամանակն ա'լ անցած է: Մեր հարիդ-հազար նախատակներուն թափած աղինը մնացի իրավունք կուտայ ազատություն պահանջելու»: Պահանջվում էր անմիջապես Արևմտյան Հայաստանում գործադրել խոստացված բարենորդությունները: Իրենց հերթին բանկը գրավողները ներկայացնում են հետևյալ պահանջները:

1. Միջազգային միջամտությամբ ապահովել ամբողջ երկրի խաղաղությունը:

2. Ընդունել բարենորդությունների վերաբերյալ ՀՅՌ՝ Պոլսի Կենտրոնական կոմիտեի բոլոր պահանջները:

3. Ուժ չգործադրել բանկը գրավողների դեմ:

4. Կյանքի լիակատար ապահովություն տալ ինչպես բանկում գտնվողներին, այնպես էլ Պոլսի այլ մասերում կոհիվների բոլոր մասնակիցներին:

Խոստանալով մինչև իրենց պահանջների կատարումը անվճական պահել դրամատան կայքը, դրամը, ինչպես նաև պատանդ վիճակում գտնվող 157 ծառայողներին՝ դրամատունը գրավողները հակառակ պարագայում սպառնում էին պայթեցնելք այն՝ իրենց հետ փլատակների տակ թողնելով ամեն ինչ:

Սպառնալիքն ավելի քան ազդեցիկ էր, և ի վերջո գործին միջամտում է միջազգային դիվանագիտությունը՝ ի դեմս Պոլսի ուսուական հետապնդական առաջին թարգման Մաքսիմովի: Միջամտում է ոչ հայկական հարցին լուծում տալու, այլ Արդու Համբային մեկ անգամ և ծանր վիճակից համելու համար: Հայ վրիժառուներին հասկացվում է, որ անհիմատ է միջազգային ու ազմական միջամտություն սպասելը: Մաքսիմովը խուսափողական դիրք է գրավում նաև բարենորդությունների հարցում, հայտարարելով, որ առանց իր մյուս պաշտոնակիցների համաձայնության չի կարող

<sup>1</sup> Տե՛ս Միջայէ Վարանեամ, Աշվ. աշխ., էջ 131, 148:

<sup>2</sup> Տե՛ս Արմեն Գարո, Աշվ. աշխ., էջ 107-108:

<sup>3</sup> Տե՛ս Անոն տեղում, էջ 108-109:

նման խոստումներ տալ: Դրամատունը շթողնելու և պայթեցնելու դեպքում նա հայ հեղափոխականներին սպառնում է նոյն գիշերն իսկ սկսվելիք հայկական ջարդերով և հայկական հարցի համեմեա Նվրոպայի մինչ այդ բարյացակամ վերաբերունքի փոփոխմամբ: Ի վերջո բավարարվելով բարենորդումների հարցով գրադկելու և Պոլսում հայկական ջարդերը կանխելու Մաքսիմովի խոստումներով՝ հայ վրիժառուները թողնում են դրամատան շենքը և փոխադրվում օտարերկյա նավերից մեկը: Հաջորդ օրը նրանց այցելած ուսու, ֆրանսիացի և անգլիացի դիվանագետներն արդեն միանգամայն այլ լեզվով էին խոսում մոռանալով նախորդ օրը տված խոստումները: Հայ հեղափոխականները դառը հուսախարության րոպեներ ապրեցին:

Ամեն ինչ անդառնալիորեն կորած էր, և նոյն օրն իսկ ֆրանսիական «Ժիրոնի» շղգենավոր նրանց հեռացնում է Պոլսից: 18-ժամյա հերոսական պայքարից հետո դադարում են նաև Սամարիայի ոումբային կորիգները՝ հայ հեղափոխականների փաղանգից խելոյք հերոսական նոր անուններ: Խև որպես պատասխան՝ Պոլիսը նորից ականատեսը դարձավ հազարավոր հայերի ջարդերին՝ հրահրված սովորանի կորմից:

Խ՞նդր դրդեց Օսմանյան դրամատունը գրաված հայ մարտիկներին այդքան հեշտությամբ զիշել դիրքերը և խարպել դիվանագիտական խաղերին: Անզիհական դեսպանի տեղակալը դա բացատրում է սովոր սպառնալիքով, քանի որ Վրիժառուները, համոզված լինելով Նվրոպական միջամտության հարցում, ուտելիք չեն վերցրել իրենց հետ: Հրաշ Թիրաքյանը դրամատունն արագ թողնելը բացատրում է Պոլսում սկսվելիք ջարդերի պատասխանատվությունն իրենց վրա չառնելու գգտմամբ: Սակայն, կարծում ենք, որ ամեննին էլ երկրորդական դեր չի խաղացել նաև այն հաճամանքը, որ ինչպես խոստովանում է Արմեն Գարոն, Դրամատանը գտնվողները չեն ունեցել բավարար քանակությամբ ուժանակ՝ անհրաժեշտության դեպքում իրենց սպառնալիքն իրագործելու համար:՝ Հրաշ Թիրաքյանի՝ դեպքերից անմիջապես հետո «Նրօշակ»-ում տպագրված հուշերու այս հաճամանքը կարող էր համեմայի պատճառներով շրջանցված լինել: Դրամատան գրավումը նախապատրաստողների համոզմունքներին ծանոթ լինելով, իսկապես հնարավոր պետք է համարել Արմեն Գարոյի խոստովանությունը, քանի որ ամեն ինչ հաջող պարտվե-

լու դեպքում ուժանակի գործածության կարիքը չպետք է զգացվեր: Բայց ընդամենք մի քանի ժամվա ընթացքում դաձան իրականությունն արդեն որերորդ անգամ զալիս էր ճշգրտելու և սրբագրելու հայ հեղափոխականների համար անխախտ ճշմարտություն համարվող գաղափարները: Օսմանյան դրամատունը գրավող հերոսները և նրանց հետ հայ ազատագրական շարժումը ստանում էին ծանր, բայց անհրաժեշտ դասեր:

Դրանցից առաջինն այն էր, որ անգամ ամենահամարձակ, հերոսական ու մեծամասշտար ձեռնարկը, անկախ նրա արդյունքներից ու արձագանքներից, չեր կարող միշագային ուզմական միջամտության պատճառ դառնալ և լուծում տալ հայկական հարցին, եթե տվյալ պահին դրանով շահագրգոված չեն մեծ տերությունները:

Երկրորդ, ակնհայտ դարձավ նաև, որ անհնարին է կարճ ժամանակում հայկական հարցի լուծումը և որ հայ ազատագրական պայքարն այդ խնդրի իրականացման համար հարատև պետք է լինի: Այս ճշգրտումներն էր անուն հայ ազատագրական շարժումը Օսմանյան դրամատան դեպքերից հետո:

Ինչ վերաբերում է Պոլսում տեղի ունեցած դեպքերի միջազգային արձագանքներին, ապա միայն բարոյական սփոփանք պետք է համարել հայ վրիժառուների անձնվիրությանը, իմիզախությանը և ազնվությանը նվիրված այն մի քանի հայանապատ հողվածները, որոնք տպագրվեցին եվրոպական մասում մի քանի օրգաններում: Իրանք զալիս էին ճշմարտությունն ասելու կատարված դեպքերի մասին, բայց ոչինչ չեն ավելացնում հայկական հարցի լուծման գործնականին:

Այնուհանդերձ, Օսմանյան դրամատան գրավման հետ կապված դեպքերն ունեցան նաև գործնական հետևանքներ: Հայ վրիժառության հարվածները և դրանց արդյունքում Օսմանյան դրամատան առջև, Սամարթիայում ու Պոլսի այլ մասերում փոփած թուրք զինվորների հարյուրավոր դիակները զալիս էին մեկ անգամ ևս ի լուր ամենքի ազդարելու, որ հայ ազատագրական շարժումը մեռած չէ, որ հայությունը նորից պայքարում է իր հարցի դրական լուծման համար:

Օսմանյան դրամատան գրավման դեպքը որոշ փոփոխություններ մտցրեց նաև մեծ տերությունների վերաբերմունքի մեջ: Շատերը հակած էին կատարված նախերգանքը համարել այն դեպքերի, որոնք սպառնում էին ցնցել Պոլիսը: Անզամ լուրեր էին տարածվում մեծ տերությունների Պոլսի դեսպանատաները պայթեցնելու պահի գոյության մասին: Չնայած Դաշնակցության Պոլսի Կենտրոնական

<sup>1</sup> Տե՛ս Հետո, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ.

Բ., էջ 27:

<sup>2</sup> Տե՛ս Արմեն Գարօ, ԱշՎ. աշխ., էջ 134:

Կոմիտեն հաստուկ հայտարարությամբ հերքեց այդ լուրերը, սակայն դրանք անհետևանք չմնացին: Ավելի վճռական ու կոշտ դարձավ մեծ տերությունների դիրքորոշումը Արդույ Համբիդի Ըկատմամբ հայկական շարդերի հարցում: Դա հարկադրեց սուլթանին հրաժարվել նոր շարդերի կազմակերպումից: Մինչև Ադամայի 1909 թ. դեպքերը հայկական մասսայական շարդեր այլևս տեղի չեն ունենում: Անգամ Խանասորի արշավանքի օրերին՝ 1897 թ. օգոստոսին, եթե դաշնակցական ահարենկիների կողմից թուրքական կառավարությունը ոչնչացնելով նպատակով Պոլսում պայթեցվում է Բապը Ալիի ոռութը և նույն օրը կատարվում են նաև Օսմանյան դրամատունը պայթեցնելով, ինչպես նաև Բերայի կառավարական տաճ առջև ոռութ պայթեցնելով փորձերը, սուլթանը գերադասում է ձեռնպահ մնալ, թեև նախկինում նման առիթներն, անկասկած, կօգտագործեր նոր շարդեր կազմակերպելու համար:

1895-1896 թվականների հրաժարձությունները (Զեյթունի ապատամբություն, Վաճի ինքնապաշտպանություն, Օսմանյան դրամատան գրավում և այլն) հայ ազատագրական զինված պայքարի բարձրակետն էին: Եթե մեծ տերությունների վրա դրանք սպասված աղեցությունը չեն ունենում, ապա թուրքական պաշտոնական շրջանների և ընդդիմադիր ուժերի համար ակնհայտ է դառնում, որ հայ ազատագրական շարժումը Օսմանյան կայսրությունում դարձել է ուազմական ու քաղաքական լուրջ գործոն, որը հնարավոր չէ անտեսել: Դա հարկադրում է Արդույ Համբիդն իր կառավարման ողջ ընթացքում թերևս միակ անգամ բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ: Օսմանյան դրամատան գրավման հետքից շատ չանցած՝ 1896 թ. աշնանը նրա կողմից Եվրոպա ուղարկված պատվիրակը հայկական նախանձներում բարենորոգումներ մտցնելու խոստումներ է տալիս՝ զինված պայքարը դադարեցնելու պայմանով: Հատկապես պերվում էր, որ դադարեցվի ուսմբերի գործածությունը Պոլսում: Հատկանշական է, որ միաժամանակ սառեցված բանակցությունները թուրքերի կողմից վերսկսվում են 1897 թ. օգոստոսյան ոմքահարումից հետո: 1896-1899 թթ. Ժնևում դաշնակցության հետ, իսկ 1897-1898 թթ. Փարիզում վերակազմյալ հնչակյանների հետ Արդույ Համբիդի ներկայացուցիչների վարած բանակցություններն արդյունք չեն տալիս: Սուլթանը չի կատարում հեղափոխականների առաջադրած նախնական պայմաններից ոչ մերկ: Համոզվելով, որ նա բանակցությունները վարում է ժամանակ շահելու, թուրքիայի ներքին գործերին մեծ տե-

րությունների միջամտությունը թույլ չտալու, խոստացված բարենորոգումները չիրականացնելու և վերելք ապրող հայ ազգային ազատագրական պայքարը լիկվիդացնելու համար, վերակազմյալ հնչակյանները՝ 1898 թ. հոկտեմբերին, իսկ դաշնակցությունը՝ 1899 թ. մարտին դադարեցնում են բանակցությունները: Սակայն դրանց տեղի ունենալու փաստն անզամ պկայում է, թե հայ ազատագրական զինված պայքարը, այդ թվում Պոլսում ուումբերի և ուժանակի գործածությամբ ահարենկական ձեռնարկները որքան անհնագություն էին պատճառում սուլթանին:

1895 թ. սկսած Արդույ Համբիդի դեմ միացյալ ճակատ ստեղծելով նպատակով հայ քաղաքական կուսակցությունների հետ կոնստանտներ են հաստատում նաև թուրք ընդդիմադիր ուժերը՝ երիտրուրերը: Հայկական հարցում նրանց որդեգրած անզիջում կեցվածքը, սակայն, խիստ դժվարացնում էր համագործակցությունը: Այնուամենայնիվ հետագայում հայ քաղաքական ուժերը հիմնականում մասնակցեցին Օսմանյան ընդդիմադիր ուժերի համաժողովներին՝ համաձայնելով իրենց մասնակցությունը բերել Արդույ Համբիդի ուժիմը տապալելու գործին:

Օսմանյան պետության հիմքերը ցնցելու նպատակով իրականացված ահարենկական վերջին խոշոր ձեռնարկը Մեծ Մարդասապանին ոչնչացնելու փորձն էր, որը պատմության մեջ մտել է Ելրդզի ոռութ անունով: Օսմանյան դրամատան դեպքերից հետո էլ հայության շրջանում չեր մարել 300000 հայ նախատակների վրեժն առնելու զաղափարը: Արդույ Համբիդն ոչնչացնելու միտքը շատերին էր հուզում: Թերևս դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ազատագրական շարժման տեղատվության պայմաններում անգամ «Դրօշակ»-ը Ակնունու գրչով վրեժի էր կոչում և «Ժողովրդական Բրույզուներ» փմտրում «արդարությունը գործադրելու համար»: Լեշտ չեր սակայն այդ խնդիրն իրականացնելը: Ամենքին էին հայտնի Արդույ Համբիդի վախենալությունն ու կասկածամտությունը: 1900 թ. Իտալիայի Հումբերտ 1-ին թագավորի սպանությունից և Փարիզում Պարսկաստանի նախադիրին շահի դեմ անհաջող մահափորձից հետո հայանիայում անիշխանականների կողմից պատրաստված մի ցուցակ գտնվեց, որում մահվան

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես՝ *Мери Кочар, Армяно-Турецкие общество-политические отношения и армянский вопрос в конце XIX-начале XX веков*, Եր. 1988, էջ 41-72:

<sup>2</sup> Տես՝ նույն տեղում, էջ 73-129:

<sup>3</sup> Տես՝ ՀՅԴ. Վարչութեամեակ /1890-1950/. կազմեց Ս. Վրացեան, Պուլը, 1950, էջ 130:

դատապարտված գահակալների շարքում Հումբերտի անոնցից հետո հիշատակվում էր Արդուլ Համիդի անոնը: Հայտնի չէ, թե ինչ առնչություն ունեին այդ ցուցակի հետ Թուրքիայի ընդդիմադիր ուժերը, այդ թվում նաև հայ հեղափոխականները: Սակայն մի քանի փաստ է, որ դա ավելի ահաբեկց սուլթանին, որն արգելեց Սելամլըքի արարողություններին ներկա գտնվել իրենց երկիր հյուպատոսի կողմից ստորագրված հանճնարարական չունեցող օտարահաստակներին: Դա գրեթե անհնարին էր դարձնում մարդապանի որդ թափանցելը:

Արդուլ Համիդին ոչնչացնելու խնդրին իրեն հատուկ անսպառ եռանդով ձեռնամուխ է լինում Քրիստոֆոր Միքայելյանը: Նման ձեռնարկը պահանջում էր հսկայական միջոցներ: Քրիստոֆորը անձամբ է մասնակցում այդ միջոցները հայթայթելու գործին: Նրա հեկավարությամբ հայ դրամատերից «ազգային տուրք»-ի հավաքման է ձեռնամուխ լինում Դաշնակցության «Փոթորիկ» ահարեկչական խումբը: Վերջապես, թեկու և մեծ դժվարությունների գնով հավաքվում են պահանջվող միջոցները: Այստեղ հարկ ենք համարում հերքել թուրք հետինակ Մուսթաֆա Թուրանի այն պետումը, թե իբր Օսմանյան դրամատան դեպքը, ապա նաև 1905 թ. Ելղզի մահափորձը հրահանգվել են սիոնիստների կողմից, որոնք իբր այդ զայտակով ֆիճանսակորել են հայ հեղափոխականներին: «Փոթորիկ» խմբի գործունեությունն ապացուցում է, որ հայ ազատագրական շարժումը բարոյական ու ֆիզիկական ծանր գոհողությունների գնով ինքն էր լուծում իր ֆիճանսական պրոբլեմները:

Գալիս է Վճռական պար և Դաշնակցության Մոֆիայի ընդհանուր ժողովը (1904 թ. հունվար) Պոլսում ու Իզմիրում ցուցական գործունեությունը վերսկսելու որոշում է ընդունում: «Երկրի շարժումներն անկախ գործ կատարել Վիշապի (Կ. Պոլսի – Հ.Գ.) մեջ այն պարագային միայն, եթե յոյս կայ հոյակապ ձեռնարկ մը գլուխ բերելու», - ասվում էր ընդհանուր ժողովի որոշման մեջ: Դրանով փաստորեն հավանություն էր տրվում Արդուլ Համիդի ահարեկման ձեռնարկին: Ընդհանուր ժողովն այդ նապատակով սահմանում է խոշոր բյուջե, և Քրիստոփորը գործի է անցնում: Արդուլ Համիդի կյանքի դեմ նա հղանում է ազգերի պատմության մեջ արձանագրված ամենախիզախ դավադրություններից մեկը և ինքն էլ ամբողջ եռությամբ նվիրվում այդ հանդուզն ձեռ-

նարկի իրականացմանը: «Աշխարհի հեղափոխական պատմության մեջ գուցե դա եզակի դեպքն է, գրում է Ավետիս Արարողյանը, - երբ քաղաքական կուսակցության անփոխարիների շեֆը ինքն է անձամբ նետվում ահաբեկումների սուկումների մեջ ուժանակը ձեռքին, երբ նա այնքան հեշտությամբ կարող էր իրեն փոխարինող ունենալ, ինքը մնալով գերազուն նեկավար»:<sup>1</sup> Սակայն դա անհարի էր Քրիստոփորի բնավորությանը:

Թուրքիայի, կովկասի ու Եվրոպայի այլ և այլ անկյուններից իր շուրջը հավաքելով համախոնների մի բազմազգ կոլեկտիվ, տարբեր գրադարանների ու դիրքի տեր մարդկանց, Քրիստոփորը՝ ծատված Սամուել Ֆայն անվան տակ, 1904 թվականից մինչև 1905 թ. գարունը անընդհատ շրջում է թուրքիայում ու Բալկաններում, ուսումնասիրում միջավայրը և մտմտում ծրագրեր: Նրա ծրագիրը չէր սահմանափակվում մահապատժով: Նախատեսվում էր միաժամանակ կամ կարճառու ընդմիջումներով հասցող հարվածներով խառնաշշիռություն առաջ բերել Պոլսում ու Իզմիրում, խոպվել միջազգային կարծիքը և փորձել այդ կերպ որևէ դրական լուծում պապուկել հայկական հաղոցի համար:

Վտանգի նեթարկելով իր կյանքը, Քրիստոփորը բազմից թափանցում է սուլթանի որշը, ներկա լինում ուրբաթօրերի Սելամլըքի արարողություններին՝ ճշտելով ամենաշին մանրութ անգամ: Այնուհետեւ նրան վիճակված չէր իրականացնել իր մտահղացումը, քանզի 1905 թ. մարտի 17-ին իր ընկեր Վումշապուհ Քենդիրյանի հետ ահաբետակեց Սոփիայի մոտ, Վիտոշի լանջերին՝ ձեռնադումբեր փորձարկելիս:

Չնայած առաջացած վհատությանը և Արդուլ Համիդի կողմից հսկողության խստացմանը, 4 ամիս անց Ելղզի պարիսպներից ներս ուսմբային պայտյունը այնուամենայիկ տեղի ունեցավ: Զեննարկն իրականացնելու նպատակով Վիճննայում գնվում և մեծ դժվարություններով Պոլսի է փոխադրվում արտասովոր շքեղությամբ մի կառք: Սելամլըքի արարողություններին բազմից ներկա գտնված հեղափոխականները սուլթանին ոչնչացնելու լավագույն միջոցը ժամացույցով լարվող դժվախային ներենան էին համարում, որը կառքին բարձած սուլթանին հանրապորին չափ մոտ պետք է կանգնեցվեր և անհրաժեշտ պահին պայթեցվեր՝ ող հանելով Մարդասպանին: 1905 թ. հունիսի 21-ին Սելամլըքի արարողությունից հետո, երբ սուլթանը պետք է վերա-

<sup>1</sup> Քրիստոփոր Միքայելյան, Հեղափոխակամի մտքերը, էջ 10:

Տե՛ս Հրանտ Գանգրումի, Հայ յեղափոխությունը օսմանեան բռնատիւթեան դեմ /1890-1910/, Պէյլութ, 1973, էջ 362-363:

Միքայել Վարանդեան, Աշխ. աշխ., էջ 364:

դառնար պալատ, Ռուբինայի ձեռքով լարված դժոխային մերենան ահավոր դղորյունով պայթեց, ոչնչացնելով կառ-ը, տասնյակ մարդկանց, ծիեր ու կառեր: Չոհվեց նաև քը, տասնյակ սամաթիացի Զարեհի՝ Օսմանյան դրամակառք վարող գրավող հերոսներից մեկը, որը պատրաստակամութ-տունը գրավող հերոսներից մեկը, որը պատրաստակամութ- ունը գրավող հերոսներից մեկը, որը պատրաստակամութ-

ունը էր հայտնել Վասպել կառքի հետ միասին: Սակայն Աբ- յուն էր հայտնել Վասպել կառքի հետ միասին: Սակայն Աբ- յուն էր հայտնել Վասպել կառքի հետ միասին: Սակայն Աբ- յուն էր հայտնել Վասպել կառքի հետ միասին:

Հազմաթիվ հաշումը մեջ նշանակություն ունեցած էր 42 վայրկյանում: Այդ նշանակությունը էլ լարվել էր ժամացուցը: Սակայն այդ օրը մզկիթից դուրս գալուց սովորաբար մի պահ հապաղել էր՝ խոսակցության բռնվելով Ծեխո-ուլ- հալամի հետ, և այդ հա- պահումն էլ փրկել էր նրա կյանքը:

Փրկելով հանդերձ՝ Մարդասպանին դեռևս հոգեկան ծանր ապրումներ էին սպասում: Անցնում էին օրեր, բայց ալդան էլ պարզ չէր դառնում, թե ում ձեռքի գործն էր կա- տարված պայթյունը: Մինչդեռ մեկը մյուսի, եւսնից տարած- վում էին ֆանտաստիկ լուրեր հեղափոխականների կողմից Օսմանյան դրամատունը, թումելներն ու կամուրջները պայ- թեցնելու և օդապարհկներով դժոխային մերենաներ պա- լատ փոխադրելու պլանների մասին՝ պակելի սաստկացնե- լով բռնակալի վախը: Կատարված դեպքերի մասին բավա- կանին հետաքրքիր, թեև ոչ ճշգրիտ բացատրություն է տա- լիս Համիդի եռանդուն պաշտպան, թուրք պատմաբան Դա- նիշմենտը: «...Քոմիթամիններու նպատակը, - գրում է նա, - Փատիշահը օդը հանելէ ետք, Բ. Դուռ, Կալաթայի կամուր- ջը, Փապուչին, Օսմանեան դրամատունը, օտար դեսպանա- տուններու հետ Սերլը տ’Օրիանը եւ այլ պաշտօնական տե- ղական եւ օտար հաստատութիւններն ալ օդը հանելով, չ- տեսնուած խառնակութիւն մը հանելով մայրաքաղաքը ա- ռիմի եւ կրակի մէջ ձգելով օտար պետութեանց միջամտու- թեան պատճառ ըլլալ եւ այդ կերպով հայկական հարցը լու- ծել խորհած էին»:

Ինքը՝ Աբդուլ Համիդը առաջին պահին հակված էր թշնամուն փնտրել ներսում: Նրա հրամանով նույնիսկ ձեր- բակավում է զահաժառանգ Ռենչատը: Սակայն, ի վերջո, կատարված բազմաթիվ ձերբակալություններից հետո ոս- տիկանությունը վերջապես գտնում է «Զինգեր» ընկերութ- յան պաշտոնյա, անիշխանական, ծնունդով բելգիացի Ժո- րիսի հետքը, որը մահափորձի գլխավոր հերոսներից էր: Նա համարձակորեն խոստվանում է իր մասնակցությունը, սա- կայն հրաժարվում է մատնել իր հայ ընկերներին՝ տալով

միայն մեռածների ու փախածների անունները: Ժորիսը դա- տապարտվում է մահապատճի, սակայն Բեղջիայի և մի քա- նի այլ կառավարությունների միջամտությամբ ազատ է ար- ձակվում և վերադառնում իր հայրենիքը:

Պատահականորեն բացահայտվում է նաև Քրիստա- փորի դավադրական ծրագրի երկրորդ մասը: Դրանք դա- վադրական մի շաբթ ձեռնարկներ էին, որոնք պետք է իրա- կանացվեին իզմիրում Ելլեզի մահափորձից հետո, որոշա- կի հաջորդականությամբ: Նախատեսվում էր սուլթանի մա- հափորձից 8 օր անց սկսել և 8-10 օրվա ընթացքում ուժա- նակով պայթեցնել Եվրոպական բոլոր հաստատություննե- րը, առաջին հերթին դրամատները, կառավարական պալա- տը, մաքսատունը, փոստը, երկարուղային կայարանները, կամուրջները և այլն: Այդ բոլոր օբյեկները նախապես է- լեկտրական ժամացուցներով, էլեկտրական թելերով և պայթյուղիկներով կազմ ու պատրաստ վիճակում էին: Դժո- խային մերենա էր տեղադրված նաև Կրետի Լիոնների դրամա- տան դրամարկներից մեկում այն օդ հանելու մտադրութ- յամբ: Սակայն Ժորիսի թղթերի մեջ գտնվում է իզմիրցի դաշնակցական Տիգրան Նալբանդյանի հասցեով չեքով ու- ղարկված գումարի մի արձանագրություն, որի հետևանքով իզմիրում նույնպես խուզարկություններ ու ձերբակալութ- յուններ են կատարվում և ամբողջ ծրագիրը ձախողութ- յուններ է:

Մեծ Մարդասպանի ահաբեկման փորձը, շնայած մշակված պլանի վիթխարիությանը և ունեցած լայն արձա- գանքներին, ձախողություն է: Սակայն իր հերթին Սուլթանն էլ չի համարձակվում կրկին դիմել շարդերի փորձված միջո- ցին: Այդ հանգամանքը բացատրվում է մի շաբթ պատճառ- ներով:

Նախ՝ բավականին ժամանակ անցավ, մինչև բացա- հայտվեցին մահափորձի հեղինակները և այդ ընթացքում ո- րոշակիորեն թուլացավ լարվածությունը:

Երկրորդ՝ մահափորձի միջազգային արձագանքները և ահաբեկիչների արարքի դատապարտության չարժանանա- լը զգաստացրին Համիդին: Նա հասկացավ, որ Եվրոպա- կան կարծիքն իր հետ չէ և նոր շարդերն իր համար հղի են վտանգով:

Եվ վերջապես, իրենց թուրքերի մեջ էլ միասնական չէր կարծիքը տեղի ունեցածի վերաբերյալ: Եթե Օսմանյան դրամատան գրավման օրերին Համիդը պաշտպանություն գտավ անգամ իր թշնամի թուրք ընտրիմադիրների կողմից,

<sup>1</sup> Մահասահ մոտ իրադարձությունները ներկայացվում են մի փոքր այլ կերպ: Տե՛ս Մայնա, Ապրումներ, Ա հատոր, Պէյրութ, 1956, էջ 381-382:

<sup>1</sup> Տե՛ս Գորգէն Եազրծեան, Ապտիկ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէ- րութ, 1980, էջ 416:

ապա այս դեպքում պատկերն այլ էր: Հայ Վրիժառումների նկատմամբ համակրանքի արտահայտություն էին մասնակիրապես բանատեղ Թևսիք Ֆիքրեթի գրած հետևյալ տողերը Ելորզի դեպքի մասին:

«Ով համբավավոր որտորդ, տաճիք ի զուր չկառուցիր. Նետեցիր, սակայն մեղք, շատ մեղք, որ չկրցար զար- նել»:

Իր մեծ արձագանքներով համդերձ՝ Ելորզի պայքայունը գնում էր պատմություն դատնալու: Այն նամանատիպ վերջին խոչըն ձեռնարկն էր: Մոտ հետանկարում երիտթուրքական թեղաշրջումն էր, որը գալիս էր վերջ տալու Օսմանյան բռնակալության դեմ ծավալվող հայկական Վրիժառությանը և փակելու հայ ահարեկչության առաջին շրջանը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ահարեկչությունը չսահմանափակվեց միայն արևմտահայ իրականությամբ: 1903-1907 թթ. ամենահանդուզն ահարեկչական ձեռնարկների թատերաբեմ դարձավ Կովկասը: Տաճամակներ շարունակ ցարիզմն այստեղ վարում էր մեծապետական, գաղութային քաղաքականություն, որն ուղղված էր նաև արևելահայության ազգային շահերի դեմ: Պարբերաբար փակվում էին հայկական դպրոցները, ամենախիստ գրաքննության էին ենթարկվում մամուլի օրգանները, հսկողության տակ էին քարեգործական և մշակութային-լուսավորական հաստատությունները, ուժնահարվում էին հայ եկեղեցու իրավունքները: 1890 -ական թվականներին այս ամենին գումարվում է նաև ցարիզմի բացահայտ թշնամական վերաբերմունքը Հայկական հարցի համենա: Հաճախակի են դատնում Արևմտա-Հայաստան շտապող զինված խմբերը ջախչախելու ոուս-թուրքական համագործակցության դեպքերը: Արևելահայությունն ատամները սեղմած իր վրա էր ընդունում այս բոլոր հարվածները, չնայած նրա աչքում գնալով խամրում ու գունաթափակում էր «ազատարար Ռուսաստանի» լուսապսակը: Այդ պայմաններում էլ նա դիմավորեց հայ եկեղեցու կալվածները բնագորավելու մասին 1903 թ. հունիսի 12 -ի օրենքը: Ցարիզմը կոիկ էր հայտարարում հայությանը: Վիթխարի պետական ապարատն իր ողջ ծանրությամբ փուլ էր գալիս հայության վրա: Սակայն վերցինս նկուն մարմինը տեղի չտվեց և թողություն չաղերսեց:

Մարտահրավերը նետված էր, և արևելահայությունն ինդունեց այն: Ուրի կանգնեց երբեմնի հյու կովկասահայը, ուղեց իր կորացած մեջքը և ուժ տվեց բազուկներին: Ուժգնացավ ու պոռթկաց տաճամյակների ընթացքում նրա հոգում ատելի ցարիզմի դեմ կուտակված զայրույթը: Հանդես

եկավ Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն՝ որպես հայության հավաքական կամքի արտահայտիչ: Կովկասի հայաբնակ վայրերը ժողովրդական զանգվածային ցուցերի, ոստիկանության, կազմակերի ու զորքի հետ բախումների և բողոքի այլ դրսերումների ապարեզ դարձան: Ցարիզմի դեմ պայքարի ձևերից մեկն է դատնում ահաբեկչությունը: Համարձակորեն ասպարեզ են նետվում հայ հեղափոխական կուսակցությունները, որոնք իրենց վրա են վերցնում ահարեկչական ամենահանդուգն գործողությունների կազմակերպումն ու իրականացումը:

Անցնում է կարճ ժամանակ: Գալիս են 1905-1906 թվականները: Անդրկովկասն այս անգամ ցնցվում է հայ-թաթարական կոիկներից: Բաքուն ու Թիֆլիսը, Երևանն ու Գանձակը, Զանգեզուրը ու Նախիչևնը, Ծուշին ու ողջ Ղարաբաղը վերածվում են ուազմարեմի: Այս անգամ արդեն վտանգի տակ է դրվում արևելահայության ֆիզիկական գոյության հարցը: Հայկական ինքնապաշտպանության կազմակերպումն իր վրա է վերցնում Դաշնակցությունը: Այդ բախուրոշ պահին արևելահայության օգնության են շտապում արևմտահայ լավագույն կովող ուժերը, որոնք շատ վայրերում վճռական դեր են խաղում ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Համազգային այդ պայքարում իրենց կարևոր դեր ունեին կատարելու նաև հայ Վիժնական դատապահությունը, գնդակն ու ոումբը: Պատահական չէ, որ կոիկների շրջանում տեղի ունեցած հայ-թուրքական համագումարում թքքության ներկայացուցիչներն առանձնակի թշնամությամբ էին արտահայտվում հայ ահարեկչության մասին՝ այն համարելով գլխավոր չարիք:

Վրիժառության գաղափարն իսկապես համաժողովրդական էր այդ օրերին և ընդգրկել էր արևելահայության բոլոր խավերը՝ անկախ դասակարգային ու կուսակցական պատկանելությունից: Այդ հանգամանքը նիկոլայ 2-րդ ցարին ուղղված իր գեկուցու հարկադրված էր խոստովանել նաև կովկասի փոխարքա Վորոնցով՝ Դաշկովը: «...Եկեղեցական գոյքերի գրաւումը, - գրում է նաև, - Վիրաւորել է ժողովորդի բարոյական զգացումը և նրան համարեան գլխովին առանց դասակարգի ու կացութեան խսրութեան, նետել յեղափոխական շարժման մեջ: Այն ահարեկչական ակտերի մեջ, որ գործադրվում էին կառավարական իշխանութեան ներկայացուցիչների դեմ, որոնք այսպես թէ այնպես առընչություն ունեին գոյքերի գրաւումն ինեւ, մասնակցում էին անողակի, եթե ոչ դրամով՝ գոնե համակրանքով, բոլոր կով-

<sup>1</sup> Տե՛ս Դ. Առանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երրորդ, (1901-1918), Վեճստիկ, 1926, էջ 210-211:

կասեան, գուցե և Ռուսատանի շատ հայեր...»:<sup>1</sup> Ծարումակելով իր միտքը, փոխարքան նշում է, որ «հայերի համակրանքն ամեն մի ահարենչական ակտի նկատմամբ այնքան էր ակնյայտնի, որ նոյնիսկ Քութայիսի նահանջի խրտումները, որ հայ չկա ամենեւին, վերագրում էր նրանց սադրանքներին...»:

Երկար սպասեցնել չտվեց իրեն հայկական Վրիժառությունը Կովկասում: Հայ Վրիժառուի պատժի ձեռքն առաջին հերթին ուղղվեց «հարազատների» ներքին հակառակորդների դեմ: Քիչ չեր նրանց թիվը, որոնք անընդունակ գտնվեցին ըմբռներու րոպեի իմաստը, ստորացուցիչ թուլության նշաններ ցույց տվեցին՝ համակերպելով ցարական հրամանին և համագործակցելով իշխանությունների հետ: Ժողովրդական ցասումը նրանց դաշվաճան ամունը տվեց, իսկ Վրիժառուի պատժի ձեռքը ամենուրեք սաստեց նրանց, հաշվի չառնելով կոմկրետ անձնավորությունները: Հայ ահարենչի գնդակին ու դաշույնին արժանացան հայազգի պաշտոնյաներ, գյուղական տանուտերեր, լրտես քահանաներ ու թուլամորթ երեցփոխներ: Ահա նրանց մեջ Սարգսի Փորոյանը, Ստեփան Գեղամյանը և Անտոն Լոյլյանը՝ սպանված էշմիածնում եկեղեցական գույքը գրավող համար, ահա Ախալքալաքի Կորիս գյուղի քահանա Տեր Խաչատուրը՝ խեղդամահ արված, Տեր Գարեգինը՝ զնդակահարված Ղուրդուղովիում, քահանա Ալեքսանդր Տեր-Հովհանիսյանը՝ սպանված Թիֆլիսում, հաջորդարանի ծառայող Վահան Նազարեթյանը՝ դաշունահար Ախալցխայում, լրտես Կիրակոս Պետրովյանցը սպանված Կարսի Պարգետ գյուղում... Երկար կարելի է շարունակել այս ցուցակը:

Ամենուր էր հայ Վրիժառուն՝ Կովկասի հայարենակ յուրաքանչյուր անկյունում: Նրա պատժի ձեռքը սաստում էր ամենքին և թուլամորթ ու քննող եկեղեցական սպասավորներն ու պաշտոնյաները, հայտնվելով երկու կրակի արանքում, ծեծը, բանտարկությունը, պաշտոնը կորցնելով ու աքսորը գերադասում էին եկեղեցու ունեցվածքը գրավող համաձայնությունի աշխատանքներին մասնակցելուց կամ իրենց տնօրինության տակ եղած գույքը համձնելուց:

Նման ծայրահեղ միջոցների ներգործությամբ սահմանափակվում էր ներքին թշնամիների թիվը, բարոյապես մաքրվում ներազգային մթնոլորտը և հզոր ու ազդեցիկ

դառնում համազգային պայքարն ընդհանուր թշնամու դեմ շփոթեցնելով ու սարտեցնելով նրան: Անշուշտ, այդ պայքարն ունեցավ նաև իր ծայրահեղությունները: Հակական ինքնապաշտպանությունը մի տեղ մերժում էր խղճի ազատությունը՝ սպանելով ուղղափառություն ընդունած հայուհուն, մեկ այլ տեղ կոտորում իր դատերը ուսւ ուստիկանին կնության տված գյուղացու ընտանիքը, մի երրորդ վայրում մերժում այն ամենը ինչ ուսական էր... Եվ ամենին էլ հայությունը չէր դրանու մեղավորն ու պատասխանատուն: Ծիշը է նկատում Դ. Անանունը, թե «օրինականութեամբ չէ, որ կուում է կառաւարութիւնը հայութեան դեմ: Օրինակպատեամբ չէ բնականաբար պաշտպանում և հայութիւնը»:<sup>2</sup>

Ավելի հանորդն ու խոլական էր հայ Վրիժառությունը ցարական պաշտոնյաների սանձահարման խնդրում: Արևմտահայ իրականության մեջ թուրք պաշտոնյաների ահարեկման հարցում սովորաբար գուսակ և գգուշավոր հայ Վրիժառուն Կովկասահայ իրականության մեջ պաշտոնյաների ահարեկման հարցում ստանում է ազատ գործունեության սապարեզ: Դա բացատրվում է նրանով, որ պատեղ պայմաններն ավելի նպաստավոր էին պայքարի նման ձևի կիրառման համար:

Ժողովրդական ցասումը փնտրում էր գյանվոր հանցավորին, և ամենքն էին համամիտ այն հարցում, որ հումիսի 12-ի օրենքի իրական հեղինակը կառավարչապետ Գոլիցինն է: Նա առաջին բարձրաստիճան ուսւ պաշտոնյան էր, որի վրա բարձրացավ հայ Վրիժառուի ձեռքը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին, երբ կառավարչապետը կառուկ սովորական պտույտն էր գործում Թիֆլիսում, հնչային 3 Վրիժառուներ ցատկելով կառքի վրա, դաշույնի հարվածներ են հասցնում նրան: Միայն ամուսնուն պաշտպանող իշխանութու և ուղեկից կազակի միջամտությունը Վրիժառուներին խանգարեց մինչև վերջ իրականացնել իրենց առաքելությունը: Կառքը լացավ՝ իր հետ տամնելով վիրավոր իշխանին, իսկ Վրիժառուները մինչև վերջին փամփուշտը դիմադրեցին իրենց շրջապատած կազակներին և զոհվեցին՝ երշանիկ այն մտքից, որ «Վրեմի գործը» կատարված է: Թեև Գոլիցինը միայն վիրավորված էր, այնուամենայնիվ հայությունը թերեւացած շունչ քաշեց: Ակիտսանքի ու դատապարտության ոչ մի խոսք չլսվեց նրա շուրջերից: Եվ մինչ հապատակ ուսւները, վրացիները, հրեաներն ու թուրքերը ստրկամիտ մաղթանքներ էին կատարում Գոլիցինի առողջության համար, հայ-լուսավորչական զանգակատները պահպանում էին գերեզմանային լուսավորում:

<sup>1</sup> Դ. Անանուն, Աշվ. աշխ., էջ 53:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 369:

«Ոչոք չհամարձակվեց ծպուտ անգամ հանել ստրկի պարտը կատարելու համար, - գրում է Լեռն, - Արգելված էր: Արգելողները հեղափոխականներն էին: Մի շատ ազդու, շատ հանդուզն ցույց էր այդ զանգային ցույտը լուսաթունը: Նա բացատրում էր ուս բյուրոկրատներին, թե հայերը կատարյալ պատերազմի մեջ են գրանց դեմ»: Չնայած Գոլիցինը կենդանի մնաց, սակայն 1904 թ. հունիսի 28-ին արձակուրդ գնաց և այլևս չվերադարձակ կովկաս:

Գոլիցինի ահաբեկումը ինքնակալության դեմ ահաբեկչական պատերազմի սկիզբն էր միայն: Նման պայմաններում Կովկասի հայարենակ լուրաքանչյուր գավառ ու քաղաք ունեցան իրենց դրաման: Թիֆլիսն ու Բաքուն, Երևանն ու Կարսը, Ալեքսանդրապոլն ու Գանձակը, Ծուշին ու Խոբիրը, Բաքումն ու Օլթին և հայարենակ տասնյակ այլ բնակավայրեր ականատեսը եղան ամենահանդուզն ու խոլական վրեժիննդրական ձեռնարկների: Տասնյակ մեծ ու փոքր հշխանավորներ, պաշտոնյաներ ու ոստիկաններ դաժանության ու հայահալած գործունեության համար հատուցեցին կյանքով:

Արա Գանձակի հայության 1903 թ. օգոստոսի 29-ի շարդի հետինակ, փոխնահանգապետ Անդրեևը՝ սպանված ատրճանակի 5 գնդակներով 1904 թ. հունիսի 4-ին Հաջիբենդում:

Արա Սուրմալուի հայության դահին, հայատյաց բոնակալ, գավառապետ Բոգուլյավսկին, որը 12 տարի փոքրիկ ցար էր Սուրմալում, բրացանագարկ եղած Խոբիրում, 1904 թ. հունիսի 10-ին:

Արա Թումանի խմբի ջարդարար և հայ հայուկների դիակների վրա խնդույք սարքող գնդապետ Բիկովը՝ գնդակահար Օլթիում, 1904 թ. օգոստոսի 31-ին Համո Զանիոնայյանի վրիժառու ձեռքով:

Արա Թուրք գնդապետ Ծերիֆ բեյը՝ ոս և թուրք սահմանապահների միջև կապեր ստեղծողը և խանի ու Նկրուզի խմբերի ոչնչացմանը նպաստողը, գնդակահար Կարսում՝ դաշնակցական ահաբեկիչներ Գարեգինի և Քյոսայի ձեռքով:

Արա Բաքվի հահանգապետ իշխան Նակաշիձեն՝ Էջմիածնի կալվածքներն ու հարստությունները հաշվառող հանձնախմբի նախագահը և Բաքվի հայերի 1905 թ. փետրվարի ջարդերը հրահրողը, ոմբահարված Դրաստամատ Կանայանի (Դրո) վրիժառու ձեռքով 1905 թ. մայիսի 11-ին:

<sup>1</sup> Հեռ. Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 139:

Արա Գոլիցինի գլուղացիության և Նախիջևանի հայության դահին, բարար գորակար Ալիխանով Ավարսկին՝ գնդակահարված Ալեքսանդրապոլում Դրոյի և Մարտիրոս Զարուհյանի ձեռքով, 1907 թ. ամուսնությունը:

Արա ոստիկանապետ Սահմարովը, հարկային տեսուչ Ծերբակովը, պրիստավ Ծումակիչը, պրիստավի օգնական Ֆլոդորովը, ժամդարմ Պողոշիկալովը, գաղտնի ոստիկան Խասինը, պաշտոնյաներ Բարդիկը և Կոպտանովը՝ սպանված Ծուշիում, պրիստավի օգնական Սավանեին, ժամդարմների թարգման Գրոզովովը՝ սպանված Կարսում, գավառապետի օգնական Պավլովը և պրիստավ Նաշշանկին՝ սպանված Ալեքսանդրապոլում, կազմակ սպա Գնուտովը՝ սպանված հզդիրում... Եվ աս ամեններն էլ ամբողջական պատկերը չէ այն ահաբեկչական պատերազմի, որ միում էր կովկասահայությունը ցարական բյուրոկրատիայի հայատյաց մերկայացուցիչների դեմ: Նրանցից ոմանք՝ սարսահած հայ Վրիժառության թափից, գերադասում էին լրել իրենց պաշտոնավայրերը և փախչելով Ռուսաստան, խուսափելով Վրիժառուի գնդակից: Թեև պետք է խոսուվածել, որ ամենքին չէր հաջողություն այդ կերպ փրկվել արդարացի պատժից: Եթե Եջմիածնի սինոդի դատախազ Կանչելին, որը ստորև և ստահող զեկուցագրերի հետինակ էր և առաջին ներից մեկն արժանի ահաբեկման, կարողացավ սարսահար փախուստով փրկել իր կյանքը, ապա, օրինակ, Երևանի թքամոլ պաշտոնյա Կենգերլինսկուն դա էլ չօգնեց, քանզի Նիկոլ Դումանի ուղարկած ահաբեկիչները նրան բնակության մինչև բաթում, որտեղ էլ ի կատար ածկեց մահավճիռը:

Հսկայական էին հայ Վրիժառության մասշտաբները Կովկասում, ու ուժգին էր վրեժիննդրական հարվածների թափի: Դրանց շռնդպից արձագանքները հասնում էին Անդրկովկասի բոլոր անկյունները՝ ան ու սարսափի մատնելով ցարական մեծ ու փոքր պաշտոնյաներին: Սակայն, այդ բոլորով հանդերձ, հայ Վրիժառությունը մնում էր ինքնաշխատ պաշտպանության շրջանակներում և ընդհանուր առմամբ իր առջև չէր դնում համապետական մասշտարով գոյություն ունեցող կարգերը հեղափոխելու նպատակ: Ծիծու է, հայ ազատագրական պայքարի գլուխ կանգնած ամենաազեցիկ կուսակցությունը՝ դաշնակցությունը, որի ուսերին էր հիմնականում ծանրացած հայ Վրիժառության հոգուր, 1904 թ. դեկտեմբերին մասնակցում է Ռուսաստանի հեղափոխական և ընդդիմադիր ուժերի՝ Փարիզում գումարված համաժողովին և համաձայնություն հայտնում իր մասնակցությունիցին:

Եղ բերել ցարական բոնապետության տապալման գործից<sup>1</sup>, սակայն այդ հանձնառությունը փաստորեն մնում է թորի վրա, քանի որ շուտով սկսված հայ-թաթարական ընդհարությունները կրկին զայիս են շենքու հայության ուշադրությունը համառուսական խնդիրներից: Եվ եթե դեռ շարունակվում էին ահաբեկությունները, ապա դրանք ուղղված չէին պարզապես ցարական պաշտոնյաների դեմ և նպատակ չէին հետապնդում խարխլել ցարիզմի հիմքերը: Դրանք հայ-թաթարական ընդհարությունների ընթացքում հայահալած գործունեությամբ աչքի ընկած պաշտոնյաների դեմ կրեժխնդրական ձեռնարկներ էին: Թեև հայ ահաբեկությունը տեղ-տեղ կարծես փորձ էր անում դուրս գալ զուտ ինքնապաշտպանության շրջանակներից և ստանալ հարձակողական երանգ: Այդ մասին է վկայում 1905 թ. մայիսին Դաշնակցության կողմից Կովկասում հրապարակված նշանավոր հայտարարությունը: «Հ.Յ.Դ. սրանով յայտարարում է բոլոր ոստիկաններին, ստրաժներին, ոստիկանապետներին, գաւառապետներին, ժամանարմաներին, - ասկում էր նրանում, - որ այսուհետև նրանցից իրաքանչիրը անխնայ կերպով կոչնչացուի, եթե համարձակուի հայերի ձեռքից գենք խել, խուզարկութիւն կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իրաքանչիրը նախքան այդ տեսակ գործ սկսելը յիշել Բագուի նահանգապետ Նակաշիցէին, Գանձակի փոխ-նահանգապետ Անդրէնին... և որիշ շատերին, որոնք Հ.Յ.Դ. վճռով մահուան պատժին են արժանացել»:<sup>2</sup>

Նման երևությունները, սակայն, էսպիոնիկ էին: Եվ երբ Անդրկովկասում հեղափոխական խրուտումները, բնականարար առաջին հերթին հայկական շարժումները, թուլացնելու նկատառությունը նկողուայ 2-րդը 1905 թ. օգոստոսի 1-ին չեղալ է համարում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, դա անմիջապես իր ազդեցությունն է թողնում նաև Անդրկովկասում հայ ահաբեկության վրա: Ավարտվում է այն ընդհանուր ահաբեկչական պատերազմը, որ մղում էր հայությունը ցարիզմի դեմ: Այդ փաստն արձանագրում է նաև Վորոնցով Դաշկովը ցարին ուղղած իր գեկուցագրում, շեշտելով, որ 1905 թ. օգոստոսի 1-ի որոշումից հետո «հայերի մասնակցութիւնն ահաբեկչական ակտերում նկատելիօրէն յանկարծակի պակասում է»: Ծիշտ է, դրանից հետո էլ մի որոշ ժամանակ Անդրկովկասի այս կամ այն վայրում դեռևս իրեն զգացնել էր տալիս հայ վրիժառողի պատժի ձեռքը, սակայն դա ավե-

լի շուտ թելադրված էր հայ-թաթարական ընդհարությունների հետևանքով ստեղծված դաժան անհրաժեշտությամբ:

Ինչպիսիք է են շուրջ 4 տարի տևած հայկական ահաբեկչության արդյունքներն Անդրկովկասում: Արդյո՞ք հայկական դիմադրության և մասնավորապես ահաբեկչության դերը իրոք շատ սահմանափակ էր, և նրանց չեր պարտական հայությունը, եթե կրկին եւս էր ստանում եկեղեցական կալվածներն ու դպրոցներ բացելու իրավունքը, այդ Ռուսական հեղափոխության, ինչպես պնդում է Ռ. Անանունը, կամ էլ ճապոնական զենքի հաղթանակին, ինչու միորեն է համոզել Լեռու<sup>3</sup>: Իհարկե չենք ժխտում, որ թե՛ Շապոնիայի դեմ պատերազմում ցարիզմի պարտությունը, թե՛ Ռուսական հեղափոխության սրբնթաց ծավալումը իրոք թուլացրին ցարիզմի դիրքերը՝ նպաստելով արքին ընդունված հականակական օրենքների չեղայի հայտարարմանը: Սակայն միամտություն կիրակ կարծել, թե ցարիզմը կզնար այդ քայլին, եթե դրան չնախորդեին հայերի զանգվածային ելույթները և հատկապես ցարական բյուրոկրատիայի ներկայացուցիչների դեմ մղվող ահաբեկչական պատերազմը: Չե՛ որ ցարական շնորհը նպատակ էր հետապնդում չեղոքացնել հենց այդ գործուները: Այսպիսով, ցարական 1905 թ. օգոստոսի 1-ի որոշումն առաջին հերթին և գլխավորապես արդյունք էր դրան նախորդած շուրջ երկամյա այն համառ պայքարի, որ մղում էր կովկասահայությունը ցարիզմի դեմ և այդ պայքարում կարևոր էր հայ վրիժառության դերը:

Վերապահումով պետք է ընդունել նաև Լեռոյի այն կարծիքը, որ հայ ահաբեկչությունը դրական արդյունքներ չունենալով, նաև նպատակահարմար չեր, քանի որ ավելի ուժեղացնեց ցարական բյուրոկրատիայի թշնամանքը հայության նկատմամբ, և նրանք հայության դեմ հրահրեցին կովկասահայության թքությանը՝ սանձազերելով հայ-թաթարական ընդհարությունը: Իհարկե, հայ վրիժառության պատճառով ուս պաշտոնյաների աշառու և թշնամական վերաբերմունքը հայ-թաթարական ընդհարությունների շրջանում ակնհայտ փաստ է, որը ստիպված խոստովանում է նաև Վորոնցով Դաշկովը<sup>4</sup>: Սակայն հայ-թաթարական ընդհարությունները միայն դրանով բացատրելը ճիշտ չէ: Դրանց հիմքում ըն-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Հազեան, Հայաստան եւ հայ դատը, Երևան, 1991, էջ 131-133:

<sup>2</sup> Տե՛ս Հեռ, Անցյալից, էջ 159-160:

<sup>3</sup> Տե՛ս Հեռ, Անցյալից, էջ 144:

<sup>4</sup> Տե՛ս Դ. Անանուն, Աշվ. աշխ., էջ 213-214:

կած էին տնտեսական, քաղաքական, կրոնական, մշակութային, ազգային-հոգեբանական բավականին լուրջ պատճառներ, որոնց վերլուծությունը, սակայն, դուրս է սույն հետազոտության շղանակներից: Եթե անգամ լիովին ընդունենք Լեոյի փաստարկը, ապա դարձյալ դժվար չէ որդությունը կերպության համար՝ թե գերադասելի հայության համար՝ ստրկական համբերությամբ ազգային արժանապատվությունը ուժանահարող հարվածներ ստանալը և իշխանությունը ների <բարեհաճությունը> ձեռք բերելը, թե ահաբեկիչ պետությանը ահաբեկմամբ պատասխանելը, թեկուզն դրա համար հարկ լիներ կովկասի թրոքության դեմ պատերազմել: Հայությունը գնաց երկրորդ ճանապարհով և կարծուրույն քաղաքական գործոն դառնալ Անդրկովկասում:

1903-1907 թվականների քաղաքական բույն պալքարից կովկասահայությունը, որին բոլորը սովոր էին տեսնել հնագանդ, ստրուկի վիճակում, ընդհանուր առմամբ դուրս եկավ շահած, զլուխը բարձր և ավելի ուժեղ: Այն դարձավ կովկասի քաղաքական կյանքը որոշող գործոններից մեկը, որի հետ արդեն հարկադրված էին հաշվի մատել բոլորը: Եվ այդ գործում իսկապես անուրանալի էր հայ վրիժառության դերը:

#### ՀԱԿՈՐ Վ. ՀԱԿՈՐՅԱՆ

### ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՄԱԿՈՒ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ - ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Տարագրված ժողովուրդների համար դարեր շարունակ հայրենիք վերադառնալու գաղափարը եղել է սոսկ գաղափար, ազգային բաղանք և չի դարձել միջազգային-իրավական նորմ: Այժմ էլ չկան վերադարձի իրավունքը միջազգայնորեն հաստատող հատուկ կոնվենցիաներ և այլ փաստաթղթեր: Այսօր հայրենիք վերադառնալու իրավունքը իր միջազգային-իրավական նորմ հանդիպում է զանազան կոնվենցիաներում և արձանագրություններում, ավելի կոնկրետ համար՝ երկողմ և բազմակողմ պայմանագրեան դեպքերի համար՝ երկողմ և բազմակողմ պայմանագրում, առանձին դրույթների կամ հոդվածների ձևով շարերում, առանձին դրույթների կամ հոդվածների ձևով շարադրված է մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող համընդհանուր նշանակության միջազգային փաստաթղթերում:

Բնականաբար, եթե հայրենիքությունը հետևանք է ցեղասպանության ու բռնագաղթի, ինչպես հայերի պարագայում, զանգվածային վերադարձ հայրենիք կարող է լինել ոչ միայն ազգային դասի արմատական լուծման արզակիք, ինչպես դա տեղի ունեցավ հրեաների պարագայում, այլև ինքնուրույն քննարկման և կարգավորման արդյունք, որուակարգից շիանելով ազգային դասը (օրինակ՝ Հայ Դատություն) ամբողջությամբ վերցրած:

Բանն այն է, որ հայրենիք վերադառնալու խնդիրը կարող է լուծվել կապված այս կամ այն պետության մեջ կատարված միջազգային ոճի համար նրա պատասխանատվության հետ, եթե նոյնիսկ տեղի են ունեցել քաղաքական լուրջ փոփոխություններ այդ պետության կյանքում ընդհուպ մինչև նոր կարգերի հաստատումը: Նման դեպքերում միջազգային ոճի, մասնավորապես ցեղասպանության (գենոցիդ) հետևանքների բռնի տեղահանության (ու-

րում միջազգային ոճրի, մասնավորապես ցեղասպանության (գենոցիդ) հետևանքների՝ բռնի տեղահանության (դեպորտացիա), հայրենազրկման (ապոլիտիզմ), ապատրիդիզմ), փախստականների պրոբլեմների վերացման պահանջը բխում է միջազգային-իրավական համապատասխան սկզբունքներից ու նորմերից և կարող է կարգավորվել մինչև խնդիր ամբողջական ու արմատական լուծումը:

Եթե տարագրված ժողովրդի ազգային դատն ստանա արմատական լուծում, ինչպես հրեաների պարագայում, ապա հայրենիք վերադառնալու և ազգային պետականությունը վերածնելու խնդիրները կլուծվեն՝ միաժամանակ և առանց ինքնորոշման ակտի անհրաժեշտության: Հակառակ դեպքում, եթե հայրենիք վերադառնալու իրավունքը ճանաչվում է առանց ազգային-պատմական տարածքում սեփական պետականություն ունենալու իրավունքի, ապա դա ապացուցում է, թե վերադարձի իրավունքի ճանաչումը դեռևս չի նշանակում ճանաչել տարագրված ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մինչդեռ հայրենիք վերադառնալու իրավունքի մերժումը հակասարազոր է ինքնորոշման իրավունքը մերժելուն առիսասարակ: Այդ դեպքում, ինչպես իրավամբ նկատում է Յ. Բարսեղովը, Կշռափեն նաև պետության և անձի հարաբերությունները, քանզի չի կարող խոսք լինել մարդու իրավունքների ու ազատությունների մասին, եթե չի ճանաչվում նրա Կոլեկտիվ իրավունքը, ժողովրդի ինքնորոշման իրավունքը, և, ընդհակառակը, անկարելի է իրավանացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները:

Այդ փոխադարձ կապը և փոխադարձ պայմանավորվածությունը մատնանշում է, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ., դեկտեմբերի 16-ի 637 (ՍՊ) քանաձնը, որի մեջ նշվում է, որ «ժողովուրդների ինքնորոշման իրավունքը նախապայման է հանդիսանում մարդու բոլոր հիմնական իրավունքներից օգտվելու համար»:

Բայց Արևոտքի մեծապետական դեմոկրատիզմով տառապող կառավարություններին չի հնետաքրքրում վերոհիշյալ փոխադարձ կապը և պայմանավորվածությունը: Նրանց համար շատ ավելի կարևոր է ՆԱՏՕ-ական դաշնակցային կապը Թուրքիայի հետ: Կասկածից դուրս է, որ եթե ԵԱՀՆ-ն փորձեր ճանաչել բռնագաղթված ժողովուրդ-

<sup>1</sup> Ю.Г.Барсегов, «Право на самоопределение - основа демократического решения межнациональных проблем.» К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, стр.28.

ների հայրենիք վերադառնալու իրավունքը, ապա կհանդիպեր Թուրքիայի կատարի որմանարությանը: Սակայն նման փորձ չի արվել ոչ Հեղսինկիում, ոչ Մադրիդում և ոչ Էլ Վիեննայում ու Փարիզում: Մինչդեռ բռնագաղթվածների պարագան, անկախ հայերի խնդրից՝ պետք է լինի մարդու իրավունքների պաշտպանների հավակնություն ունեցող պետությունների և նրանց միջառավարական կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի և ԵԱՀՆ-ի մտահոգության առաջնահերթ առարկան իրեւ առանձնահատուկ կարևորության խնդիր: Հստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալիի՝ ընշաղրկության, հիվանդությունների, սովոր, հայածանքների, հուսահատության և զինված կոնֆլիկտների հետևանքով աշխարհում կան 17 միլիոն փախստականներ և 20 միլիոն տեղահանվածներ:՝<sup>1</sup> Մեր համոզմամբ այս թվերը չեն ընդգրկում սփյուռքահայությանը, թեև Բուտրոս Բուտրոս-Ղալին քաջատեղյակ է հայ ժողովրդի ողբերգությանը: Եվ չի կարելի այդ խնդիրը դիտարկել մարդու, բայց ոչ ժողովուրդների իրավունքների տեսանկյունից, քանզի «մարդու իրավունքների, անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի զարգացումը կապված է ժողովուրդների իրավունքների նկատմամբ հարգանքի զարգացման հետ»:

Միջազգային իրավունքը չի կարող բռնագաղթի ենթարկվածներին և փախստականներին չտարբերակել մնացած տարագիրներից: Այդ տարբերակումն ինքնին անհրաժեշտ է թեկուզ այն պատճառով, որ բռնագաղթն ու փախստականությունն ուղեկցում են ծանրագույն միջազգային ոճրին՝ ցեղասպանությանը, թեև «Ցեղասպանության հանցանքը կանխարգելելու և այդ հանցանքի համար պատճենու մասին կոնվենցիալում» բռնագաղթն ու ցեղասպանությունը ուղղակիորեն չեն հիշատակվում որպես ցեղասպանության գործողություն և կամ էլ նման գործողությունների հետևանք: Բայց դուքսք կարող են ընկենել կոնվենցիալի երկրորդ հոդվածի երրորդ կետի տակ, որտեղ իրեւ ցեղասպանության գործողություն նշվում է: «Որևէ խմբի համար կանխամտածված կերպով կենսական այնպիսի պայմանների ստեղծելը, որոնց նպատակն է այդ խմբի լիովին կամ մասնակի ոչնշացումը»:

Սակայն գլխավորն այն է, որ, ինչպես գրում էր ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիայում՝ Մորգենթաուն, թուրքերի հիմ-

<sup>1</sup> Տես Բուտրոս Բուտրոս-Ղալի, «Օրակարգ խաղաղության համար», Երևան, 1993թ., էջ 6:

«Կурс международного права. Том 2. Москва, 1980г., стр. 150.»

Զախնդիրը ուրիշ ժողովուրդների հայրենիքներին տիրանալի էր, որպեսզի քոչվոր նվաճողն իրեն մեկընդիշտ հանգիստ զգար այդ ժողովուրդների՝ իրենց հայրենիքները վերստանալու պահանջի դեաքրում: «Արդու-Համիդը, - գրում է Մորգենթաուն, - տեսնում էր հայկական խնդրի լուծման միակ ուղին հայերից ազատվելու մեջ: 2 միլիոն մարդկանց ֆիզիկական բնաջնջումը կազմակերպված և ուղղորդված պետորյան կողմից, նա պատկերացնում էր իրուն միակ հուսալի դրույթ կանխարգելելու թուրքական կայսրության անկումը»: Ինչ հետո կարելի է ոչնչացնել բոլոր հովաներին, ասրիմերին և մյուս քրիստոնյաներին, «նրանց տներում բնակեցնել մահմենական ընտանիքներ և այն ժամանակ վստահ լինել, որ այդ հողերը կմնան թուրքական»<sup>1</sup>:

Բնական է, բոլորին ոչնչացնել անկարելի է, և ողջ մնացածները տարագրվում են, դառնում հայրենազուրկ: Բայց նրանց և նրանց սերունդների համար հայրենիք Վերադարձալու զարաֆարը դառնում է համազգային մտածելակերպի առանցքը:

Մի առիթով ԱՄՆ-ի Զախնդին նախագահ Ռոնալդ Ռեյգանը նկատել է, որ ամերիկան ազգը եկվորների (իմփրանտների) ազգ է, նկատի ունենալով Խոյանիայից, Ծովալանդիայից, Սկանդինավյան Երկրներից, Գերմանիայից, Լիտավիայից, Հունաստանից և Եվրոպայի այլ երկրներից, Լատինական Ամերիկայից և Ասիայից ներգաղթածներին, որոնք ԱՄՆ են եկել երջանկություն, առնվազն տանելի կյանք գտնելու ակնկալությամբ, և քաղաքական վտարանդիմերին, որոնք Ամերիկայի հեռավոր ափերն են հասել իրենց Երկրներում հաստատված վարչակարգերի հետ անհամաձայնության և հետապնդումների հետևանքով: 1982 թ. հունիսի 8-ին անօլիխական պայումաննութուն Ռեյգանը խոսեց միլիոնավոր փալստականների վախին, որոնք փախչում էին կոմունիստական աշխարհից:<sup>2</sup> Բայց Ռեյգանը, որը 2 ժամանակամիջոց եղել է Կայիփոռնիայի նահանգապետ և քարտելյակ է Հայ Դատին (նա նույնիսկ ելույթ է ունեցել Մեծ Եղեռնի գոհների հուշարձանի մոտ Մոնթելույուն), լավ գիտե, որ ներկայում ԱՄՆ-ում ապրող հայերի հիմնական զանգվածը չի պատկանում իմփրանտների ոչ մեկ և ոչ էլ մյուս խմբից: ԱՄՆ-ի հայ գաղուրը հիմնականում կազմում են օսմանյան կայսրությունից բռնագաղթվածները և նրանց սերունդները (արդեն՝ երրորդ սերունդը), որոնք

պատկանում են տարագիրների այն տեսակին, որը պետք է տարբերակվի բոլորից, քանզի նրա համար հայրենիք Վերադարձնալու զարաֆարն ունի միանգամայն այլ իմաստ ու նշանակություն: Մեզ թվում է, թե կա ուղղակի կապ ԱՄՆ-ի կառավարողների և բռնագաղթվածների հայրենիք վերադարձնալու իրավունքը մոռացության տալու մեջ: Քրիստոֆեր Ուոքերը մատնանշում է, որ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի 1982 թ. բոլուստենում հայերի ցեղասպանության վերաբերյալ խոսակցությունները համարվում են «հիմնավորված»:

Ժիւտելով ցեղասպանության փաստը՝ ուրանում են այն զարինուելի ծշմարտությունը, որ թուրքական իշխանությունները հայերի ֆիզիկական բնաջնջումը և նրանց արտաքումն իրենց ազգային պատմական բնօրրանից դիտել են իրեն Հայ Դատին մեկնադիշտ վերջ տալու ամենաարմատական միջոցը: Թալապաթ փաշային սպանող Ս. Թեհլերյանին արդարացնելու պատճառներին նվիրված հոդվածում Հայաստան-Ամերիկա ընկերության Զախագահ Ջորջ Մոնթրումերին «Նյու-Յորք Թայմս» թերթի ամսական հանդեսի՝ «Քարընթ Հիսթորի» 1921 թ. հուլիսյան համարում գրում էր, որ փաստաթղթերը մեկնադիշտ հաստատել են, որ թուրքական իշխանությունների նպատակը հայերին տարագրելը չի եղել, այլ բնաջնջելը: Հայերին իրենց բնօրրանից արտաքսելու քաղաքականություն են որդեգրել Ադրեցանի դեկապարները՝ կոմունիստներից մինչև ազգայնականները և ազատամտական ժողովրդավարները: Դեռևս 1990 թ. սկզբին լեին լրագրող Ռիշարդ Կապուսինսկին է, ուսումնական Ղարաբաղ այցից հետո «Մեջ Պոսպոլիտա» պարբերականում տպագրված հարցազրույցում, որը թարգմանաբար արտատպել է «Եվրոպա + Ամերիկա» հանդեսը, նկատել է: «Ադրեցանի իշխանությունները ակտիվ քաղաքականություն են վարում, որն ուղղված է Ղարաբաղի բնակչության կառուցվածքի փոփոխությանը: Զանգվածային չափերով ծավալվում է աղրբեցանական շինարարությունը, Ղարաբաղում վերաբնակեցնում են աղրբեցանցիների ... Իրականացվում է կատարված փաստի քաղաքականություն»:

Պիեռ Վելուիզը նոյնային Ղարաբաղից վերադարձնալուց հետո հաստատեց այդ իրողությունը, շեշտնլով, որ Ադրեցանի կիրառած միջոցառումները կոչված են

<sup>1</sup> Информационно-ежемесячный бюллетень «Объектив». Агентство «София-пресс», № 3, июль 1988, стр. 15.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>3</sup> Tallbott Strobe. «The Russians and Reagan», New-York, 1984, pg. 95.

<sup>1</sup> «The Armenian Genocide, (1915-1922)», Berkeley, California, 1985, pg. 348.

<sup>2</sup> «Европа+Америка», № 1, стр. 37.

Դժբախտաբար թուրքերի դիրքորոշումը պաշտպանություն է գտնում Արևմտաքի որոշակի պետական և գիտական շրջաններում: 1987 թ. նամակների փոխանակությունը Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Ալեք Մանուկյանի և ԱՄՆ-ի պետական քարտուղար Զորջ Շուկի միջև ցոյց տվեց, որ պաշտոնական Ամերիկան մեկնաբանում է ցեղասպանության փաստը, ըստ էության, թուրքական դիրքերից, անդելով, որ տեղի են ունեցել պատերազմների ժամանակ անխոսակելի միջիամայնքային ընդհարումներ, որոնց ժամանակ հավասարապես տուժել են թե հայերը, թե թուրքերը և թե քրդերը: Ինչ վերաբերում է գիտական աշխարհին, ապա պյուտեղ հատկապես բնութագրող է հետևյալ փաստը. ամերիկյան վաթումիճն ակադեմիականներ, որոնք թուրքական, Օսմանյան և Միջին Արևելի պատմության մասնագետներ են, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատին 1985 թ. հյած նամակում գրում են, թե իրենք վերապահումներ ունեն 1915-1923 թթ. պատճածը ցեղասպանություն բառով որպես առթիվ:

Անգլիայում Ք. Ուորերի «Մուկվան կուր աչքով է նայում անարդարությանը» հոդվածի առթիվ («Թայմ», 23 հունվարի 1990 թ.) Քեմբրիջի համալսարանի Միջինարևելյան հետազոտությունների կենտրոնի մասնագետ Մեթին Քութը՝ իր զարմանքը հայտնելով այն առթիվ, որ Ուորերը տեսնում է սերտ կապ դարաբաղյան կոնֆինսի և Հայ հատի միջև, զարմանալի ու անհնեթեթ է համարում, որ Ուորերը փնտրում է տարածքային փոխհատուցում թուրքիայից՝ ցեղասպանության և դրա հետևանքների համար, երբ, ըստ Քութի, ցեղասպանության գործընթացում «ցավալի հորեն հարյուր հազարավոր հայեր են զոհվել, բայց և շատ թուրքեր մեռել են հիվանդություններից և սովից»<sup>1</sup>:

Իրապես թուրքիայի մարդկային կորուստները համեմատաբար մեծ են եղել 1-ին համաշխարհային պատերազմում: Թուրքիան կորցրեց պատերազմում 804 հազար զինվոր և սպա՝ սպանված և մահացած, որը հրա բնակչության ընդհանուր թվի (21.7 միլիոն) 3.7%-ն էր կազմում: Այդ տեսակներից պատերազմում մասնակցած պետությունների թվում նա երրորդն էր, թեև զոհերի բացարձակ քանակութ-

յամբ՝ հինգերորդը: Նա երկրորդ տեղում էր նաև 15-49 տարեկան տարիք ունեցող զոհերի թվով:

Սակայն, նախ, երիտարքերի իրականացրած հայերի ցեղասպանության զոհերի թիվը 2 անգամ ավելի է, իսկ այնուհետև, եթե հայերը որևէ առնչություն ունեն առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի զոհերի հետ, ապա միայն այնպես, ինչպես բացատրեց Քրիստոֆեր Ուորերը 1990 թ. հունիսի 5-ին Եվրապաղամենտում ունեցած ելույթում: Թուրք զինվորները սովամահ եղան 1916-1917 թթ. ձմռանը Անատոլիայում, այն պատճառով, որ թուրքական կառավարությունը աքսորել էր հայերի մեծ մասին և այլևս չկար այն բնակչությունը, որը պետք է հաց աճեցներ բանակը կերակրելու համար: Ավելին, քաղաքացիական բնակչության մեջ գյուղերում մեծ թվով զոհեր եղան ընդհանուր համաճարակի հետևանքով, քանզի հայկական կոտորածների զոհերի դիակները մնացել էին անթաղ: Ուորերը հայտարարեց, որ այս իրողությունը վկայել է Ավստրիայի այն ժամանակվա զինվորական կցորդը թուրքիայում՝ Յոզեֆ Պումիանկովսկին, 1928 թ. հրատարակված հուշագրությունների 165-րդ էջում: Ինչ վերաբերում է 15-49 տարեկան զոհերի թվին, ապա հայերի համար դա բնութագրվում էր պատերազմի սկզբում Արևմտա-Հայաստանի զոհերեւ ողջ հայ արական բնակչության բնաշնչմամբ՝ բանակ զորակոչելու միջոցով:

Ինչպես գրում է Հ.Գ. Խաճիկյանը, «Աեֆերքերի իջի» (զորահավաքի) օրենքով բանակ պետք է կանչեին 20-45 տարեկան տղամարդիկ: Սակայն տանում էին ֆիզիկապես առողջ և արտաքնապես կարող մարդկանց՝ նրանց ստորաբաժանումները խառնելով թուրքական ուզմական միավորներին: Լեհսիհուսը, հենվելով թուրքիայի պատերազմական հախարարի վկայության վրա, ասում է, որ հայերը քաջությամբ կովել են բոլոր ուզմականություն, սակայն հետո զինաթափվել են և օգտագործվել բանակում իբրև բեռնակիրներ և ճանապարհաշինության բանվորներ: Ամիսներ հետո ոչնչացվել են իրենց մահմեղական «ընկերների» կողմից: Զոհերի ընդհանուր թիվը հասակ 300 հազարի:<sup>2</sup> Հայ բնակչությունը զրկվեց իր առավել կենսունակ, աշխատունակ և ուզմունակ մասից: Մնում է ավելացնել, որ դրանով երիտարքերը իրականացրին մանկածնության կանխարգելումը հայերի ազգային խմբում, որը ցեղասպանության

<sup>1</sup> С.М. Урланис. «Войны и народонаселение Европы». Историко-статистические исследования, Москва, 1960, стр. 392-393.

<sup>2</sup>Տես Հ.Գ. Խաճիկյան, «Օսմանյան կայսրության անկումը», Երևան, 1984, էջ 300:

<sup>1</sup> Հայերի ցեղասպանության հարցում ԱՄՆ-ի դիրքորոշման մասին մանրամասն տես՝ «Այս է ճշմարտությունը» հոդվածը, «Սովետական Հայաստան», № 6, 1988թ.:

<sup>2</sup> «Times», January 31, 1990.

Վերաբերյալ 1948թ. հայտնի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 4-րդ կետով՝ ճանաչված է իբրև ցեղասպանության գործողություն, թեև զորակոշված հայերի սպանությունը միաժամանակ ընկնում է նաև հոդվածի 1-ին կետի տակ։ Առաջին համաշխարհային պատերազմում թուրքերի մարդկային կորուստների համար հայերին մեղադրելը նպատակ ունի հայությանը Աերկայացնելը իբրև Թուրքիայի ազգային անվտանգությանը սպառնող տարր, որը Թուրքիայի կառավարությանը իրավունք կտա հրաժարվել ետք ընդունելու բնագաղթված հայերին և նրանց սերունդներին։ 1951թ. կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որը վերաբերում է փախստականներին արտաքսելուն կամ դեպի այն երկրի սահմանը վերադարձնելն արգելելուն, որտեղ նրանց կյանքին վտանգ է սպառնում, հաստատում է, որ այդ արգելքը չի կիրավում փախստականների Ակատմամբ, որոնք հարգելի պատճառներով դիմում են իբրև սպառնալիք երկրի անվտանգությանը։ Հայկանալի է, որ խոսք վերաբերում է այն երկրին, որտեղ փախստականները ապաստան են գտել։ Սակայն, նույն պատրվակով փախստականներին կարող է հրաժարվել ընդունել նաև նրանց նախկին սովորական բնակության երկիրը ինչպես վարչեց Թուրքիայի Աերկայացուցիչ Խամեթ Փաշան 1923թ. Լոզանի խորհրդաժողովում։ Բնագաղթած հայերի զանգվածային վերադարձի դեմ անհանաց դիրք գրավելով՝ նրա գլխավորած պատվիրակությունը հայտարարեց։ «Թուրքական կառավարությունը, ինչպես և յուրաքանչյուր կառավարություն, պահպանում է անկարգություններ սերմանողների, հեղափոխականների, մահափորձ կատարողների և ընդհանրապես, վատագույն տարրերի դեմ անվտանգության միջոցներ ձեռք առնելու իրավունք»։<sup>1</sup> Նոյն խորհրդաժողովի ուղարկությունը համապատասխան հանձնաժողովի 1923թ. հունիսի 4-ի նիստում Խամեթ Խնայուն հայտարարեց, որ «բուրքական կառավարությունը հնարավոր չի համարում իր վրա վերցնել պարտավորություններ, որոնք կահմանափակեն նրա գործողությունների ազատությունը իր տարածքի անվտանգությունն ապահովելու հարցում»։

Խամեթ Խնայուն կատարում էր Քեմալ Աթաթօւրքի կամքը, որն իր առջև խնդիր էր դրել կատարյալ վախճանի

<sup>1</sup> Управление Верховного Комиссара по делам беженцев и текст конвенции 1951г. о статусе беженцев. ООН-1968, стр.25.

Հայաստան միջազգային դիվանագիտության և սպառտական արտաքի քաղաքանակության փաստաթղթերում (1828-1923թ.): Երևան, 1972թ., էջ 758: (Այսուետև՝ Հայաստան... փաստաթղթերում):

Հայաստան... փաստաթղթերում, էջ 760:

հասցնել ցեղասպանությունն ու բռնագաղթը, Թուրքիան դատարկել ոչ թուրքերից։ Նրան շնորհեցին «Ղազի» տիտղոսը, որը նշանակում է. «քրիստոնյաներին կործանող»; Դա մահմետականին մատուցվող ամենամեծ պատիվն էր։ Աթաթօւրքի Եվրոպական կենսագիրները, գրեթե առանց բացառության, չեն մոռանում միշել նրա հայտարարությունը իզմիրի հայկական և հունական թաղամասները հրդեհելու մասին։ Իր նատակայի պատշգամբից դիտելով հրդեհը՝ Աթաթօւրքը, ինչպես հաստատում է Հարոլդ Արմաթրոնը, ասել է. «Դա նշան է այն բանի, որ Թուրքիան թուրքերի համար է»։<sup>2</sup> Աթաթօւրքի մեկ այլ կենսագիր Ուիլֆրեդ Թ.Ֆ. Քայլը գտնում է, որ թուրք ժողովրդի կամքն էր «արտահայտվում առաջնորդի միջոցով, որը միաժամանակ թե՛ բռնակալ էր և թե՛ ժողովրդավար»։ Բայց «ամենաժողովրդավար» թուրքի ժողովրդավարությունը իսպան չբանում է, եթե գործը հասնում է Թուրքիայի քրիստոնյա փորքամանությունների հրավունքների հարցին։

Արդարությունը պահանջում է, որ բռնագաղթածները փոխհատուցում ստանան իրենց կրած տառապանքների, նյութական և բարոյական կորուստների դիմաց։ Առաջին հերթին նրանց պետք է վերադարձնեն նրանցից նկած հողը և ունեցվածքը։ Սակայն ժամանակակից միջազգային իրավունքն այդ տեսակետից շատ է թերի։ Մինչև իսկ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կպնդարգել և դյա համար պատժելու մասին կոնվենցիայի»<sup>3</sup> 19 հոդվածներից և ոչ մեկում ոչինչ չի ասված փոխհատուցման իրավունքի վերաբերյալ, թեև ցեղասպանությունը գրեթե միշտ ուղեկցվել է զանգվածային սպառնություններով, թալանով, ունեցվածքի բռնագրավումով և աքսորով։ Այս փաստը չի կարող տարակուսանը չհարուցել, քանզի ֆաշիզմի հրեշավոր հանցագործությունների թարմ տպավորությունների դերը ընդունված այդ կոնվենցիան, հանցագործություններ, որոնք «հասցեցին բնակչության ամբողջ իմբերի զանգվածային ոչնչացման բացառապես իրենց ուսապական, ազգային, եթնիկական կամ կրոնական պատկանելիության պատճուվ»...» կարելի է բնութագրել իբրև հետպատերազմյան

<sup>1</sup> H.C.Aitkenhead. «Grey Wolf», London, 1937, pg. 158.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 174:

<sup>3</sup> Wilfred T.F.Castle. «Great Turk», London, 1942, pg. 118.

<sup>4</sup> Տե՛ս «Պայմանագիր ցեղասպանության հանցանքը կանխելու և այդ հանցանքի համար պատժելու մասին», «Ասպարեզ», 21 ապրիլի 1990թ.։

ՕՕՆ և ակտուալնե մեջդուարդնե պրоблемы. (Կ 20-լետию ՕՕՆ). Մոսկվա, 1965, стр.308.

շրջանում կնճված սոցիալական քնազավառի ամենաանվերապահ կոնվենցիաներից մեկը: Մասնավորապես անտեսված է ցեղասպանության հետևանքով բռնագաղթի ենթարկվածների ու փախստականների և նրանց սերունդների հայրենիք վերադառնալու իրավունքը: Ընդ որում, փոխհատուցման, հատկապես, հայրենիք վերադառնալու իրավունքը, պետք է ճանաչվի անկախ վաղեմությունից, քանի որ միջազգային հանցագործությունը պատճեի է անկախ վաղեմությունից: 1968թ. նոյեմբերի 26-ին «Մազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի անկիրառելիության մասին կոնվենցիան» իր 1-ին իսկ հոդվածում մարդկության դեմ հանցագործություններ է որակում, անկախ կատարման ժամանակից, «զինված հարձակման կամ օկուպացիայի հետևանքով արտաքումը և անմարդկային գործողությունները, որոնք հանդիսանում են ապարտեդի քաղաքանության հանցագործությունը, որը բնութագրվում է Ցեղասպանության հանցագործությունը, որը բնութագրվում է Ցեղասպանության հանցաները կանխելու և այդ հանցանքի համար պատճելու մասին 1948 թ. կոնվենցիայում, եթե նույնիսկ այդ գործողությունները չեն խախտում այն երկու ներքին օրենսդրությունը, որտեղ կատարվել են»:

Բայց ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի երրորդ հոդվածում թվարկված են սուկ պատճե ենթակա հետևյալ արարքները. «ա/ գենոցիդը», բ/ գենոցիդ կատարելու նպատակով դաշտադրությունը, զ/ ուղղակի և հրապարակորեն գրգռնը գենոցիդ կատարելու համար, դ/ գենոցիդ կատարելու փորձը, «ե/ գենոցիդին հանցակից լինելը»: Սակայն ոչ մի խոսք ցեղասպանության հետևանքների դիմաց փոխհատուցելու մասին: Ավելին, մինչև իսկ 1987 թ. հունիսի 18-ին, Ստրաբորգում, Եվրապաղամենության ժամանակական բանաձեռ (10. Հայկական հարց, փաստաթուղթ №: A2-33/87, բանաձև Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ) երկրորդ կետում հավաստելով, «թե 1915-1917 թթ. տեղի ունեցած ողբերգական դրվագները Օսմանյան կայսրության տարածքի վրա ապրող հայերի կապակցությամբ հանդիսանում է ցեղասպանություն՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին Մ'ԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած համաձայնության (Կոնվենցիայի - Հ.Հ.) հիման վրա (ցեղասպանության ոճիրի կանխարգելման և պատժման»), ըն-

դրունում է սակայն, թե այսօրվա Թուրքիան չի կարող պատասխանատու նկատվել Օսմանյան կայսրության հայերի ողբերգության և շեշտում է, թե պատմական դեպքը որպես ցեղասպանություն ճանաչելը ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական և ո՛չ էլ ճյութական պահանջներ է առաջադրում Թուրքիային:

Այսպիսով, ուղղակի մերժվում է փոխհատուցումը: Ավելին, «այսօրվա Թուրքիան» ձերբագատվում է պատասխանատվությունից: Նրանից միայն պահանջվում է ճանաչել ցեղասպանության փաստը և քաղաքական երկխոսություն սկսել հայերի հետ (3-րդ կետ), հաջորդ կետում շեշտելով, որ մերժումը «երիտրութերի» օրոք հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանության, Հունաստանի հետ ունեցած իր տարակարծությունների մեջ միջազգային օրենքի կիրարկումի նկատմամբ իր միջամտությունը, Կիպրոսում գրավման ուժերի գոյության դրժումը, ինչպես նաև իրավ պաղամենուական դեմոկրատիայի, անհատական և հավաքական ազատությունների – մանավանդ կրոնական պատության – պակասը այդ երկրում անշրջանելի արգելքներ են հանդիսանում Թուրքիան՝ Հասարակապետության (Եվրոպական տնտեսական միավորման - Հ.Հ.) մեջ ընդունելու կարելիության համար:» Բանաձևը Թուրքիային կոչ է անում արդարամիտ վարվել իր տարածքում ապրող «հայ փոքրամասնության հետ, ինչ վերաբերում է նրանց ինքնությանը, լեզվին, կրոնին, մշակույթին ու դպրոցական դրությանը և շեշտակիորեն խնդրում է գուրգուրալ Թուրքիայի մեջ գտնվող հայկական կրոնայկան ճարտարապետական ժառանգության վրա» և այլն: Թուրքիային կոչ է արվում նաև հարգել ոչ մահմեդական փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ հոդվածները, համաձայն 1923 թ. Լոզանի պայմանագրի 37-րդ և 45-րդ հոդվածների, այսինքն՝ այն պայմանագրի, որը փորձեց մեկընդմիշտ փակել Հայ Դատը և ի վերջո մերժեց հայերի հայրենիք վերադառնալու իրավունքը, մինչև իսկ Թուրքիայում «հայկական օջախ» ունենալու ձևով:

Բանաձևից կարելի է ստանալ այն տպակորությունը, թե այն ընդունողների պատկերացմամբ ցեղասպանության ժամանակ հայերի բռնագաղթ չի եղել և հայերն այսօր եւ ապրում են Թուրքիայում իրեն ազգային փոքրամասնություն և խնդիրը սուկ նրանց մարդկային երաշխավորված ի-

<sup>1</sup> Международная защита прав и свобод человека. стр.635.

<sup>2</sup> «Ասպարեզ», 21 ապրիլի 1990թ.:

<sup>1</sup> «Պայքար» շաբաթաթերթ, 18 հունիսի 1987:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

րավունքների ապահովումն է: Ծառ բարձր գնահատելով Եվրապաղամենտի Հայկական բանաձևը՝ այնուհանդերձ, չենք կարող չնշել, որ մեզ պետք է ցեղասպանության փաս-չենք այնպիսի ճանաչում, որը նաև ճանաչում է դրա հե-տևանքների դիմաց փոխհատուցում՝ վերապրածներին և նրանց սերունագներին, ամենից առաջ գոնե նրանց՝ իրենց հայրենիքը վերադառնալու իրավունքը: Ինչ վերաբերում է հայրենիքը հայրապետության կանչարգելման վերաբերյալ կոնվեն-ցիային, ապա տեղահանկած ժողովորդին փոխհատուցում տալու հարցում նրա լուսաբառը, թերևս, կարելի է բացատ-րել այն հանգամանքով, որ փաստաթղթի նախագիծը կազ-մել էր լեհական հրեա, իրավագիտության ամերիկյան պրո-ֆեսոր Ռաֆայել Լեմկինը, որն առաջինն է շրջանառության մեջ դրել «Գենոցիդ» համացուրցունը 30-ական թթ. Կեսերին: Այդ պատճառով կոնվենցիայի վրա դրոշմվել է հրեական կնիքը: Բնականաբար, 6 միլիոն հրեաների ոչնչացումը հիտլերյան Գերմանիայում ու նրա բռնազավթած երկրնե-րում, ինչպես նաև հիտլերականների ցեղասպան գործո-ղությունները սլավոնների, գնչուների և այլ ժողովորդների նայե-նկատմամբ կապված չեն տարածքային հարցերի և հայրե-նադարձության հետ, ինչպես հայերի պարագայում: Իսկ կոնվենցիան ընդունվեց երկրորդ համաշխարհային պատե-րազմից հետո՝ Նյուրնբերգի դատավարության տպավո-րության ներքո: Այն ժամանակ հիտլերականների կողմից տարագրվածները արդեն վերադարձել էին իրենց նախկին բնակության վայրերը: Ինչ վերաբերում է Հյութական փոխ-հատուցմանը, ապա Գերմանական Ֆեդերատիվ Հանրա-պետությունն ընդունեց հրեաների ցեղասպանության փաս-տը՝ զղչումով ու ափսոսանքով և վճարեց հրեաներին դրա դիմաց:

Վերադառնալով հայերի ցեղասպանության հարցին՝ ցանկանում ենք ընդգծել, որ թուրքական մենթալիտետը ոչ մի կերպ հակված չէ այն ճանաչելու, իսկ առանձին «ազա-տամիտ» և «արդարամիտ» թուրք մտածողները, եթե, մինչև կերպահումներով, ընդունում են հայերի ցեղասպա-նության փաստը, ապա միայն առանց տարածքային և նյու-թական փոխհատուցման պայմանի, պահպանելով քար-լություն հայերի Արևմտյան Հայաստան վերադառնալու խնդրի առթիվ: Այսպես, ամերիկացի Ռոբերտ Քալինը, Վիրշինիայի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր, ազգությամբ թուրք (Կիպրոսց) Վամիկ Վոլկանի ազգա-միջյան ատելությունը հոգեբանական թերապիայի միջոցով բուժելու տեսությանը նվիրված հողվածում գրում է, որ թուրք հոգեբանը հակառակում է Զիգմոնդ Ֆրեյդի տեսա-թուրք հոգեբանը հակառակում է Զիգմոնդ Ֆրեյդի տեսա-կետին, որը վերջինս արտահայտել է Ալբերտ Էյնշտեյնից

1932 թ. ստացած նամակի պատասխանում: Նկատի ունե-նալով ատոմային զենքի ստեղծման իրական հետանկարը՝ մեծ ֆիզիկոսը և մարդասերը հարցրել է Ֆրեյդին՝ հնարա-վո՞ր է մարդու հոգեբանական զգացումը կառավարել այն-պես, որ վերանա ատելության և կործանելու պահիսողը: Եվ Ֆրեյդը պատասխանել է «ամենին», քանզի նրա կարծի-քով մարդը սպանում է ներքին ազրեսիկ բնագործ, որը եր-բեք չի անհետանում: Մարդկային բնության մկատմամբ իր հողետեսական տեսակետի պատճառով, գրում է Ռ. Քալի-նը, Ֆրեյդը բացառում էր անհատների նկատմամբ կիրառ-վող հոգեբանական թերապիայի փոխադրումը միջազգային և էթնիկական հարաբերությունների բնագավառը և գրում էր Էյնշտեյնին, որ խաղաղության պահպանումը, պատե-րազմների և էթնիկական բռնությունների կանխումը քաղա-քագետների, դիվանագետների և Ազգերի լիգայի գործն է:

Ահա, հակադրվելով այս տեսակետին՝ Վամիկ Վոլկա-նը գտնում է, որ ողբերգություն ապրած ազգերը, ինչպես և անհատները կարող են ձերբազատվել էթնիկական ատե-լությունից, եթե ավարտեն սգո գործընթացը: Իսկ դա պա-հանջում է, որ հարևանները, մասնավորապես նա, ով վճաս է պատճառել մյուսին, իմանան, թե ինչ է տեղի ունեցել և զղան դրա համար: Զղյան վկայությունը, նրա կարծիքով, կարող է լինել հուշարձանների կառուցումը, որոնք ծառա-յում են իրեն ազգային վշտի անյունասափոր, ինչպես Վիետնամական պատերազմի հուշարձանը Վաշինգտոնում: Եվ Վոլկանը գտնում է, որ հայերը, օրինակ, երբեք չեն կարողացել ավարտել իրենց սուզը այն բանի առիթով, որը իրենք համարում են 1915 թ. ցեղասպանություն, որովհետև թուրքիան երբեք չի ընդունել, թե ցեղասպանությունը տեղի է ունեցել: Դա էլ, ըստ Վոլկանի, սնում է հայերի «դաժա-նությունը», աղբենացանցիների հետ նրանց ներկա կոնֆիլի-տում, որոնք էթնիկապես թուրքեր են: Մեկ այլ թուրք հենի-նակ Ալիհան Յալշընը իր «Թուրք-հայկական հարցը էլուրուն փաստաթյուրի լուսական տակ» գրքում (լուսական տեսա-թուրքը 1975 թ.) գտնում է, որ թուրք ժողովորդի պատասխա-նատվյությունը հայ ժողովորդի ողբերգության առջև քարոյա-կան է:

Եվ այսպես, հայ-թուրք խնդիրը կարելի է փակել հո-շարձան կառուցելով կամ բարոյական պատասխա-նատվյությամբ, և ոչ մի խոսք հայերի պատասխան հայրենի-նասին (պաշտոնական օգտագործման համար). Օրևան, 1977, էջ 20:

<sup>1</sup> «The Atlantic», August 1993, pg. 32.

<sup>22</sup> Ժամանակակից թուրք հետինական հայերի և Հայկական հարցի մասին (պաշտոնական օգտագործման համար). Օրևան, 1977, էջ 20:

թի, այնտեղից բռնությամբ վստարված լինելու և այնտեղ Վերադարձական հրավորական մասին:

Ոչ միայն ցեղասպանության, այլև զավթողական պատերազմից տուժած ժողովուրդների փոխհատուցում տալու խնդիրը հույժ կարևոր է և արդիական, քանզի կան ոչ վաղ անցյալում իրենց հայրենի օջախները և ունեցվածքը ստիպողաբար՝ մահվան սպառնալիքի ներք լրած մարդկային զանգվածներ, որոնք սպասում են իրենց հարցի արդարացի լուծմանը։ Օրինակ, 200 հազար կիառոսից հույներ դարձել են փախստականներ իրենց սեփական երկրում 1974 թ. օգոստոսից ի վեր, եթե թուրքիան ներխուժեց Կիպրոս և բռնազավթեց կղզու տարածքի 40%-ը, ընդ որում կղզու այն մասը, որը տալիս էր եկամտի ավելի քան երկու երրորդը։ Բնականաբար, փոխհատուցում նշանակում է, որ թուրքական զավթիչները հեռանան կիպրոսից և փախստական հույները հնարավորություն ստանան վերադարձական իրենց օջախները և նորից տիրանան իրենց շարժական ու անշարժ գուլքին։

Հայրենիք վերադարձական գաղափարը շատ ավելի հետությամբ կլուծվեր, եթե բռնազարդի ենթարկած պետությունը ընդուներ իր հանցանքը ու դրա համար պատժելիությունը և կամովին ետ ընդուներ տարագրվածներին։ Խնդիրը դարձալ ոչ հիվանդագին ձևով կարող է լուծվել, եթե բռնազարդի ենթարկած պետության մեջ տեղի ունենան բռնազարդի ենթարկվածների հայրենադարձությանը նպաստող ներքին փոփոխություններ՝ հշխանության գլուխ անցնեն նոր ուժեր կամ հին վարչակարգը փոխվի նորով։ Սակայն բռնազարդի առկայությունն ինքնին հուշում է, որ հայրենիք վերադարձական գաղափարի հրացումը կապված է գրեթե անխուսափելի և երբեմն անհայթահարելի թվացող բարդությունների հետ, պահանջում է պետությունների համատեղ գործողություններ՝ բռնազարդի ենթարկած պետությանը հարկադրելու ետ ընդունել տարագրվածներին ու փախստականներին անվտանգության և փոխհատուցման հրական երաշխիքներով։ Այդ համատեղ գործողությունները կարող են ընկալվել իրեն ճնշամիջոցներ (ունարեալիաներ)։ Ուստի նման հրադրություններում կարևորություն է ստանում պետությունների համագործակցությունը միջազգային հրավորների համապատասխան նորմերի ու սկզբունքների հմարատիկությունը հաստատելու գործում։

Ժամանակակից միջազգային հրավորներ ճանաչում է մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք հմարատիկ (պարտադիր) են պետությունների համար։ Դրանք համընդհանուր ճանաչում են գտնել, կազմում են միջազգային հրավորների միջուկը և վճռող նշանակություն ունեն պետություն-

ների միջև ծագող տարածայնությունները հարթելիս։ Մասնավորապես այդ կարգի սկզբունքների թվին է դասվում մարդու հրավորների և հիմնական ազատությունների հարգման սկզբունքը, որն, ինչպես տեսանք, անմիջականունեն աղերավում է բռնությամբ հայրենազգրկվածների՝ իրենց հայրենի օջախները վերադարձական հրավորների հետ։ Առաջմ չկա որևէ փաստաթուղթ, որը սպասիչ կերպով շարադրեր միջազգային հրավորների գլխավոր կամ հիմնարար սկզբունքները։ Բայց դրանց մի մասը շարադրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և մի շարք այլ փաստաթուղթերում։ 1970 թ.-ի հունվարի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Հոչակագիր միջազգային հրավորների սկզբունքների մասին», որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը՝ համապատասխան ՄԱԿ-ի կանոնադրության։ Այս փաստաթուղթը պարունակում է յոթ սկզբունքներ, այդ թվում այն սկզբունքը, որը պետություններին պարտապուրենում է համագործակցել միմյանց հետ ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան, ժողովուրդների հրավահականարդության և ինքնորոշման, պետությունների կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն ստանձնած պարտապորությունները բարեխնդորեն կատարելու գործում։

Այստեղ մենք թվարկեցինք յոթ խնդիրներից միայն երեքը, որոնք կարող են մեկնաբանվել որպես բռնազարդական ժողովորդի իր հայրենիքը վերադարձական հրավորները հաստատելուն օգնող հիմնադրույթներ։ Այնուամենայնիվ, հոչակագրի մեջ բացակայում է մարդու հրավորները հարգելու հիմնարար սկզբունքը, որի տեսակետից կարելի է անառարկելի հորեն հաստատել բռնազարդի ենթարկվածների հայրենիքը վերադարձական հրավորները, թեև այդ սկզբունքը միջազգային հրավորների գիտակները, որպես կանոն, դիտարկում են շատ ավելի ընդհանուր առումով՝ մարդու հրավորների ապահովման ասպարեզում բռնի հայրենազգրկումն իրոն մարդու հրավորների ամենակոպիտ խախտում դիտելու և հայրենազգրկվածների՝ իրենց հայրենի օջախները վերադարձական հրավորները միջազգային-հրավական իմարտատիկ նորմ ճանաչելու հմաստով։ Մենք տեսանք, որ Հեղսինկի նզրափակիչ ակտը, որտեղ թվարկվող 10 սկզբունքների թվում հիշատակվում է նաև մարդու հրավորները և հիմնական ազատությունները հարգելու մասին, նույնպես չի լրացնում այդ բացը։

<sup>1</sup> Организация Объединенных Наций. Сборник документов. Москва, 1981, стр. 459-469.

Մինչդեռ խնդիրն ավելի քան կարևոր է, քանզի, ինչպես շեշտում են միջազգային իրավունքի յոթհատորյա դասընթացի հեղինակները, կան մի շարք միջազգային-իրավական պայմանագրային և սովորական նորմեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն վերաբերում են բնակչությանը, մասնավորապես. քաղաքացիության, հանցագործներին հաճանելու, մարդու իրավունքների, օտարերկրացիների ուժին հարցում: «Ետություններին պարտավորեցնելով իրենց փոխհարաբերություններում գործելու որոշակի ձևով, միջազգային իրավունքն առաջադրում է պետության պարտավորությունը՝ «Ճնշնարկել այս կամ այն գործողությունները նաև իր ներքին կյանքի ոլորտում, այդ թվում ընդունել իրավական ակտեր. որոնք վերաբերում են իր բնակչության իրավական և փաստական դրությանը»:

Այս միանգամայն ճիշտ եզրահանգման կողքին նույն հեղինակները՝ նախկին ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների խախտումներն իրավաբանորեն արդարացնելու ակնհայտ միտումով, պնդում են, թե իբր բնակչության և մարդու իրավական դրությունն այս կամ այն պետության ներսում որոշվում է քացառապես նրա սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ, սակայն ոչ միջազգային իրավունքով, թե իբր խոսքը վերաբերում է մարդու իրավունքներին, որոնք բխում են պայմանագրերից, իսկ գործնականում այդպիսի պայմանագրերը իրավունք չեն ստեղծում, այլ պայմանավորվում պետությունների վրա սուսկ պարտականություն են դնում այդ իրավունքները կենսագործելու իրենց օրենսդրության միջոցով:<sup>1</sup> Նման սովետությունները, ըստ էության, ժխտելով մարդու իրավունքի նորմերի իմաներատիվ բնույթը, ստեղծում են սովանցքներ այդ բնագավառում իրավախախտումների համար: Անկարելի է համաձայնել վերոհիշյալ դասընթացի հեղինակների մեկնարանության հետ թեկուզ այն պատճառով, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի» 30-րդ հոդվածում աներկրայութեն հաստատվում է, որ «Ըշինչ սույն հոչակագրում չի կարող մեկնարանվել իբրև որևէ պետության, անձանց խմբի կամ առանձին անձանց իրավունքի ընձեռում՝ զրադվելու որևէ գործողությամբ կամ կատարելու գործողություններ, որոնք ուղղված են սույն Հոչակագրում շարադրված իրավունքների և ազտությունների ոչնչացմանը»: Ի դեպ, դասընթացի հեղինակները իրենք քննադատում են այն արևմտյան տեսարաններին, ովքեր ժխտում են միջազգային

<sup>1</sup> Курс международного права. Том 3, Москва, 1990, стр. 62.

<sup>2</sup> Курс международного права. Том 2, Москва, 1990, стр. 158.

<sup>3</sup> Международная защита прав и свобод человека. стр. 20.

իրավունքի նորմատիվ բնույթը և ընդգծում, որ «Աերկայումս միջազգային իրավունքի նորմատիվությունը կնշանակեր ժխտել ակնբախ ճշարտությունը»:

Միջազգային իրավունքի որոշ մասնագետների կարծիքով մարդու իրավունքների հարգման սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալ երեք պահանջներին՝ բոլոր պետությունները պարտավոր են:

ա) հարգել իրենց տարածքում եղած բոլոր անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները,

բ) թույլ չտալ խորականություն սեփի, լեզվի և կրոնի հատկանիշների հիմնական վրա,

գ) նպաստել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համբնիանուր հարգմանը և համագրիծակցել միմյանց հետ այդ նպատակին հասնելու գործում:

Այս պահանջները բնակչություն իրավունքների հետ ողղակի կապ չունեն: Սակայն եթե միջազգային իրավունքը բնակչության դրությունը չի կարգավորվում ուղղակիութեն, ապա կարող է ներազել դրա կարգավորման վրա միջնորդված ձևով: Այդ հիմաստով, մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող միջազգային-իրավական նորմերը ամենահամապատասխանն են բնակչության կամ նրա առանձին հատվածների հարցերը կարգավորելու համար: Հետևաբար, մեր թվարկած պահանջներից երրորդը կարող է մեկնարանվել իբրև պետությունների պարտավորությունը՝ համագրիծակցելու տեղահանությունագրադասների համաձայնագրած զանգվածների իրավունքների վերականգնան առաջանակագրությունը: Խոկ ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից իրենց պարտավորությունները բարեխնդորեն կատարելը պայման է, «որպեսզի նրանց բոլորի համար համատեղ պահովվեն իրավունքները և առավելությունները, որոնք բխում են կազմակերպության անդամների կազմին պատկանուց»:<sup>2</sup>

Հազիք թե հարկ կա ապացուցելու, որ բարեխնդությունը կամավոր ներառվող դրսնորվող և բարյական երևույթ է և, այդ պատճառով բավարար չէ ապահովելու պետությունների պատասխանատվությունը՝ միջազգային-իրավական նորմերի հարգման խնդրում: Բավական է նշել, որ պետությունների միջազգային-իրավական պատասխանատվության զիյակոր հիմքը միջազգային իրավունքի խախտումներն են,

<sup>1</sup> Курс международного права. Том 1, Москва, 1990, стр. 24.

<sup>2</sup> Международное право под редакцией Г.И.Тункина, стр. 126, и Курс международного права, Том 2, Москва, 1990, стр. 159-160.

<sup>3</sup> Конференция ООН в Сан-Франциско (25.04-26.05 1945). Сб. док., Москва, 1980, стр. 586.

որպեսզի պարզ դառնա այդ սկզբունքի արտակարգ կարևորությունը:

Ժամանակակից միջազգային իրավունքը տարբերակում է պետությունների կողմից կատարվող միջազգային իրավախախումների երկու տեսակ՝ միջազգային հանգագործություններ և զանցանքներ: Երկու ռեպրում էլ առաջ է գալիս միջազգային-իրավական պատասխանատվության 2 տեսակ՝ քաղաքական (ոչ նյութական) և նյութական: Հաճախ դրամը հանդես են գալիս միաժամանակ, ինչպես բռնազարդությունից և ապահովագործությունից և ապահովագործությունից:

Միջազգային իրավախախումները հաճախ կատարվում են գործադիր մարմինների կողմից՝ կառավարությունից մինչև իշխանության ստորադաս, տեղական մարմինները. Գլխավորապես նրանց վրա է ընկնում միջազգային հանցագործությունների մեջը, որպիսիք են գաղղրատիրությունը, ապարտեհիք, ցեղասպանությունը և այլն:

Իշխանության ստորադաս մարմինները կարող են մեղակից դառնալ միջազգային ոճի, կատարելով բարձրագույն իշխանության հրամանները, չմոռանալով նաև սեփական նախաձեռնության մասին: Հաճախ դրա համար յայն ասպարեզ են թողնում հենց կենտրոնից եկած հրամանները: Այսպես, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալաաթի՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ին Հայեափի կոուսկալությանը հղած ծածկագիր հրամանում մասնավորապես ասված էր.

«Հայերու համար Թուրքիու հողին մեջ ապրելու, աշխատելու պես իրավունքներ ամբողջովին շնչված են, և այս մասին կառավարությունը, բռվանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նոյնիսկ օրորոցի մանուկները չթողով: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները տեսնված են: Այսպես ըլլալով հանդերձ, մեզի անհայտ պատճառներով. կարգ մը մարդոց մասին բացառիկ գործողություններ կըլլան և այդ մարդիկը ուղղակի տարագրության վայրերը չուղարկելով Հայեա կը թողնվին, որով կառավարությունը երկրորդ դժվարության մը կը մատնվի: Առանց անոնց պատճառարանությունները ընդունելու, կին թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նոյնիսկ շարժվելու անկարող եղողները հանեցեք հոնիկե և տեղի մի՛ տաք, որ զանոնք պաշտպան ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով նյութական շահերը իր հայրենասիրական զգացմունքներն բարձր կը դասէ և չի կրնար կառավարության այս մասին հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել: Որովհետև ուրիշ տեղեր ա-

նուղակի կերպով կատարվող բամաջնչման գործողությունները, – խատություն, արագություն (տարագրության ընթացքին), ճամրու նեղություններ, թշվառություն, – հոդ ուղղակի կերպով կրնան ապահովվիլ, հետևաբար<sup>1</sup>, առանց ժամանակ կորցնելու, ոգի ի բոյն աշխատեցեք...»:

Հրամանի բռվանդակությունից իսկովն պարզվում է, որ մենք գործ ունենք միջազգային հանցագործության հետ, որը միջազգային իրավունքը առանձնացնում է իրեն առավել վտանգավոր իրավախախտում, եթե նոյնիկ չյն կատարվել է ելեւելով երկրի մերքին օրենսդրությունից:

Արթուր Բեյլերյանի ֆրանսիական արխիվներից հավաքած փաստաթղթերի ժողովածուում, որը հրատարակել է Սուրբ Համայստանը, կան ականատեսների բազմաթիվ վկայություններ, որոնք վկայում են, որ հայերի ցեղասպանությանը մասնակցել են թուրք և քուրդ խուժանը, մահմեղական հոգևորականությունը:

Եթե իրավախախտում կատարել են պետության մարմինները կամ պաշտոնական անձինք, ապա պետությունը պատասխանատու է նրանց արարքների համար, և, հետևաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից դրանք դիտվում են իրեն պետության արարքներ և պետություն պատասխանատվության հարցը վիճահարուց լինել չի կարող: Պրոֆեսոր Ա.Ա. Եսայանը իր «Միջազգային իրավունք» հասագքում հաստատում է, որ, ըստ միջազգային իրավունքի գործող սկզբունքի, միջազգային հանցագործության և դելիկտի (իրավախախտման) դեպքում պետությունը պատասխանատու է իր բոլոր օրենսդրական, գործադիր և դատական կենտրոնական ու տեղական մարմինների գործողությունների, միջազգային իրավունքին հակասությունը որենքներ ընդունելու, իր բոլոր գործադիր մարմինների միջազգային անիրավագործ գործողությունների համար:

Ա.Ա. Եսայանն ընդգծում է նաև, որ «Ներքին ազգային օրենսդրության ուժով պետությունը իրավագործ չէ հրաժարվելու իր միջազգային պարտավորություններից, ավելին, եթե առկա է կոլիզիա ներքին օրենքի և միջազգային իրա-

<sup>1</sup> Ա.Ամսովյան, «Մեծ ոճիր», Բուատոն, 1921, էջ 35-36:

<sup>2</sup> Գ.Ի. Տունկին, «Вопросы истории международного права», Москва, 1962, стр. 476-477.

<sup>3</sup> Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives françaises. (1914-1918). Paris, 1983, pg. 129.

<sup>4</sup> Ա.Ա. Եսայան, «Միջազգային իրավունք: Ընդհանուր մաս»: 2-րդ հ., Երևան, 1983, էջ 302:

վունքի միջև, պետք է նախապատվորությունը տրվի միջազգային իրավունքին»:

Այսպիսով, ոչ մի պետություն չի կարող խուսափել միջազգային հանցագործության համար մեղադրանքից և պատասխանատվությունից՝ գրանցելով այն առանձին պետական մարմինների ու գործիչների հաշվին, վկայակոչելով իր ներքին օրենսդրությունը: Մեզ ամենին չի համոզում Գ.Ի. Տունիկինի խմբագրությամբ հրատարակված «Միջազգային իրավունքի» դասագրքի (1982 թ.՝ ոռուերեն, 1986 թ.՝ անգլերեն) այն տեսակենոր, թե միջազգային իրավունքը սույ օժանդակ միջոց է մարդու իրավունքների պաշտպանության համար և «մարդու իրավունքների ապահովումը մնում է և կշարուհակի մնալ հիմնականում պետությունների ներքին գործը»:<sup>1</sup> Նման մոտեցումից հետևում է, որ եթե որևէ կառավարություն կարող է խուսափել միջազգային պատասխանատվությունից սեփական իրավախախտումների համար, ապա առավել ևս կարող է իրեն պատասխանատու չզգալ նախորդ կառավարությունների ու վարչակարգերի արարքների համար: Արդարությունը պահանջում է ընդունել, որ անցյալում իր պետության իշխանությունների կատարած միջազգային հանցագործությունները և իրավախախտումները չճանաչող կառավարությունները ակամայից դառնում են դրանց մեղսակից: Այս տեսակենտիկ միանգամայն իրավացի էր Եվրապատրամենտի պատգամավոր, ֆրանսիացի համայնակար Ռենե Էմիլ Փիրեն, որը հայկական բանաձևի քննարկման ժամանակ Եվրապատրամենտում 1987 թ. ուղղակի նշեց, որ եթե Թուրքիայի կառավարությունը «պատասխանատու չէ 1915 թ. ցեղասպանության համար, ապա պատասխանատու է դրա գործությունն ընդունելու կամ մերժելու խնդրի համար»:

Մեզ արդեն ծանոթ ժամանակական պատասխանատվության մասին համար մեջնարդության մեջ առաջանաւում է, թե որն է հայերի ցեղասպանության հարցում թուրք ժողովրդի պատասխանատվությունը և անհատ ներքին, մասնավորապես, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագուխնների պատասխանատվությունը, որոնք «ազգային կիրքը» հասցրին մինչև «Վերջնական լուծումը»՝ «միաժամանակ և նոյնական, և միամիտ հավատով, թե դա թույլ կտա ստեղծելու մաքրագործված, իրեն թույացնող «օտար մարմինների» մահվամբ ազատագրված ժողո-

<sup>1</sup> Ա.Ա. Եսայան, Աշվ. աշխ., էջ 302-303:

<sup>2</sup> «Международное право», под ред. Г. И. Тункина, стр. 347.

<sup>3</sup> «Ազգային մշակույթ», Բեյրութ, 20 սեպտեմբերի 1987:

վորդ»: Այնուինեւ Դյուրողելը շարունակում է. «Ես ասում եմ միամիտ, քանզի երբեք չի տեսնվել կատարելապես իրագործված ցեղասպանություն, քանզի փաստ է, որ կան ԽՍՀՄ-ի հայերը, Սփյուռքի հայերը, կամ սերունդների չմարդու ատելությունը, որը կարող է տասնամյակներ, նույնիսկ դարեր հետո նետվել կատարի ուսանշի մեջ»:

Միջազգային իրավունքը պետությանը չի ազատում պատասխանատվությունից, եթե միջազգային հանցագործության համար մեղադրանքները պաշտոնատար անձինք են, որոնցից կազմված են պետության մարմինները: «Պետությունն իր առանձնահատկությունների պատճառով կարող է գործողություններ կատարել կամ ցուցաբերել անգործունեություն հենց պաշտոնատար կամ իշխանությամբ օժտված անհատների միջոցով: Ըստ որում, միջազգային-իրավական պատասխանատվության հարցը ծագելիս, ոչ մի էական նշանակություն չունի իրավախախտումը կատարած մարմնի տեղը տվյալ պետության համակարգում: Պատասխանատվության հիմքը հիմքը միջազգային իրավունքի գերակայությունն է պետությունների ներքին օրենսդրության նկատմամբ: Եվ դա միանգամայն որոշակիորեն հաստատված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ, որը ժամանակակից միջազգային իրավունքի առավել կարևոր աղբյուրներից է:

Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության, որը ամփոփում է միջազգային իրավունքի հիմնարար նորմեր ու սկզբունքներ, «ՄԱԿ-ի յուրաքանչյուր անդամ-պետություն պարտավոր է իր հարաբերություններում ուրիշ պետությունների հետ (ինչպես կազմակերպության անդամ, այնպես էլ ոչ անդամ) պահպանել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ մարմնավորված սկզբունքները և նոյն բանը պահանջել իր կոնտրագենաներից: Դրան հարկ է ավելացնել, որ կանոնադրությունն ուղղակի նախատեսում է պետությունների կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունների առաջնորդությունը նրանց բոլոր այլ պարտավորությունների հանդեպ»:

«Պետությունների կանոնադրությամբ», ինչպիսին է ՄԱԿ-ի կանոնադրությունը, (և ոչ թե առանձին պետությունների «կանոնադրություններով») նախատեսված պարտավորությունների առաջնորդությունից էլ բխում է պետությունների պատասխանատվությունը իրենց գործողությունների կամ անգործունեության համար:

<sup>1</sup> Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives francaises. (1914-1918), pg. VII-VIII (preface).

<sup>2</sup> ООН и актуальные международные проблемы, стр. 15.

Տալով միջազգային-իրավական պատասխանատվության ընդհանուր բնութագիրը՝ «Միջազգային իրավունքի դասընթաց» յորհատորյակի հեղինակները գրում են. «Պատասխանատվության պրոբլեմը միջազգային իրավունքում անմիջականորեն կապված է միջազգային իրավունքի գործառնության հետ, միջազգային խաղաղության և իրավական կարգուկանոնի ամրապնդման հետ»։ Միջազգային-իրավական պատասխանատվությունը անհրաժեշտ միջոց է ապահովելու միջազգային իրավունքի նորմերի պահպանում և վերայանձնելու խախտված միջազգային հարաբերությունները<sup>1</sup>.

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը գրադում է միջազգային իրավունքի օրենքների համակարգման (կողմիկիկացիա) գործով, և նեռն 1956թ. սկսել է պետությունների պատասխանատվության նորմերի համակարգման աշխատանքները, իր համապատասխան նախազերում անդրադառնում է միջազգային իրավունքի նորմերի իմակարգատիկ բնույթի հարցին, հատկապես, եթե դա վերաբերում է միջազգային խաղաղության ու անվտանգությանը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, անձի պաշտպանությանը։ Հատկապես վտանգավոր միջազգային-հակարգական արարքներ են ճանաչված ազրեսիան, գաղութատիրությունը, ցեղասպանությունը, ապարտեհոր, որոնց համար պահանջվում է պատասխանատվության խստագույն դեմք։ Իսկ միջազգային-իրավական պատասխանատվությունը նշանակում է պատժամիջոցների կիրառում միջազգային իրավականության համար։ Ըստ որում, պատժամիջոցները ընդգրկում են ինչպես փոխառատուցման, այնպես էլ պատժի տարրեր։ «Պետությունների պրակտիկայի, բազմակողմ կոնվենցիաների, Միջազգային իրավունքի հանձնաժողովի փաստաթղթերի, ինչպես նաև դոկտորինայի հետևությունների վերլուծությունը վկայում է, որ ազրեսիան, ուժով գաղութային տիրապետության պահպանումը, ինչպես նաև ցեղասպանությունը, ապարտեհոր և պետությունների մի քանի այլ հատկապես վտանգավոր և ծանր արարքները բերում են պատվասխանատվության, հատկապես՝ խիստ ուժիմի կիրառման։

Իրավաբանական պատասխանատվությունը միջազգային հանցագործության կամ իրավականության համար կարող է արտահայտվել տուժած կողմի իրավունքների վերականգման, փոխառատուցման կամ իրավագանցին պատ-

<sup>1</sup> Курс международного права. Том 3, стр. 189.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 190։

<sup>3</sup> Курс международного права. Том 3, стр. 195.

ժերու ձևով։ Միջազգային-իրավական պատասխանատվության մինչև իսկ պատժի գործառնությունը չի հակասում պետությունների ինքնիշխանության (սուվերենիտետի) հարցման սկզբունքին։ Երկար ժամանակ միջազգային-իրավական պատասխանատվության հարցը քննարկվել է սույն պետությունների հարաբերություններում տեղի ունեցած իրավականությունների կապակցությամբ։

Մինչդեռ դրանք կարող են և հաճախ տեղի են ունենում պետականություն չունեցող ժողովուրդների նկատմամբ և պետության ներսում։ Օրինակ, պատմությունն անհերքելիորեն ապացուցել է, որ ցեղասպանությունը և ապարտեհոր հաճախ դրսուրկությունը ներառյալ ափառությունը առաջարկություն է միջազգային իրավունքի համար։ Միջազգային իրավունքը զարգացմանը համբաւագի միջազգային-իրավական պատասխանատվության հնատիտուտը սկսեցին տարածել ոչ միայն ինքնիշխան պետությունների, այլև միջազգային իրավունքի մյուս սույնեկտների վրա։ Ընդ որում, ինչպես նշված է Միջազգային իրավունքի հանձնաժողովի մշակած պատասխանատվության մասին հոդվածների նպագծի 4-րդ հոդվածում։ «Պետության արարքը կարող է որակվել իբրև միջազգային - հակարգավական սույն միջազգային իրավունքի հիման վրա։ Այդպիսի որոշման վրա չի կարող ազդել և ճանաչվել օրինաչափ այլ նույն արարքի որակումը ըստ ներառյալ իրավունքի»։ Այսուետե, ինչպես և քրեական իրավունքում, գոյություն ունի հանցակազմ, որի տակ հասկացվում է որոշակի իրավականության հանցանշանների ամբողջությունը։

Իբրև հանցակազմի բացակայության հիմք չի կարող ընդունվել այն իրողությունը, որ պետությունը տվյալ դեպքում կաշկանդված չի եղել միջազգային պարտավորությամբ, որը թելադրում էր գործել այլ կերպ, եթե խոսքը վերաբերում է միջազգային հանցագործություններին։ «Պարտավորությունները, որոնց խախտումը կազմում են միջազգային հանցագործությունները, ունեն իմպերատիկ բնույթ և բխում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից»։ Այնուետե, պարզաբանելով այս արտակարգ կարող դրույթը, «Միջազգային իրավունքի դասընթացի» հեղինակները միանգամայն որոշակիորեն շեշտում են։ «Միջազգային իմպերատիկ պարտավորությունների դեմ ծանր ունագությունների դեպքում հազիկ թե կարող են գոյություն

<sup>1</sup> Курс международного права. Том 3, стр. 205.

<sup>2</sup> Նույն տեղում։

ունենալ այդպիսի ոտնձգությունների համար պատասխանատվությունը բացառող ինչ-ինչ հանգամանքներ:

Մասնավորապես, այդպիսի իրավունքների խախտման հետևանքով միջազգային հանցագործությունները կանխամտածված արարութեան են, որոնք բացառում են մեղքի բացակայությունը վկայող հանգամանքների (դիպած, անհաղթահարելի ուժ, աղետ) վկայակոչումը: Միջազգային հանցագործություններ կատարելու դեպքում պետության պատասխանատվությունը բացառելու հանգամանքների բացակայությունը հաստատվում է ինչպես միջազգային պրակտիկայի դրույներով, այնպես էլ դոկտրինայական հետևություններով»:

Այստեղից հետևում է, որ միջազգային հանցագործություն, օրինակ՝ ցեղասպանություն կատարած պետության նկատմամբ միջազգային պատժամիջոցների կիրառումը պարտադիր է (առանց զինված ճնշամիջոցների և իրավունքի ոլորտի սահմաններում) և չի կարելի խուսափել դրանից, վկայակոչելով ինքնապաշտպանությունը, անհաղթահարելի ու չնախատեսված դեպքը, աղետը, անհրաժեշտության վհճակը, այսինքն այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում միջազգային իրավունքը ճանաչում է իրավախախտման հանցակազմի բացակայությունը:

Ցեղասպանության և դրա հետևանքների դեպքում միանգամայն անբավարար է հանցագործ պետության բարոյա-քաղաքական պատասխանատվությունը, ինչպես նաև ոչ նյութական պատասխանատվությունը: Այստեղ ընդունելի է միջազգային իրավունքի այն մասնագետների կարծիքը, ովքեր տպիս են լայն մեկնաբանություն իրավախախտ պետության դեմ միջազգային պատժամիջոցների կիրառմանը՝ ներառելով նախկին իրավիճակի վերականգնումը (status quo ante), այսինքն՝ ուստորացիան և ուստիտուցիան, ինչպես նաև պատասխանատվության այլ ձևեր՝ սատիսֆակցիան (բավարարությունը) և հատկապես՝ ուսպարցիան (փոխհատուցումը):

Որպեսզի իրավախախտին ստիպեն իրապես կրել պատասխանատվությունը, միջազգային իրավունքը թույլատրում է կիրառել նրա նկատմամբ հարկադրական միջոցներ՝ ուստորահաներ (օրինաչափ հարկադրական միջոցներ՝ առանց զինված ուժի գործադրման և հասցված վնասի ոչ համանման, բայց համամասնային հատուցում), ճնշամիջոցներ (դարձյալ առանց զինված ուժի կիրառման), դիվանագիտական հարաբերությունների խզում, միջազգային կազմակերպություններում արտոնություններից և անդամության իրա-

վունքից գրկում, տնտեսական պատժամիջոցներ (առևտրական էմբարգո) և այլն: Ավելին, «Միջազգային հանցագործություն կատարած պետության պատասխանատվության հատուկ ձև կարող է հանդիսանալ նրա տարածքի մի մասի հանձնումը տուժած սուբյեկտներին՝ նրանց անվտանգության երաշխավորման նպատակով... Դա կարող է ծառայել իրեն վնասի փոխհատուցում, որը չի կարող փոխհատուցվել ուրիշ եղանակներով»:

Ցեղասպանության և դրա հետևանքով կատարված բռնազարդի դեպքում դա կլինի փոխհատուցման ամենաեական և լավագույն միջոցը, որը տարագրվածներին բույլ կտա իրականացնելու հայրենիք վերադառնալու գաղափարը:

<sup>1</sup> Курс международного права. Том 3, стр 225-226:

<sup>1</sup> Курс международного права. Том 3, стр. 241.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Յուրի Հովսեփյան – Հայերի ցեղասպանությունը Ադրբեյջանում (1918 - 1990 թթ.) ..... 5**

**Սամվել Կարապետյան – Հայկական հուշարձանների ներենը Ադրբեյջանում..... 30**

**Հովհակ Գրիգորյան – Ահաբեկչությունը որպես ազգային - ազատագրական պայքարի ձև (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)..... 39**

**Հակոբ Վ. Հակոբյան – Սփյուռքահայության հայրենիք վերադառնալու գաղափարի միջազգային - իրավական մարմնավորումը..... 73**

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏԺԱՌՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ

### Մաս 2

**Հրատարակչության  
խմբագիր՝ Լ. Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**Տեխնիկական  
խմբագիր՝ Հ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Վերստուգող  
սրբագրիչ՝ Ս. Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Աստորագրված է տպագրությամ 1995թ.:

Զափաք՝ 84x108 1/32: Թուղթ տպ. №1 : Տպագրության  
եղանակը՝ օֆսեթ : Հրատարակչական 5,1 մամուց:  
Տպագրական 3,125 մամուլ-5,25 պայմանական մամուցի:  
Տպագրահակ՝ 500 : Պատվեր՝ 120

Երևանի համալսարանի հրատարակչություն,  
Երևան, Ալ. Մանուկյան փ., 1

Ծարվածքը «Սիեստա» Լ.Պ.:

Երևանի համալսարանի «Ռոտապրինտ» արտադրամաս,  
Երևան, Ալ. Մանուկյան փ., 1

ԵՊՀ Գրադարան



SU0214393